

Ա. ԽՄԵԼՆԻՑԿԻ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԱՏԱՐԸ



891.715
Խ-62

«ԲՈԼԵՎԵԿԻԿ»
1937

30 MAY 20

891.715

Խ-62 Ա. ԽՄԵԼՆԻՑԿԻՅ

ԱՅ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՓՈՍՏԱՏԱՐ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ՊՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼԾԵՎԻԿ»
ՊՈՍՏՈՎ-ԴՐԱՆ—1937

Այս գիրքը կազմելիս նեղինակն ոգտագործել է
հին բուժեվիկների մի շարք հրատարակված հիւս-
դուրութեաները:

Գրքի 19 յեւ 21 եջերում մեջ բերված Վ. Ի. Լենինի ցիտատները վերցված են «Ե՞օչ անել» հոդվածից (Լենին, Յերկեր, հատ. IV, ռուս. հրա., 1931 թ., էջ 458 յև 463):



Редактор *П. Чатыньян*. Тех. редактор *Л. Жданович*. Корректор *С. Акопян*

Сдано в набор 22 сентября 1937 г., подписано в печать 7 декабря 1937 г.
Формат 60x92[16]. Объем 6 $\frac{1}{4}$. Тираж 3000.

Уполномочит № С-6903. Типография Обл. армянского издательства „Большевик“, Ростов-Дон, Ворошиловский пр. 27. Заказ № 1749.

Շալաշով Իգնատը տասնեվեց տարեկան եր: Նրա
հայրը Յարոսլավլում կտավեղեն սպիտակացնող գործարանի
հին բանվորներից երև և շատ ժամանակ չե, վոր մեռել եր՝
կապարով թունափորքած: Մայրը զնաց աշխատելու հո-
րուստների մները վորպես սպասուհի, իսկ Իգնատին աշ-
կերտ տվին կտավեղեն սպիտակացնող գործարանը՝ հոր
արհեստը սովորելու:

Ամեն որ, առավոտյան ժամը վեցից մինչև կեսօր ու ցերեկվա յերկուօից մինչև գիշերվա ժամը տասնեւմեկը, Իգնատը փայտե շերեփով խառնում եր տաշտակի մեջ կապարե շպարը: Ցավում եր Իգնատի կորացրած մեջքը քացախի ու կապարի սուր հոտից նրա գլուխը պտույտ եր գալիս: Յեթե աշխատեր առանց մեջքը կորացնելու, շերեփը տաշտակին չեր հասնի: Մինչդեռ անհրաժեշտ եր անդադրում խառնել շպարը... Իգնատը յերբեմն պըպզած եր աշխատում, բայց դրանից ել շուտով սրունդներն եյին սկսում ցավեր: Ու նա տախպած եր լինում նորից վոտքի կանգնել կորաքամակ:

Իգնատին որական ստանում եր տասնեխնը կոպեկ ու կես, հինգ ոտքըի ամսական:

Այս գումարն իգնատը յերբեք չեր ստացել — զոր-
ծարանը հայտնի յեր տուղանքներով:

իդնատի պառկած տախտամածի չլերն այլվեցին,—մի ոռւբլի տուգանք: Արհեստանոցում սալթաքելով շուռ տվեց քացախով պառկը, —հիսուն կոպեկ տուգանք: Գործարանային տեսչին զանգատվեց, վոր հոտած միս են տվել, —մի ոռւբլի տուգանք... Բացի դրանից, «Ճաշի» ու «ընակարանի» համար ել վերցնում եյին ամսական յերեք ու կես ոռւբլի:

«Ճաշը»—այն մի պնակ սպասն եր, վոր տալիս եյին որը յերկու անգամ:

«Բնակարանը»—այն կեղտոտ անկյունն եր, ուր բանվորները պառկում եյին տախտամածին կողք-կողքի, չոր տախտակի վրա: Ողը կացարանում խեղուկ եր և գարշահոտ: Մեծ դիղնագույն լապտերներն աղոտ լույս եյին սփոռում: Պատերին փակցված եյին հայտարարություններ՝ «Միջանցքներում հավաքվելը խստիվ արգելված ե», «Ձայնով լրագիր ու գիրք կարդալը խստիվ արգելված ե»:

Մի որ այսպիսի դեպք պատահեց:

Այդ անգամ, աշխատավարձ ստանալիս, բանվորները տեսան, վոր տուգանքները սովորականից ավելի յեն: Գործարանի բակում, վորն աշխատանքի ժամերին սովորաբար դատարկ եր լինում, կանգնած եյին մի խումբ բանվորներ: Նրանց մեջ եր նաև իդնատը: Վասիլին, վոր բարձրահասակ, այլանդակված մատներով մի բանվոր եր (նա իր կյանքում արդեն յերկու անգամ մեքենայի տակ եր մնացել), մի կապոց թուղթ ձեռքին՝ բարձրածայն կարդում եր ընկերներին.

«Բանվորներ ու բանվորուհիներ: Անուշեց ձեզանից միայն շատ իշերին ե հայտի թե ն կատարվում արանի նոր գործար ու նույն: Այդ զործարանի բանվորները, մի ամս առաջ, խնդիր են իրենց զործաքրոջ՝ պակասուցները յեվ կրնատել բանվորան օրվա տվողությունը: Գործատերը մեծեն ե: Բանվորները գնացել են գանգասկելու: Վասքիանապետը գուալով նաև պրակտիկ մոս խնդրելու, վոր տեր ւանցելի իրենց շեախսկոպութ մոս խնդրելու, վոր տեր ւանցելի իրենց շեախսկոպութ խուսացել ե ազորել Երանց համար ասծուն: Բայց աղոր ներու փոր չի կը անաւ, Բանվորները հեռագիր են ուղարկել բազավորին: Թագավորը վոշին չի պատասխանել:

Այդ տեսներով՝ Քարանի նոր զործարանի բանվորները յերեարի և եսուրին աւտանաները բողել ու ցրվել են տեսները:

Հնիկե-ներ: Հնեսեվենել երա զ որինակիր: Հերէ ի ե՞ թէջան ան: ձան ու աներտունի հնազան դ եցիր մեր տեսներին: Յեւ կար սպասեցնել երանցիկ մոր վ ճակի լավոցնելուն, բայց գոյինչ չսացանի: Նրանի չն ուզում զ ջել, ուրին պետք ե պահանջնեն:

Յեւ նախ եվ առաջ պետք ե պահ նցնի.

1. Վոր բանվորան որը տեսի առ վաստակ ժամը յորից մինչեւ իրէ կվածամբ յորը նաև ծամակնովա բնումիջութեն ել հեր հաւաքուծ, այսինքն ընդամենը $10^{1/2}$ ժամ, իսկ տաքար ուերբն տաքար անու ժամը 2 թի:

2. Վոր զուծարակը զները բորձագլեն այն ժամն: Վար բանվական ուրա կ հնատում վատակներ չպահասի:

3. Վոր բոլոր անարդար տուգանեները յավ հնեսումները վերցվեն:

Մեջ գու ց կտանք, վոր բանվոր ժողովուրդը գետե, թե ինչպես պետք ե նա հասնի իր պահանջների կատարմանը: Գործենք սբանամուռ ուժուուկ, յեւ հազրանակն անկասկած մերը կլինք:

ԳՈՐԾԱԴԱԿԱԼԱՑԻՆ ԿՈՄԻՏԵՆ:

Վարպետը վազեվագ բակը յեկավ: Նա մոտեցավ Վասիլիյին, խլից նրա ձեռքից թուցիկը, արագ կարգաց ինքնիրեն, գունատվեց:

— Վորտեղից ե, — հարցրեց նա:

Վոչվոր չպատասխանեց: Բանվորները մուայլ զեմքով վարպետին եյին նայում:

— Ի՞նպէս համարձակվեցիք աշխատանքը թողնել, — գոռաց վարպետը խոպոտ ձայնով:

Դարձյալ վոչվոր չպատասխանեց: Վարպետը բոռւցը-ները սեղմած հարձակվեց Վասիլիյի վրա: Վասիլին բռնեց նրա ոձիքից, մի-յերկու անգամ թափահարեց ու ասաց:

— Հեռացիր:

— Սա բնանա ե, — բղավեց վարպետը:

— Սա գործադուլ ե, — կարձ պատասխանեց Վասիլին... Վեց բանվոր անցան բոլոր արհեստանոցները՝ թուցիկները ցրելով ու գոչելով:

— Դադարեցրեք աշխատանքը:

Շուտով արհեստանոցները դատարկվեցն

Վասիլին ու յերկու ընկերները գնացին գրասենյակ և այնտեղ բոլոր բանվորների անունից հայտարարեցին կառավարչին.

— Տուգանքները վճարել չենք ուզում: Չենք ուզում որական տասնեհինգ ժամ աշխատել: Ուրիշ վարպետ ենք ուզում:

Կառավարիչը պատասխանեց.

Չեր ուզածովը չի լինի: Գնացեք աշխատելու:

— Յեթե մեր ուզածովը չի լինի,—հայտարարեցին բանվորները,—մեր աշխատանքն ել չի լինի:

Վաղ առավոտյան բանվորական կացարանում հանկարծ վոստիկանությունը յերևաց: Վոստիկաններն սկսեցին զարթեցնել բանվորներին ու՝ մեկին քնաթաթախ: մյուսին կիսամերկ՝ քաշեցին, տարան գործարան: Զոռով տարան նաև իդնատին: Բայց մնացած բանվորներն արթնանալով, ընկերներին աղատեցին վոստիկանների ձեռքից ու վոստիկանությանը փոնդեցին:

Անցավ յերկու որ: Շպարի գործարանը կանգնած եր Գործատերը դադարեց ուստեստ բաց թողնելը: Բանվորները սովոծ ու պարապ քարշ ելին գալիս իրենց կացարանում:

Յերբորդ որը, կեսօրին, կացարանի առաջ կանգնեց մի շքեղ կառք: Կառքից իջան յերկու մարդ:

Մեկը մի հաստիկ կարճահասակ ծերունի յեր, գեղնակույն դեմքով ու սրածայր մորուքով: Դա գործարանատեր Սորոկինն եր: Մյուսը լայն թիկունքով մի զինվորական եր, գուրս պըծած աչքերով: Դա կազակային հարյուրապետ եր:

Գործարանատերը և հարյուրապետը շրջեցին բանվորական կացարանը՝ համոզելով բանվորներին դադարեցնել գործադուլը: Բայց բանվորներն իրենցն ելին պնդում:

— Միսչե մեր ուզածը չլինի, աշխատանքի չենք գնա: Հարյուրապետը տաքանում եր, ձեռքը թրին զցում և դուզուում:

— Տեսէք՝ վոչվոքի չենք խնայի:

Բանվորները լուռ ելին: Գործարանատերն ու հարյուրապետը դուրս յեկան շենքից, նստեցին կառքն ու գնացին:

Իրիկունը բանվորները տախտակներ ու նստարաններ դեմ տվին զոներին: Հետո հանգըրին բոլոր լույսերն ու պառկեցին: Բայց վոչվոք չընեց: Լուռ պառկել ելին: Այդ մթությունն ու լուռթյունը սարսափ եր ազգում իգնատին:

Գիշերվա կեսին նա լսեց ձիերի դոփյուն: Կազակներ ու վոստիկաններ յեկան: Լսելի յեր՝ ինչպես նրանց ձիանք իջան, ինչպես նրանց ողի յեն հրամցնում: Ընտանիքով ապրողների սենյակներում կանայք լաց ելին լինում:

Բոլոր բանվորները վայր իջան իրենց տախտամածներից, նրանք հանեցին մարտիք վառելափայտի կտորներ, լուսամուտների շրջանակներ, յերկաթե ձողեր. սկսեցին կոտրատել փայտե կահկարասինները:

Բանվորները զինվեցին փայտերով, սեղանի վառքերով. շրջանակներ կրիտորներով:

Կազակներն ու վոստիկանները մոտեցան շենքին: Կազակների հարյուրապետը գոռաց:

— Անձնատուր յեղեք, գործարանի բոբիկներ:

Վասիլին պատուհանից բղավեց:

— Հեռացեք խաղաղությամբ: Մենք վոչվոքի ձեռք շենք տալիս:

Այն ժամանակ հարյուրապետը հրամայեց.

— Վերցնել նրանց ուժով:

Կազակները նետվեցին զեպի փակ զոները: Նրանք քաշեցին, անդահան արին դռները ծղինիով մեկ: Տախտակներն ու նստարանները վար թափվելով կազակներից յերկուսին ճկվեցին:

— Վերե, հրամայեց հարյուրապետը:

Տախտակների ու նստարանների վրայով մազլցելով, կազակները՝ թրելը մերկացրած, խուժեցին զեպի սանդուխքը:

Իսկույն նրանց վրա տեղացին վառելափայտի կտորներ, շրջանակներ, սեղանի վառքեր:

Սակայն կազակները, տեղահան արված դռները վահանի պես առաջները բռնած, արագությամբ բարձրանում ելին սանդուխքով և հարկ հետեւից գրավում:

Բանվորները ցիրուցան մտան իրենց խցերը և կողպեցին դոները:

Վոստիկանները և կազակները մերկ թրերով կանգնեցին դոների առաջը: Բանվորների փոքրիկ մի խումբ միայն շարունակում եր պաշտպանվել՝ մեկ հարկից մրուսը նահանջելով: Նրանց մեջ եյին Վասիլին և Իգնատը:

Վեջապես նրանք հասան հինգերորդ հարկը: Ե՞լ տեղ չկար նահանջելու...

Իսկ կազակներն արդեն չորրորդ հարկումն եյին: Հարյուրապետը բարձր ձայնով հրամայեց.

— Առաջ, տղերք:

Կազտիները ճշալով հարձակվեցին բանվորների վրա: Թուրք ճղեց իգնատի աջ այտը: Կրծքին հասած հարվածը գետին տապալեց նրան: Սրյունը վերրից թևի վրա յեր հոսում: Յերկու կազակ բռնեցին իգնատի թևերից և քարշ տվին սանդուխքից ցած...

Պայքարը վերջացավ: Կազակներն ու վոստիկանները բանվորներին ներքե եյին տանում ձեռները մեջերին կապած: Ճանապարհին ծեծում եյին նրանց կրունկներով ու թրերի կոթսվ...

Կանայք և յերեխաները՝ լսելով սրանց տնքոցները՝ լաց ու վայնասուն եյին զցել:

— Վոչի՞նչ, — չարախնդությամբ հանգստացնում եր նրանց կազակների հարյուրապետը: — Այնտեղ, ներքւում, ելի կուտեցնեն նրանց:

Ներքւում, շենքի առջև, յերկի արդ շարված եր կազակների կեսհարյուրյակը՝ մտրակները ձեռքում:

Մի կողմում կանգնած եր պահապանը՝ զույլով ջուրը ձեռին:

Հարյուրապետը հրամայեց.

— Ընդունել սրանց ինչպես հարկն եւ Կաղամբի պես կոտորել:

Վոստիկանները, թրերը մերկացրած, բանվորներին քշեցին շարքերի միջով, իսկ կազակները, վայրենի ճիշով, մեկը մյուսի հետեւց մտրակի հարվածներ եյին հասցնում ամբողջ ուժով:

Մտրակները ծայրերին փոքրիկ գնդակներ ունեյին, վորոնք ծվեն ծվեն եյին անում բանվորների հագուստներն ու մխվում նրանց մարմնի մեջ:

Ամենից շատ ծեծում եյին Վասիլիյին: Յերբ նա ուշաթափված ընկնում եր, պահապանը ջուր եր շաղ տալին վրան, ու հետո նորից եյին սկսում ծեծել:

Վերջապես մեկը կանչեց.

— Ել հերիք ե սրան... հազիվ ե շունչ քաշում:

Թե ինչ պատահեց հետո, Իգնատը շեր հիշում: Նրա դիմին հարված հասցրին, և նա ուշաթափ գետին փափեց...

Դործադուլը ճնշված եր: Վասիլիյին և ութը ուրիշ բանվորների կալանավորեցին ու աքսորեցին: Մյուսներն այնքան ծեծ կերան, վոր հիվանդանոց ընկան: Մնացածները աշխատանքի վերադարձան: Վերադարձավ նաև Իգնատը:

Բայց գործադուլն իր անելիքն արեց: Գործացանատերը, վնասներ կրած լինելով, վախենում եր՝ չլինի թե գործադուլը կրկնվի, ուստի և տուգանքներն իջեցրեց:

Գործադուլից հետո Իգնատը հասկացավ, վոր բանվորները լավ կյանք ձեռք ըերելու համար միայն մի միջոց ունեն — դա գործատերերի դեմ պայքար մղելն եւ:

Բայց թագավորը, թագավորական վոստիկանությունը, թագավորական զորքերը պաշտպանում են գործատերերին:

Նշանակում ե, բանվորները պետք ե դուրս գան թագավորական իշխանության դեմ:

Յերկու տարուց հետո Շալաշով Իգնատը տեղափոխվեց Պետերբուրգ: Նա մտավ Բալթիկյան գործարանը:

Նա իր արհեստը չսովորեց, — շպարագործ չդարձավ:

Սակայն ընդհատակյա հեղափոխական խմբակում նա սովորեց այն արհեստը, վոր ինքն եր ընտրել:

Դա ամենավտանգավոր, ամենադժվարին, բայց և ամենաազնիվ արհեստն եր աշխարհում — հեղափոխականի արհեստը:

«ՀԱՆԵՑԵՔ, ԽՆԴՐԵՄ, ԲՈԼՈՐ ԱՏԱՄՆԵՐՄ»

Ատամնաբուժի առանձնասենյակը մտավ մի յերիտասարդ։ Նրա ուռած աջ թուշը կապած եր թաշկինակով։ Տեղավորվելով բազկաթոռին, հիվանդն ասաց։

— Հանեցեք, խնդրեմ, բոլոր ատամներաւ։

Այս գեպքը տեղի ունեցավ Բագվում, 1902 թվի մայիսի 12-ին։

Լուելով տարորինակ խնդիրը, բժիշկն իսպառ չղարմացավ։

Նա լոելյայն մոտեցավ գուանն ու կողպեց։

«Հանեցեք ատամներս» նախադասությունը նշանաբաներ, իսկ յեկող յերիտասարդը — ընդհատակի հեղափոխական։

ԳԱՂՏՆԻ ՀԱՆԴԻՊԱՎԱՅՐ

Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում կային գաղտնի բնակարաններ, վորտեղ հեղափոխականներն իրար եյին հանդիպում։

Այսպիսի բնակարանները գաղտնի հանդիպավայր ելին կոչվում։

Հանդիպավայրերը սարքում եյին անկուսակցական ընկերների մոտ, վորոնց կարելի յեր վստահանալ, վորոնք, սակայն, անձամբ մասնակից չլինելով հեղափոխական շարժումներին, ժանդարմների հսկողության տակ չեյին գտնվում:

Վորպեսպի ժանդարմները դժվարանան հեղափոխականներին գտնելու, հանդիպավայրերը շուտ շուտ փոխվում եյին:

Աստամնաբույժ Ֆոկինի բնակարանն արդեն մոտ մի շաբաթ եր՝ ծառայում եր վորպես «իսկրայականների» ընդհատակյա հեղափոխական կազմակերպության հանդեպավայրը:

Ամեն մի ընդհատակյա հեղափոխական, վոր գալիս եր հանդիպավայրը, առաջ պետք ե ապացուցեր, վոր ինքը կուսակցական աշխատող ե: Հակառակ դեպքում նրան լրտես կհամարեյին ու հետը խոսակցություն չեյին բաց անի:

Այն ժամանակներում, յերբ հեղափոխականները թագնը վում եյին ժանդարմներից, կուսակցական կազմակերպության պատկանելու ապացույցն այն նշանաբանն եր, վորն արտասանում եր հանդիպավայրը, յեկող ընդհատակյա հեղափոխականը:

ԿՐԻԼՈՎԻ ՍԻՐԱՀԱՐԸ

Բժիշկը դարձավ «հիվանդին»: Դա մի հաղթանդամ, արևառ դեմքով և, հավանորեն, առողջ մի մարդ եր, վորն, ինչպես յերեւում եր, վաղուց ե չի ընել և խիստ հոգնած ե:

«Հիվանդը» հետ արեց դեմքին կապած թաշկինակը և բերնից մի մեծ կտոր բամբակ հանեց:

Աջ թշի «ուռուցքն» իսկույն չքացավ, բայց նկատելի դարձավ մի մեծ սպի, վոր ձգվում եր ականջից մինչեւ վերի շրթունքը:

— Արտասահմանից ձեր հասցեյով գրականություն և ուղարկած, — ասաց հյուրը — Դեռ չեք ստացել:

Բժիշկը տարակուսանքով ձեռքերը պարզեց.

— Արտասահմանից ստացել եմ չորս պատկեր և մի անդիպական հանդես: Ձիշտն ասած՝ յես շատ եմ զարմացած. վո՞չ մեկը և վո՞չ մյուսը յես չեմ ապսպրել:

— Պատկերները թույլ տվիք՝ մի տեսնեմ, — հետաքըրքը բրկեց հյուրը:

Բժիշկը տվեց հյուրին ճղված մի ծրար, վորի վրա փակցը ված եր ֆրանսիական նամակադրոշմ:

Ծրարի մեջ դրված եր չորս հատ հրաշալի պատկեր, փակցված հաստ կարտոնի վրա:

Հյուրը հետաքըրքը վամբ դիտեց ծրարն ու պատկերները և ասաց:

— Շատ լավ: Իսկ հանդեմը:

Բժիշկը վերցրեց սեղանին դրված հանդեսը, վոր բանդըրով եր արված, ու մեկնեց հյուրին: Սա նայեց փոստի դրոշմին ու ասաց:

— Հիանալին յե, հենց սրա համար ել յեկել եմ: Բժիշկ, ձեր տանը չկա արդյոք մի առանձնացած սենյակ, ուր յես կարողանայի մի յերկու ժամ հանգստանալ:

— Իհարկե կա, — պատասխանեց բժիշկը և գնաց դեպի դուռը:

— Իսկ կրիլովի առակները չունեք արդյոք, — խնդրեց հյուրը: — Քննելուց առաջ կուզենայի կարդալ...

Բժիշկը կանդ առավ ու զարմացած նայեց հյուրին:

— Կրիլովի... Յես հետաքըրքը առաջ կամենա արդյոք:

— Տվեք ինձ, խնդրեմ, կրիլովը, — նորից խնդրեց հյուրը:

Բժիշկը հետ դարձավ, գրապահարանից վերցրեց կրի-

լովի հատորը և տվեց հյուրին:

Այնուհետև նա ընդհատակյա հեղափոխականին առաջնորդեց իր առանձնասենյակի կողքին գտնվող փոքրիկ սենակը: Սենյակը մտնելով, հյուրը դիտեց չորս կողմն ու ասաց:

— Ինձ տաք ջուր ե հարկավոր:

Բժիշկը զանդահարեց, ու մի բոպե անց աղախինը բերեց մեծ թասով տաք ջուր:

Վերջապես բժիշկը դուրս յեկավ, և հյուրը նրա հետեւից դուռը կողպեց:

ՀՐԱՇԱԼԻ ՓՈԽԱՄԿՈՒՄԸ

Մենակ մնալով՝ ընդհատակյա հեղափոխականը գրաւանից հանեց գրչահատը և սկսեց անխնա կերպով քերել պատկերներն ու կարտոնները: Յերբ կարտոնի յերեսի շերտը քերեց վերջացրեց, կարտոնն ընկղմեց ջրի մեջ:

Միքանի ըռպե անցած, նա սկսեց թասի միջից մեկմեկ հանել բարակ գրքույկներ և զգուշաբար շարել նրանք սենյակի հատակին, վոր չորանան:

Հրաշալի նկարներն ու ճոխ կարտոնը փոխարկվում, դառնում եյին գրքույկներ ու թուոցիկներ՝ հետեւյալ մակագրությամբ.

ԱՍԴԲԿ

«ԻՍԿՐԱ»-Ի ՏՊԱՐԱՆ

1902

Իսկրայական գրքերն ու թուոցիկները տպագրվում եյին պապիրոսի թղթի վրա: Հատուկ պատրաստված նրբագույն սոսնձով իսկրայականները հարյուրավոր թերթեր եյին կպցնում իրար ու վերելից գեղեցիկ թուղթ փակցնում, և այսուհետև գրքերն ու թուոցիկները դառնում եյին թղթակալներ, կազմեր, պատկերների ու հայելիների շրջանակներ և նույնիսկ տուփեր ու ճամբրուկներ:

Վերջացնելով գրականության բաց անելը, ընդհատակյա հեղափոխականը ձեռքն առավ հանդեսն ու նրանից մի եջ պոկեց: Ապա սեղանի վրայից առնելով կրիլովի հատորիկը, բաց արեց այն եջը, ուր տպված եր «Թաթուլի գալաճոշը» առակը: Հանդեսից պոկված եջում, տողը նդեղ, ծածկագրով գրված եր մի գաղտնի հաղորդագրություն: Այդ ծածկագրի բանալին «Թաթուլի գալաճոշը» առակն եր:

Միայն յերկու ժարդ—նամակը գրողը և նամակն ստացողը—գիտեյին՝ ինչ բանալիով ե ծածկագրված այդ նամակը:

Բամալին չիմացողը յերբեք չեր կարող կարդալ նամակը...

Հյուրն արտագրեց առակը մի թերթի վրա, ապա հանդեսի եջը գրեց իր ձախ կողմը, հետո մի թերթ մաքուր թուղթ գրեց աջ կողմը, իսկ մեջտեղը գրեց այն թերթը, վորի վրա իր ձեռքով արտագրված եր «Թաթուլի գալաճոշը»:

Նա նայեց հանդեսի եջին, հետո աչքը դարձրեց «Թաթուլի գալաճոշը» թերթին և մաքուր թղթի վրա գրեց մի տառ: Նորից նայեց հանդեսի եջին, ապա նորից այն թերթին, վորի վրա առակն եր զրված, և աջ կողմի թերթի վրա հայտնվեց յերկրորդ տառը:

Այդ տառերը թերթի վրա հետզետե կազմում եյին բառեր, բառեր՝ նախադասություններ, նախադասություններ՝ նամակ:

«Վերջապես ստացանք ձեր նամակը: Մենք արգեն կարծում ենք, թե դուք իրանդացել եք. Սորբիների մեծ պատիա ուղարկված ե Բոզդանին՝ Ֆրանսիացու միջօցով: Կուզման բոզ անմիջապես մեկնի, այլապես Ֆրանսիացին մօրիները հետ կտանի: Կապը պետք ե պահպանել Ֆրանսիացիների կրօներ գանձապահի միջօցով: Եռանկ գրեցե՞ք թշպես կարգադրեցիք: Վողջ լեղեք»:

Ն.»

ԱՆՈՒՆՆԵՐ-ԴԻՄԱԿՆԵՐ

Յերբ տարբեր քաղաքներում և յերկրներում ապրող հեղափոխականներն իրար եյին հանդիպում, նրանք պայմանագործում եյին, թե ինչ բանալիով են իրար նամակ գրելու:

Բայց այդպես հաճախ չեր պատահում:

Շատ անգամ պետք եր լինում առաջուց նամակով պայմանագործել, թե ինչ բանալիով են գրվելու հաջորդ նամակները:

Բայց միշտ ել կարող եր պատահել, վոր առաջին նամակը ժանդարմների ձեռքն ընկներ, և այնուհետև նրանք առանց վորեւ գժվարության կկարդային նաև հաջորդ նամակները:

Հենց այդ եր պատճառը, վոր «զրիմավորած» այբուբենը գեռա բառեա բավականաչափ ապահովություն չեր ժանդարմների գեմ:

Յերբ գոիմը հարկավոր չափով չի փոխում դեմքը, դեռասանը դիմակ և հագնում:

Դիմակը — դա կեղծած դեմք ե, վար նման չե դերասանի իսկական դեմքին:

Բառին ել կարող են դիմակ հազցնել. իսկական բառի տեղ գործ են ածում ուրիշ բառ—կեղծ բառ:

Իսկրայական-հեղափոխականների նամակներում բոլոր աղքանունները, քաղաքների ու կազմակերպությունների անունները և բոլոր կարևորագույն բառերը դիմակով եյին ծածկված:

Որինակ, ընդհատակյա «Խոկրա» («Կայծ») թերթի խմբագրությունը կոչվում եր «Ֆյոկլա», Մոսկվան—պառավ, Բաթումը—Բոգդան:

Բոլոր իսկրայականները դիմակ-անուններ ունեյին. իսկրայական Բառումանին կոչում եյին ծառ, կրամինին—ձի, Շեստերնինին—«Ռուլան և Լյուդմիլա»:

Ժանդարմներին մոլորեցնելու նպատակով կանանց տալիս եյին տղամարդու անուններ, իսկ տղամարդկանց—կանանց անուններ:

Պյոտր Գերմոգենովիչ Սմիդովիչին կոչում եյին Մատրյոնա, իսկ Լիդիա Միխայլովնա Կուլպովիչին—քեռի:

Պատահում եր, վոր ժանդարմները, անտեսանելի թանաքը յերևակելուց և նամակի բանալին գտնելուց հետո յել չեյին կարողանում հասկանալ ամենակարեվորը նամակի մեջ:

Լուղոնից գրված նամակում բոլոր կարևոր բառերը և անունները նույնպես դիմակ եյին հագած:

Այդ նամակի իմաստն այս եր.

«Վեցօպես ստացանք ձեր նամակը. Մենք արդեն կարծում ենք, վոր կույ կալանավորված եք. Ձրանօիտական ըստեավագույն «Պատճ» լեկերության ուղենավով մեծ բանակուրյամբ գրականության և ուղարկված Բարսում. Ճ սեապարհվեցեք ահման ջապաս, թե չե ըստեավագույն կանքները բեռք. Կապր պետք ե պահպանել ըստեավագույն ընկերության գրասեր զանձագանի միջոցով: Նաւով գրեցեք՝ ստացա՞ք աւդիս բեռք. Վոդշ յեղեք:»

«ԽՍԿՐՈՒ-Ի ԽՄԲԱԳ ՐՈՒԹՅԱՆ ՔՈՐՏՈՒՂԱՐ»:



Հեղափոխության փոստատարը — 2



Հյուրը լամպի կրակով այրեց վերծանած գաղտնի նամակը, «Թաթուլի գալաճոշը» պարունակող թերթը և անդիմական հանդեսի եջը:

Այնուհետև շտապով հավաքեց արդեն չորացած գրականությունը, տեղափորեց գրպաններում ու ծոցում, ապա գրպանից հանելով մի կտոր բամբակ, խոթեց բերանը և թաշկինակով նորից այնպես կապեց յերեսը՝ վոր սպին ծածկվի:

Հետո բաց արեց կողպած զուռը ու գնաց բժշկի մոտ՝ հրաժեշտի վողջույն տալու:

ՀԱՍՏՐԱԿԱԾԻ ԿԵՍԸ

Ընդհատակյա այս հեղափոխականի ազգանունը Շալաշով եր: Բայց արդեն վաղուց ե՝ վոչվոք նրան այդ անունով չեր կոչում: Վաղուց ե՝ վոր Շալաշովը սովորություն եր դարձրել իր անուն-ազգանունը փոխել նույնքան հաճախակի, վորքան և հագուստը: Յերկու ամիս առաջ նրա ազգանունը Սարլին եր, մի շաբաթ առաջ—Պյոտր Իվանովիչ, իսկ այժմ նա ընկեր կուզմա յեր:

Իսկ մերձավոր բարեկամները նրան կոչում եյին «հեղափոխության փոստատար», վորովինետև արդեն նիստ ամիս ե՝ նա գաղտնի կերպով շրջում եր հարավային ու միջին Ռուսաստանի քաղաքները, կապ եր պահպանում ընդհատակյա հեղափոխական կոստիների միջև և անլեզար գրականություն ու նամակներ եր հասցնում նրանց:

Շալաշովը և նրա ընկերներն իսկրայականների պլանն եյին ի կատար ածում:

Իսկրայականներն ասում եյին.

— Տվեք մեզ հեղափոխականների կազմակերպություն, ու մենք շուրջ կտանք Ռուսաստանը:

Նրանք ասում եյին.

— Ռուսաստանում աճում ե հեղափոխական շարժումը: Ռուս բանվորների մեջ ուժեղանում ե ատելությունը դեպի կապիտալիստներն ու ինքնակալությունը:

Պայքարը մզգում ե վոչ թե այս կամ այն գործատիրոջ դեմ, այլ բոլոր գործատերերի դեմ: Յեվ վոչ թե մի գոր-

ծարանում, այլ ամբողջ Ռուսաստանում: Պայքարը մղվում է համառուսաստանյան վոստիկանության դեմ, համառուսաստանյան ինքնակալության դեմ:

Դրա համար ել մենք պետք ե ունենանք հեղափոխականների համառուսաստանյան կազմակերպություն, այնպիսի հեղափոխականների, վորոնք անդավաճան կերպով նվիրված լինեն բանվոր դասակարգի ազատագրման գործին ու լավ պատրաստված՝ վոստիկանության և ցարական իշխանության դեմ պայքարելու համար:

Այդ կազմակերպությունը բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցությունն ե, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Նա պետք ե բանվորների մարտական շարասյուններ կազմակերպի, մարտի աղղանշանը տա ու դեպի կոփի տանի նրանց: Բանվորներն առանց կուսակցության չեն կարող հաղթանակ տանել կովում:

Պետք ե սովորեցնել և հեղափոխականներ պատրաստել բանվոր դասակարգի միջից, — պրոֆեսիոնալ հեղափոխականներ, վորոնց արհեստը հեղափոխությունը լինի: Պրոֆեսիոնալ հեղափոխականը պետք ե լավ իմանամարքսիստական թերիան ու փորձառու ընդհատակյա գործիչ լինի: Նա պետք ե լավ գիտենա կոնսպիրացիայի բոլոր ձեերը, վոստիկանության հետ պայքարելու բոլոր յեղանակները, ընդհատակի վողջ տեխնիկան:

«Յերբ մենք ունենք հատուկ պատրաստված ու յերկարատև վարժություն ունեցող բանվոր հեղափոխականների ջոկատներ, այն ժամանակ աշխարհիս վոչ մի քաղաքական վոստիկանության ուժը չի պատի հաղթելու այդ ջոկատներին», այսպես եր գրում Վլադիմիր Իլյիչ Լենինը:

Ռուսաստանի բոլոր քաղաքների անձնվեր և լավ պատրաստված հեղափոխականներին պետք եր համախմբել յերկաթակուռ մի կուսակցության—սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ:

Ռուսական խոշոր քաղաքներում, մեծ Փարբիկն ըում ու գործարաններում կային սոցիալ-դեմոկրատական խըմբակներ:

Թուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջին համագումարը, վորի գաղտնի նիստերը տեղի ելին ունենում Մինսկ քաղաքում 1898 թվին, վորոշեց — բոլոր սոցիալ-դեմոկրատական խմբակները միացնել:

Այն որից արդեն չորս տարի յե անցել, բայց խմբակներն առաջվա պես ցիրուցան են, նրանց միջև յեղած կապը շատ թույլ եւ Բազմաթիվ ցիրուցան խմբակները — դրանք դեռ իսկական կուսակցություն չեն: Քարերի կույտը — դեռևս տուն չեւ:

Քարերը պետք եւ շարվեն հատուկ պլանով: Քարերը պետք եւ իրար ամրացվեն ցեմենտով:

Սոցիալ-դեմոկրատական խմբակները նույնպես պետք եւ իրար ամրացնել:

Վետք եւ ամբողջ Ռուսաստանի կուսակցական կազմակերպությունները միացնել հեղափոխական մարքսիզմի դրոշի տակ:

Այսիսկ գործին ձեռք զարկեց «Խոկրա»-ն — համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական թերթը: Նրան կազմակերպողը Վլադիմիր Իլյիչ Լենինն եր:

Մեկ տարուց ավելի յեր արդեն, վոր «Խոկրա»-ն շրջում էր ընդհատակյա խմբակներում և համոզում եր ընդունել պայքարի իսկրայական պլանը:

«Խոկրա»-ն համոզում եր խմբակներին.

Նախ և առաջ պետք եւ հեղափոխական բանվորական կուսակցություն կառուցել:

Կուսակցությունը դեպի մարտ կառաջնորդի ուսուբանություններին:

Ռուս բանվորները կտապալեն Ռուսաստանում թագավորին ու կապիտալիստներին:

Ռուս բանվորները վողջ աշխարհի բանվորների գլուխը կանցնեն համայն աշխարհի կապիտալիստների դեմ մղվելիք վերջին ու վճռական կովում:

Խոկ դրա համար նախ և առաջ պետք եւ, վոր Ռուսաստանի բոլոր կուսակցական կազմակերպությունները համախմբվեն համառուսաստանյան կուսակցական «Խոկրա» թերթի շուրջը

և նրա ղեկավարությամբ նախապատրաստեն ու համառուսաստանան կուսակցական համագումար հրավիրեն:

Այդպես եր պլանը Վլադիմիր Իլյիչ Լենինի, վոր այն ժամանակ արտասահմանում եր գտնվում: Այդ նա յեր, վոր ասաց:

«Տվեր մեզ հեղափոխականների կազմակերպություն, և մենք շուր կտանք Ռուսաստանը»:

Այսպես եր մտածում նաև բանվոր դասակարգի մրու մեծ առաջնորդ՝ ընկեր Ստալինը, վոր այն ժամանակ ղեկավարում եր Անդրկովկասի հեղափոխական պայքարը:

Հենց դրանց առաջադրանքով եր, վոր արդեն հինգ ամիս եւ Շալաշովը շրջագայում եր միջին և հարավային Ռուսաստանի ընդհատակյա կուսակցական կոմիտեները, տարածելով «Խոկրա»-ն և ազիտացիա մղելով կուսակցության միացման համար:

Շալաշովը պասպորտ չուներ ու հետևաբար չեր կարող գրանցվել: Դրա համար ել վնչ մի քաղաքում չեր կարողանում սենյակ վարձել իր համար: Շալաշովը գիշերում եր կուսակցական կոմիտեների մատնանշած ընակարաններում: Նա ստիպված եր ամեն որ մի ուրիշ նոր տեղ գիշերել:

Հաճախ, ցերեկը՝ կուսակցական գործերով զբաղված լինելով, Շալաշովը ժամանակ չեր ունենում իր համար գիշերվա ոթեան գտնելու... Այդպիսի դեպքերում, կես գիշերին նա նստում եր ամառանոցային վերջին գնացքը, իջնում եր վերջին կայարանում և սպասում առավոտյան առաջին գնացքին, վոր քաղաք վերադառնա: Այսպես եր նա լուսացնում գիշերը:

Ցերեկները Շալաշովը տեսնվում եր ընդհատակյա ընկերների հետ, ներկա յեր լինում կուսակցական գաղտնի ժողովներին, իոկ գիշերները ընում եր գնացքներում կամ շողենավերում:

Վերջապես ընկերները Շալաշովի համար ձեռք բերին պասպորտ Պրիլուկի քաղաքի մեշշամին Պավել Բոնդարենկոյի անունով: Այս պասպորտով Շալաշովն իր համար սենյակ վարձեց Սամարայում:

Բայց հիմի յել — նոր հոգս, Քաղաքապետի հրամանի համաձայն դռնապանները չորս աշբով հետևում ելին այն մարդկանց, վորոնք «վորոշ զբաղմունք» չունեցին, այդպիսիների մասին նրանք տեղեկություն եյին տալիս վոստիկանությանը: Դրա համար ել Շալաշովն ստիպված եր այնպես ձևացնել, իբր թե ծառայում ե մի տեղ:

Ամեն առավոտ, միևնույն ժամին, Շալաշովը դուրս եր դարիս տնից, թեկուզ վոչ մի զործ ել չունենար այն ժամին:

Սամարայում ապրելիս, Շալաշովը հաճախ վոլգայով Սարատով եր գնում, ապա կասպից ծովով ճանապարհը շարունակում եր մինչև Բագու, իսկ այստեղից ել Թիֆլիս ու Բաթում:

Առամնաբուժի տնից հեռանալուց հետո, նա գիշերն անցկացրեց Բաթում տանող գնացքի խեղուկ վագոնում: Շալաշովն սկսեց հաշվել՝ քանի կիլոմետր ճանապարհ ե կտրել ինքն այս վերջին ինք ամսվա ընթացքում: Դուրս յեկավ տասնյոթը հազար կիլոմետր: Այդ տարածությունը յերկրագնդի հասարակածի կեսից քիչ քան ե պակատ:

ՄԱՅՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

Խրիստոֆոր Կոկինակին Բաթումի նավահանգստում նպարեղնի կրպակ եր պահում:

Նավաստիները, նավահանգստի ծառայողները և վոստիկանները Կոկինակին «հայրիկ» եյին ասում:

«Հայրիկ» Կոկինակին տակառի նման մեծ փորով, կեռածայր քթով ու կատվի բեխերով մի հույն եր:

Յուղոտած ճերմակ գոգնոցը հագին իր դախլի հետեւ կանգնած, Կոկինակին ամբողջ որը գլուխ եր տալիս մտնող՝ յելնող հաճախորդներին:

Կրպակ մտնելով՝ գնողը բարեւում եր և ժպիտը յերեսին ասում:

— Մի զրվանքա կաղին, հայրիկ..

— Կես զրվանքա պանիք:

Ու մինչև Կոկինակին կեղտու և ժանգոտած կշեռքով կշռել կաղինը կամ պանիքը, գնորդը կուանում եր գեպի «հայրիկը» և հարցնում:

— Նորություն կա:

Այն ժամանակ Կոկինակին, աչքերն անուշ անուշ կկոցելով, գոհությունից լեզուն շրթացնելով, արագությամբ շշնջում եր գնորդի ականջին.

— Թրքական լավ ծիսախոտ կա... Ալեքսանդրիայի թուղ կա... Անդրիական բուրդ կա... ինչ հրաշալի ապրանք ե: Առաջին տեսակը...

«հայրիկ» Կոկինակին մաքսաննոգ եր: Փոքրիկ առագաստանավով նա անցնում եր Սև ծովի մյուս ափն ու հետզարիս և գաղանաբար ծախում Տրապիզոնից բերած ապրանքները, իսկ նպարեղնի կրպակը միայն աչք խաբելու համար եր:

Մի անգամ, կեսորին, Կոկինակին մոտ գալիս ե Խրիստոգուլու անունով մի գանգրահեր ու թխաղեմ հույն: Դա «հայրիկի» ընկերներից եր, նույնպես մաքսաննոգ: Նրանից ծովի հոտ եր փչում, ասես խարսխի ճոպան լիներ: Նա սսաց:

— Հայրիկ, ես գիշեր գործ կա:

Ու տարավ նրան նավահանգստի գինետունը: Գինետանը, սեղաններից մեկի մոտ, նստած եյին յերկու մարդ: Խրիստոգուլն Կոկինակին ականջին շշնջաց, վորդրանցից մեկը «կլիենտ» ե, իսկ մյուսը շոգնավային «Պաքե» ընկերության զանձապահն ե:

Գանձապահը հասակն առած մի տղամարդ եր՝ կիսամաշ վերաբեր հագած: անհանգիստ նստած՝ նա դեսուդեն եր նայում ու կարմրում և անգաղը ու ոճիքն եր շտկում: Զգիտես՝ ոճն եր նրա համար խեղդուկ, թե շտապում եր հեռանալ այստեղից:

«կլիենտը» բարձրահասակ, հանդարտ, խիստ արևառ դեմքով մի մարդ եր: Թավշյա զլխարկը զլխին, մաշված պիջակը և ոռւսական կոշիկները հագին նա գործակատարի յեր նման: «կլիենտը» անշարժ նստած եր՝ ձեռօք յերեսին զեմ տված:

Խրիստոփուլոն Կոկինակիին բերեց սեղանի մոտ և դարձավ «կլիենտին»*:

— Ահա, այս մարզն ե: Վստահ յեղեք նրան ու ձեր գործը հաջողված համարեցեք:

Ու Կոկինակիի ուսին խփելով հեռացավ: «Կլիենտը» զգուշաբար չորս կողմը դիտեց, ապա կուսցավ դեպի «հայրիկն» ու կիսաձայն ասաց.

— Ոտարերկրյա շոգենավից պետք ե աննկատելի կերպով դուրս բերել և ափի նասցնել մի բեռ: Շոգենավը կանգնած ե նավահանգստի բերանում: Գիշերս նա քառորդ մղոնի չափ հեռանալու յե կանգնած տեղից: Այդ պահին պետք ե նավակով մոտենալ շոգենավին բաց ծովի կողմից: Բեռը կիջեցնեն նավակը ճոպանով:

— Ծանր բեռ ե,— հարցրեց Կոկինակին:

— Յերկու փթի չափ կլինի, — պատասխանեց «կլիենտը»:

«Դատարկ բան ե» — մտածեց Կոկինակին: — «Տամնոց ել շեմ վաստակի»:

— Ի՞նչքան եք վճարելու, — հարցրեց նա «կլիենտին»:

— Քսան, — կարձ կտրեց «կլիենտը»:

Կոկինակիի բեխերը ժաժ յեկան:

«Չլինի վոսկու բեռ ե», մտածեց նա:

Ու թշերը վճռականապես ուռցնելով բարձրաձայն ասաց.

— Քառասունից պակաս չեմ վերցնի:

«Կլիենտը» ժապաց ու ասաց.


— Դե յերեսունով բարիշենք, վերջանա: Կեսը կանխիկ: Ել կոպեկ չեմ ավելացնի:

Կոկինակին ու «կլիենտը» ձեռք-ձեռքի խփեցին: Կոկինակին նկատեց, վոր «կլիենտը» ձախ ձեռքով ե խփում, իսկ աջ ձեռքը յերեսից չի հեռացնում:

«Ատամն ե ցավում», վճռեց «հայրիկը»:

Գանձապահը տեղից վեր թռավ ու շտապով մրթմրթաց.

— Մտքերդ մնաց: Յերեք դեղնագույն, մեկ կապ-



* Կլիենտ — այստեղ գործածված ե «մուշտարիկ» իմաստով: Ծան. Թարգմ.

տագույն... Տեսեք հա, դուք պետք եւ մոտենաք նավին
բաց ծովի կողմից և առանց լույսի, հակառակ պարագա-
յին ամբողջ գործը կիշացնեք:

«Կլիննար» լուռ համարեց քսան ոռորլի: Գանձապահը,
կարծես ամաչելով, վերցրեց, յերկյուղով չորս կողմը նայեց,
փողը գրպանը գրեց ու գնաց:

— Իսկ յեթե բեռը ջուրն ընկնի, — հարցրեց «հայրիկը»
— Կարթաձողով կրնեք, — պատասխանեց «կլիննար»:

«Թեթե բեռ ե, — չի սուզվում, — մտածեց «հայրիկը»: —
Նշանակում ե՝ փոսկի չե, — ու առանց այլեայլի վճռեց. —
թրքական մետաքս կլինի»:

— Իսկ յեթե բեռը թրջվի, — նորից հարց տվեց նա:
— Չի թրջվի, — պատասխանեց «կլիննար»: Ծրաբներն
անջրանցիկ թղթով են փաթաթված:

— Լավ, — ասաց կոկինակին: Նրանք պայմանագործեցին յերեկոյան ժամը տասնը-
մեկին հանդիպել «հայրիկի» կրպակում: «Կլիննար» տասնը-
հինգ ոռոքի կանխավճար տվեց կոկինակիին. Նրանք նորից
ձեռք ձեռքի խփեցին ու բաժանվեցին:

«Կլիննար» յեկավ ճիշտ նշանակված ժամին: Նա մտա-
հոգված եր յերեւմ: Նրա ձեռքին պինդ փաթաթված մի
պարկ կար:

Կոկինակին նայեց նրան ու վճռեց, վոր նա վախենում ե:
«Հայրիկը» խփեց «կլիննար» ուսերին:

— Այ տղա, մի վախենա, — խրատական յեղանակով
ասաց նա: — Սրանից մեծ գործեր ենք արել ու միշտ ել
հաջողություն ենք ունեցել:

«Կլիննար» ժպտաց:
— Յես չեմ վախենում, — ասաց նա: — Մենք ել սրանից
խոշոր գործեր արած մարդ ենք ու միշտ ել հաջողություն
ենք ունեցած... Ասեք, խնդրեմ, ուսկան ունեք:

— Ուսկան: Ուսենք, — պատասխանեց «հայրիկը»: —
Բայց ինչ բանի համար ե:
— Վերցրեք հետներդ, — պետք կզա:

«Մերոնցից ե, — ասաց մտքում «հայրիկը»: — Ու, ինչպես
յերեւմ ե, աշխարհը տեսած մարդ ե»:

Ու հենց այդ ժամանակ նկատեց, վոր հյուրի աջ թշին
մի մեծ հին վերը կա...

Կոկինակին շատ եր փափագում իմանալ, թե այդ ինչ
բեռ ե, վարի բերելու համար այդքան շատ փող են վճա-
րում: Նա նստեց մի հին արկղի վրա ու, «կլիննար» ձեռ-
քից քաշելով, առաջարկեց.

— Նատիր ու պատմիր՝ տեսնենք ինչ բեռ ենք բերելու:

Բայց «կլիննար» նորից լուրջ կերպարանք ընդունեց և
իշխանավորի պես խիստ ձայնով ասաց.

— Շտապեցէք, արդեն ուշ ե:

Կոկինակին գեսուգեն ընկավ:

— Հիմա, հիմա:

Նա վերցրեց պատին կախված մրոտած լապտերը, շտա-
պով հագավ բըրեզենտե թիկնոցը: Նա բան չեր հասկանում
այս «կլիննարից», վորն աջուձախ փողեր ե թափում, իսկ
ինքը ման ե գալիս մաշված պիջակով: Սա ինչ «կլիննար»
մասն ե գալիս մաշված պիջակով: Սորս կողմն ե նայում, իսկ հրա-
ե, վոր խոսելիս գողի նման չորս կողմն ե նայում, իսկ հրա-
մայում ե թաղային վոստիկանի պես: Վայ թե գլխիս մի
փորձանք բերեմ:

Կոկինակին կողպեց կրպակը:

Նավահանգստի սահմաներից գուրու գալով, նրանք
ծովափով վերստուկեսի չափ տարածություն անցան:

Ողը տաք եր ու խեղդուկ. գիշերներն այնքան մութ
եր, վոր մատդ մարդու աչք խոթեյիր, չեր տեսնի: Կոկինա-
կին մի գլուխ փափտում եր «կլիննար» ականջին ու նրա
թերից բռնում «այստեղ զառիվայր ե», «գգնւյշ», «կամաց—
ժամապահն ե»:

Վերջապես նրանք կանգ առան: «Հայրիկը» վառեց
թիկնոցի փեշի տակ բռնած լապտերը: Լույսն ընկավ
ձկնորսական խրճիթի ցցերին:

— Օանդր՝, — կամացուկ ձայն տվեց «հայրիկը»:

Խրճիթում մեկը ժամ յեկավ, ինչ վոր փնթիփնթաց:
Ապա դռան հետեւից դուրս յեկավ կիսամերկ, մազոտ մի մարդ:

Կոկինակին ձեռքով ցույց տվեց ծովի կողմը. Սանդրոն
կոացավ, վերցրեց կարթաձողն ու մի զույգ թիեր: «Հայ-
րիկը» գրպանից հանեց փալասի մի կտոր, ճղուեց ու փա-

թաթեց նրանով թիերի այն տեղը, վորը թիակալի մեջ և
անցկացվում:

— Վոր չճռճռան,—բացատրեց նա:

— Այդ յավ ե,—ասաց «կլիենտ»: Զմոռանանք ուս-
կանը: Կավ կլինի ձկների համար վերցնել նաև մի կողով,
յեթե կա...

«Հայրիկը» և Սանդրոն անհետացան մթության մեջ,
ապա վերադառն և քարշ տալով բերին ուսկանն ու
կողովը: Կողովում արագի մի շիշ կար:

Հետո նրանք կամացուկ նավակն իջեցրին ծովը: Կոկի-
նակին հանգցրեց լապտերը:

«Կլիենտ» նստեց նավակի քթին, իսկ Կոկինակին—
զեկի մոտ: Սանդրոն, մինչև ծնկները ջրի մեջ խրված,
ուժով հրեց նավակը և ապա ինքն ել ցատկեց մեջը: Նա
թափով շարժեց թիերը, և նավակն արագ սահեց սեին տվող
ալիքների վրայով:

Հեռվում, նավերի կայմերի վրա, պապում եյիր գույնգ-
գույն լապտերներ, վորոնց լույսերն արտացոլում եյին
ջրի մեջ: Այն կողմից հազիվ գալիս հասնում եր ձայների
ժողորք, ծիծաղը, ջրի շղփյունը. յերբեմն ել միայն շոգե-
նավերի շշակներն ու վոստիկանների սուլոցներն եյին
լսվում: Այնտեղ նավահանգիստն եր:

Նրանք արդեն քառորդ ժամ ե նավում եյին: Հանկարծ
«կլիենտ» կամացուկ ասաց.

— Շոգենավը:

Զորս լույս—յերեքը դեղնագույն ու մեկը կապտա-
դույն—զանդաղորեն հեռանում եյին մյուս լույսերից:

Կոկինակին դեկը դարձրեց: Սանդրոն զոռ տվեց թիերին.
Նավակը, խույս տալով կրակներից, անցավ բաց ծովի կողմը:

Զրի յերեսին, շատ ցած, պլազաց ու անհետացավ դեղ-
նագույն մի լույս:

— Ազդանշանն ե,—կամացուկ ասաց «կլիենտ»:—
Մոտեցեք շոգենավին:

Զրի յերեսին հանկարծ յերեաց շոգենավի մութ մար-
մինը: Անտեսանելի կայմերի վրայի չորս լույսերն ասես
թթվում եյին ողի մեջ ու չեյին լուսավորում նրան:

Կոկինակին իսկույն վոտի կանգնեց ու փնչալով ճան-
կեց կարթաձողով շոգենավի կողերից կախ ընկած պարան-
ները:

«Կլիենտը» նույնավես վոտի կանգնեց, բայց քիչ մնաց
ցնցումից վայր ընկներ. նավակն ընդհուպ մոտեցել եր շոգե-
նավի կողին:

«Կլիենտը» յերերալով ու գլուխը վեր բարձրացրած
աշխատում եր բան տեսնել մթության մեջ:

Վերևից լսվեց բարձրածայն շշուկ.

— Կարելի՞ յե ցած իջեցնել.

— Իջեցրեք, — ապատասխանեց «կլիենտը», ձեռներին
խոսափողի ձև տալով:

Լսվեց ճոպանի մեղմ ճոճոցը, և ողի մեջ մի սև բան
կախ ընկավ նավի կողից՝ հասնելով նավակում կանգնող-
ների ուսերին:

Սանդրոն ու «կլիենտը» խտեցին բեռը և կապը բաց
արին: Միաժամանակ ինչ-վոր մի բան շըրմիալով ջուրն
ընկավ նավակի կողքին:

— Կարթաձողը, — կիսածայն հրամայեց «կլիենտը»:

Կոկինակին կարթաձողով խառնշորեց ջուրը, բայց
բան չգտավ: Թիկնոցի տակ բռնած՝ վառեց նա լապտերը
և կունալով տասը քայլաչափ հեռավորության վրա տե-
սափ յերկու ծրար, հենց շոգենավի կողքին:

Կոկինակին միքիչ առաջ տարափ նավակը, կարթաձո-
ղով ճանկեց ծրարները և ջրից փուրս հանեց: Ծրարները
քանդվեցին և նրանց միջից ինչ-վոր թղթեր թափթփվեցին:

Այդ միջոցին «կլիենտը», մեջքը դեպի «հայրիկը» դարձ-
րած, ուրիշ ծրարներով եր զբաղված: Նա դարսում եր
ծրարները բրեգենտե պարկի մեջ:

«Հայրիկը», լապտերն արագ մոտեցնելով թղթերին,
տեսափ, վոր զբանք լրագրեր են. բայց թուղթը մի բարակ,
տարորինակ թուղթ եր:

Բոլոր լրագրերի վրա, վերեռում, ուսւերեն տառերով
տալագրված եր «Խոկրա», «Իսկրա», «Խոկրա»...

Կոկինակին բեխերն սկսեցին ժամ գալ:

Շոգենավից բարկացկոտ ձայներ լսվեցին.

— Հանգցրեք լապտերը:

Կոկինակին անմիջապես հանգցրեց լույսը:

«Կիիենտը» տեղավորվեց նստարանի վրա ու հրամայեց.

— Դեպի ափ:

Սանդրոն ձեռքով հրեց նավակը շոգենավի կողքից ու նստեց թիավարելու։ Կոկինակին տեղավորվեց զեկի մոտ։

Նա մնացել եր ապշած։ «Եսպես ել ապրանք կլինի։ Ինչ-վոր թերթեր են, թու։ Կոպեկանոց բան։ Կյանքում յերբեք չի լսել, վոր լրագիր ասածդ ել մաքսանենքու-թյամբ ստացվի։ Ու վերջապես ի՞նչ շահ կարող ե բերել նման մաքսանենքությունը։

Կոկինակին կռացավ դեպի «Կիիենտը», մատով փորին խփելով հարցրեց.

— Լսիր, մի ասա ինձ մարդավարի — ի՞նչ շահ ունես ես թղթերից, հը։ Ուրիշ բան ե թրքական մհտաքսը, ծխա-խոտը, անզլիական բուրդը։ Դրանք, հա, ապրանք են։ Ու մեծ փող արժեն։ Բայց ես թղթերն ինչացու յեն, հը…

— Նավակ ե գալիս, — շնչաց Սանդրոն։

Կոկինակին սրեց ականջը. մոտիկ լսկեց թիերի մեղմ ձղիուն։

«Կիիենտը» տեղից վեր թռավ ու նետվեց դեպի բբե-զենտե պարկը.

— Ուսկանը զցել ջուրը, — կամաց ձայնով հրամայեց նա։ «Կիիենտը» նորից իշխանավորի տեսք ընդունեց։ Կո-կինակին ու Սանդրոն հնազանդությամբ վերցրին ուսկանը և զցեցին ջուրը։

Մթության մեջ հնչեց մի սուր սուլոց և մեկը կոպիտ ձայնով գոչեց։

— Հեյ, նավակ, կանգնիր։

«Կիիենտը» պարկը վերցրեց ու նետեց ջուրը, ուսկա-նի մեջ։ Պարկը շքացավ ջրի տակ։

Կոկինակին հիացած՝ շրխկացրեց լեզվով.

— Այ քեզ գործի մարդ։ Այ խելոք գլուխ։ Ի՞նչ յերե-վելի մաքսանենք գուրս կդար սրանից։

Այ կողմում լապտերի լույս փայլեց, ու մի մակույկ յերեաց։ Մակույկում նստած սպան վատքի յելավ։ Մակույ-

կի քմին նստած զինվորը վերցրեց լապտերն ու նավա-կում նստողների դեմքը լուսավորեց։ Մակույկը մոտեցավ նավակին։

— Այդ դու յես, հայրիկ, — ասաց սպան։ Այստեղ ար-գելված ե ձուկ վորսալը։ Ապա ցույց տուր՝ ի՞նչ ես տա-նում։

Զինվորը կռացավ ու ձեռքի լապտերով լուսավորեց նավակի հատակը, ձկան կողովը և արաղի շիշը։

— Հետ շուռ տվեք նավակը, հարթեցողներ, — ասաց սպան։

Զինվորը ցած դրեց լապտերը։ Սանդրոն նորից նստեց թիավարելու։ Առաջ շարժվեցին։ Մակույկն անհայտացավ։ «Կիիենտը» ուսկանը քաշեց ջրից նավակի մեջ, միջից հանեց պարկը… Նրանք հասան ափ։ Սանդրոն ջուրը ցատ-կեց և ափին մոտ քաշեց նավակը։

«Կիիենտը» դուրս յեկավ նավակից, ծրարները դար-սեց պարկի մեջ ու շալտկեց։ Հետո լապտերի լույսի տակ վճարեց կոկինակիին ինչքան վոր պետք եր, հարցրեց դեպի յերկաթուղին տանող ճանապարհը և մթության մեջ ան-հետացավ։

Կոկինակին նայում եր ստացած փողին, գլուխն եր թափահարում ու բեխերը շարժում։

— Գանձապահին վճարեց, — զարմանալով մտածում եր «հայրիկը», — ի՞նձ վճարեց։ Ի՞նչքան փող նստեց վայ, վայ։ Ցեվ ի՞նչի համար, հարցնող լինի, ինքն ել գործ հասկա-ցող, իերելը գլխին մարդ… ես ի՞նչ բան ե։ Չեմ հասկա-նում։

Ու բարկությամբ հանգցրեց լապտերը։

Նրանք յերկար ժամանակ, մթության մեջ կանգնած, նայում եյին լրազրերով բեռնված տարորինակ մարդու գնացած կողմը, այսինքն դեպի Բաթում — Բագու տանող յերկաթուղու կողմը։ Հետո Սանդրոն հորանջեց ու մտավ խրճիթը ընելու։

— Լրագրեր, թու, — ասաց լսելի ձայնով կոկինակին ու թքեց։ Ախարը ի՞նչ շահ կարող ե լինել դրանցից…

Սինյուխինը որորվելով՝ թափառում եր յերկաթուղու հողալիցքի վրայով։

Նա դարգից մի լավ կոնծել եր գինետանը, բայց խմած ողից նրա դարդն ավելի յեր խորացեր։

«Ձեռքիցս փախցրի... Ապուշին նման բաց թողի։ Ե՞հ, հիմա դե գնա նրան գտի... Դեռ անունս ել խուզարկու յե։ Են ել՝ Պիտերից։ Հետո ել վեց լրտես։»

Վեց շաբաթ առաջ, Սամարայում, Սինյուխինը փողոցում պատահեց մի կարևոր քաղաքական վոճրագործի, վորին դեռ նախանցյալ տարի յեր հետապնդում։ Այն անգամ վոճրագործը վարպետորեն դուրս պրծավ լրտեսների ձեռքից ու չբացավ։ Դեպարտամենտի դիրեկտորը, վոտը գետնին խփելով, գոռզուաց Սինյուխինի վրա, ու միքանի որից Սինյուխինին մայրաքաղաքից փոխադրեցին գավառ, Սամարա քաղաքը, պակաս ոռնկով...»

Սինյուխինն իր «քեռուն» ճանաչեց նրա թշի վրա մացած վերքի հետքից։ Նա այնքան ուրախացավ, այնքան ուրախացավ, վոր ել ասել չի լինի։ Բայց ինչպես անել։ Արդյոք բռնել վզակոթից ու բարշ տալ ժանդարմական վարչություն, թե ման գալ հետեկցը, հսկել։

Նրա ուղեղն աշխատում եր տենդորեն։

«Զլինի հեղափոխական կազմակերպության հետքն ե գտնում նա... Սինյուխինին նորից Պետերբուրգ են փոխադրում... Նրան պարզեատրում են... Նա բարձր պաշտոններ ե ստանում»...»

Սինյուխինի բախտից «քեռին» տուն մտավ և, տասը բոռքե չանցած, «քեռու» դիմանշանները դռնապանին նկարագրելով, Սինյուխինն իմացավ, վոր նա այդ տանն ե ապրում, և ազգանունը Բոնդարենկո յե։

Սինյուխինը դռնապանին մի ոռւքի նվիրեց, հրամայեց լուռ ու մունջ մնալ, սպառնաց։ Վազեց հեռագրատուն, շտապ հեռագիր տվեց Պետերբուրգ իր նախկին պետին։

Միքանի ժամից ստացավ պատասխանը։

«ԶԵՐ ՏՆՈՐԻՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ՎԵՅ ՄԱՐԴԻ. ՍԱՄԱՐԱՅԻ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻ ԿԱՊԱԿՑՎԵՔ. ԼՈՊՈՒԽԻՆ»

Յերեք որից Պետերբուրգից Սամարա հասան վեց փորձ-ված ֆիլյորներ։ Նրանք գեպարտամենտից մի գաղտնի ծրար բերին Սինյուխինին։

«Անդադրում հետապնդել... Մեկնելու դեպքում հետեւել երան բաղաքից բաղաք... Ո՞ւ հետ ե տեսակցություն ունենամ։ Դրի առնելի դիմանակները, հաւաքեները, ազգ նունները... Ամեն ինչ գեկուցել հնառագրով։ Մինչեվ հատօնի կարգադրության չլինի, իուզարքության ու ձերբակալության չենքաւ։»

Ֆիլյորները ժամանակին հասան։ Միքանի որից «քեռին» քոչեց այս տեղից։

Մի ամբողջ ամիս Սինյուխինը և իր վեց ֆիլյորները հանգստություն չունեյին։

Սամարայից կազան, կազանից Սամարա, այստեղից Սարատով, Սարատովից Աստրախան, Բագու, Բաթում, զիշերը, ցերեկը, շոգին, անձրկին, գնացքից դեպի շոգենավ, վազոնում, շոգենավի խցում, մեկ տնից մյուս տունը, փողցներում, բռլվարներում, քաղաքից դուրս գտնված ճանապարհներին, — նրանք ամեն տեղ կընկակու հետևում եին «ըեռուն»։

«Քեռին» կասկածամիտ և զգույշ մարդ եր։ Նա հաճախ փոխում եր զգեստը, մազերի գույնը, մորուքը, բեխերը, հանում և հագնում եր ակնոցներ, դեռ բնակարանին չմոտեցած՝ մեծ շրջաններ եր կատարում, հետքը կորցնելու համար միջանցուկ բակերով եր անցնում, ձիաքարշ եր նստում նրա գնացած ժամանակ, գնացած ժամանակն ել դուրս եր ցատկում ձիաքարշից։ Բայց Պիտերի փորձված ֆիլյորները և Սինյուխինը նրա հետքը չեյին կորցնում։ Սրանք նույնպես փոխում եյին զգեստները, մազերի ու մորուքների գույնը, ակնոցները և անդադար փոխսեփոխ եյին լինում։

*. Ֆիլյոր—վստիկանության գաղտնի հետապնդող խուզարկու (Յ. թ.)

Հեղափոխության փառտատարը—3

ՄԵԼԸ «ՔԵՌՈՒ» հետեւից եր գնում կամ սպասում եր նքան այն տան առաջ, ուր նա մտել եր: **Մյուսը** հեռվից հետեւմ եր առաջինին ու նրանից ազդանշանի սպասում: Յերբորդը հետեւմ եր յերկրորդին: **ՄԵԼԸ** կամ յերկուսը հետեւմ ելին առաջին յերեքին: Յերբ առաջին ֆիլյորը նկատեր, վոր «ՔԵՌԻՆ» կասկածով հետ նայեց ու աշքերը դեպի իրեն սկսեց, նա իսկույն նշան եր անում յերկրորդին, և սա փոխարինում եր նրան: Յերբ հարկը պահանդին, յերկրորդին փոխարինում եր յերբորդը: Զորբորդին հանձնարարություններով ուղարկում ելին մեկից մյուսին, կամ թե քաղաք, կամ հինգերորդի մոտ, վորն այդ միջոցին հեռագիր եր տալիս, տոմսեր եր գնում, տեղեկություններ եր հավաքում: Յեթե «ՔԵՌԻՆ» փողոցում հանդիպեր վորեե մեկին, ֆիլյորներից մեկը կամ յերկուսը, զրուցակիցների բաժանվելուց հետո, անջատվում ելին մյուսներից ու գնումնոր գորին հետեւելու:

«ՔԵՌԻՆ» միջանի անգամ նկատել եր, վոր իրեն հետեւում են. նա հաջողությամբ ծլկվել եր իրեն մոտ գտնվող ֆիլյորից, բայց մեկ հետեւղին մյուսն եր փոխարինում և հսկողությունը շարունակում:

Գործն այսպես շարունակվեց մինչև Բաթում: Յերբ հասան Բաթում, Սինյուխինը հեռագիր տվեց Լոպուխինին և ստացավ այսպիսի պատասխան. «Հսկողությունը մի յերկու որ ել շարունակել, ապա կալանավորել և Պետերուրդ հասցնել: Նրա հետ հարաբերություն ունեցողներին խուզարկել ու յեթե պետք լինի, կալանավորել»:

Պետերբուրգից հեռագիր վոր ստացավ, Սինյուխինը գոհությամբ ձեռքերը շփեց, — գործն իր վախճանին ե մոտենում. ապագա պարզեի և հանգստի հեռանկարը նրան ուրախացնում եր: Ու հանկարծ...

Բաթումը մեծ քաղաք չե. նա փուլած ե առջեղ, ինչպես ըստի մեջ. Բաթումում մարդկանց կարելի յի հինգ մատի պես ճանաչել: Յեկ ինչ. հենց այդ Բաթումում, որը ցերեպի, Պիտերի յոթը փորձառու լրտեսների աչքի առջև, «ՔԵՌԻՆ» գետին ե անցնում. մտնում ե զլխավոր փողոցի աներից մեկն ու... չքանում ե:

Խուզարկուները տակնուվրա յեն անում ամբողջ տունը, հարցուվորձ են անում տասնյակ դոնապանների և վոստիկանների, զեսուղեն են ընկնում, Պիտերի ու տեղական ֆիլյորներն որապահություն են անում կայարանում և նավահանգստում... «ՔԵՌԻՆ» անհետ կորավ...

Սինյուխինը յերերալով՝ մենակ, դանդաղ քայլերով գնում եր յերկաթուղու հողալիցքի վրայով:

«Խայտառակվեցի... Զեռքիցս բաց թողի պարզեց... Փչացլի ապագաս: Անիծյալ մարդ. յերկրորդ անգամն ե՝ տունս ե քանդում»:

Առջեւում, հողալիցքի վրա, յերկաթուղարին լապտերների աղոտ լույսի տակ մի մարդ յերևաց՝ բեռը շալակին: Նա գնում եր նույն ուղղությամբ, վորով և Սինյուխինը, այսինքն դեպի կայարան: Խուզարկուն մտացրիվ նայում եր նրա քամակին... Հանկարծ նա ապշած՝ բերանը բաց արեց, սայթաքեց ու իսկույն սթափիվեց:

Սինյուխինը ճանաչեց իրեն լավ ծանոթ, միքիչ վոստուստող քայլվածքը: Իհարկե նա յե, «ՔԵՌԻՆ» ե... Պարզկեը կլինի: Կլինի, և են ել ինչ պարզե. ախար շալակում նա, անշուշտ, զրականություն ե տանում...

Բեռ տանող մարդը մօտեցավ ապրանքատար վագոններին, վորոնը կանգնած ելին պահեստի յերկաթգծի վրա: Վագոնի հետեւի կողմից վազեց յեկավ մի ուրիշ մարդ: Բեռ տանողն շտապ կերպով պարկը ցած գցեց, մեջը շտկեց, չորս կողմը նայեց... Լուսինը և սեմաֆորի կանաչ լույսը լուսավորեցին նրա դեմքը... Այս, այս, նա յեր, «ՔԵՌԻՆ» եր:

Սինյուխինը ներքեսում, հողալիցքի ստորոտում, ստվերի մեջ չեր յերեւում: Այն մյուս մարդը վերցրեց բեռը, շալակեց ու նորից անհետացավ վագոնների հետեւում: «ՔԵՌԻՆ» արագ շուռ յեկավ, թմբից ցած իշավ ու ստվերի միջով քայլերը դեպի կայարան ուղղեց:

Սինյուխինը նուզված մեկ ապրանքատար վագոնին եր ասյում, մեկ հեռացող «ՔԵՌՈՒ» ու տեղից չեր շարժվում:

Արդիոք մեւ հետեւից վազի, պարկը վերցնող մարդու, թե «ՔԵՌՈՒ» հետեւից:

Գլխավոր հանցանշանը պարկն ե. նրա մեջ, անշուշտ, դրականություն կա: Պարկը խոստանում ե մեծադղորդ գործ, «քեռուն»՝ տաժանակիր աշխատանք, Սինյուխինին՝ մեծ պաշտոն... Այ թե կարողանայի պարկը ձեռք գցել... թու, սատանան տանի, ախար ամենակարևոր ըոպեն ե, և վոչ մի ֆելյոր չի յերեռում...

«Քեռին» շտապ քայլերով հեռանում եր: Սինյուխինը վորշեց իր անելիքը:

Հողալիցքի յերկարությամբ տնկված ծառերի ստվերում թագնվելով՝ նա գնաց «քեռու» հետեւից:

ԳՆԱՑՔԻ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԶՈՐԾ ԲՈՂԵ ԱՌԱՋ

Կայարանում աղոտ լույսով վառվում են լապտերները՝ իրար են անցել թե ուղերները, թե ճանապարհ գցողները և թե յերկաթուղային ծառայողները:

Կասսային շտապ կերպով մոտենում ե մի մարդ, պատուհանից ներս և կոխում առաջուց պատրաստած փողը և ասում:

— Խնդրեմ մինչև Բագուտ Մեկ տոմս, յերկրորդ կարգի... Խնդրեմ շուտ արեք, գնացքը չորս ըոպեյից մեկնում ե:

Մեկը, շունչը բռնված, վազում մոնում ե կայարան, շտապ անցնում ե որապահ ժանդարմների սենյակը և իսկույն ել դուրս ե վազում այնտեղից: Նրա հետեւից, խելագարի նման, դուրս են վազում յերկու ժանդարմ և ժանդարմական սպան—կապտագույն համագգեստներով:

Կասսայի առաջ կանգնած մարդը յերեսը շուռ տվեց այն կողմ, վորտեղ աղմուկ եր լսվում: Կասսիրն իգուր մեկնում ե նրան տոմսը: Մոտեցող ժանդարմները բռնում են մարդու թերեից:

Սպան դիմում ե աշխարհիկ զգեստ հագած ու շունչը բռնված մարդուն.

— Այժմ նեղություն կրեք բացատրելու՝ ով եք դուքք ի՞նչ հիմք ունեք պնդելու, թե այս մարդը քաղաքական հանցագործ ե և թե վոստիկանությունը նրան փնտում եւ

Աշխարհիկ զգեստով մարդը, շունչը կարգած, հանում ե գրպանից թղթի մի կտոր ու մատներով թղթին խփելով.
— Ահավասիկ — ասում ե — Լոպուխինի ստորագրությունն ե... Համեցեք, կարդացեք՝ «Պարտավոր են աջակցությունը ցույց տալ»:

Նա մատնացույց ե անում կասսայի առջև կանգնած մարդուն:

— Նրա ազգանունը Շալաշով ե. Վոստիկանության դեպարտամենտի կողմից նախանցյալ տարի հրահանգ կար նրա մասին... Պարտական եք իմանալ, ձերդ ազնվություն... Այնտեղ նրա դիմանշանն ել հիշված ե—թշի վրա սպիրի:

Կասսայի առջև կանգնած մարդը ջանում ե դուրս պրծնել ժանդարմների ձեռքից, գոռում ե.

— Սա ի՞նչ խայտառակություն ե. Ի՞նչ իրավունք ունեք: Այդ մարդը սուտ ե խոսում... Իմ ազգանունը Բոնդարենկո յե: Ահավասիկ պասպորտս:

Ծոցի գրպանից հանում ե պասպորտն ու սպային մեկնում:

Սպան կարդում ե պասպորտը, նայում ե մարդուն. իսկապես վոր թշի վրա սպիրի կա. մի անգամ ել կարդում ե թուղթը, հետո հրամայում ե ժանդարմներին.

— Տանել յերթապահի սենյակը:

«ՊՐԵԴՎԱՐԻԼԿԱՆ*»

Պատուհանին յերկաթե վանդակ, Բանտի կամերայում, նույնիսկ կեսորին, մութ ե, ինչպես մթնշաղին: Վեց քայլ առաջ, վեց քայլ հետ:

Ցեթե ձանձրությունից կալանավորն սկսի շվացնել՝ թրիկոցով կբացվի դուն միջի քառակուսի անցքը: Վերակացուն կգոռա.

— Շվացնելն արգելված ե:

Ձանձրալի յե: Տխուր: Իգնատն սկսում ե խոսել ինքն իր հետ:

— Խոսելն արգելված ե:

Նա ձեռքերը լու սամուտին զցելով բարձրանում ե վեր ու դուրս նայում: Տեսնում ե բանտի ընդարձակ բակը, զեղնագույն պատերը և պատուհանների անհամար վանդակնագույն պատերը: Դրանք կամերաներն են: Ամեն կամերադակապատերը, մարդ կա: Նրան ել ե ուտում թախիծը: Նրան ել ե արգելված շվացնելը, խոսելը...

Դուռը ծեծում են, բայց նրա ուշըն ուրիշ կողմն ե: Բացվում ե դուն քառակուսի ողանցքը:

* Պրեդվարիկա - բանտ, վորտեղ կալանավորներին պահում եյին մինչև քննության ավարտումը: (Ս.Թ.):

— Պատուհանից նայելն արգելված ե:

Որը մի անգամ բանտի բակն եյին հանում զբոսանքի: Բակի կենտրոնում մի ահագին շրջան կա: Այդ շրջանը տախտակե բարձր պատերով բաժանված ե միքանի վանդակների, կարծես գաղանների համար: Պահապահնը թողնում ե իգնատին այդ վանդակներից մեկն ու հրամայում՝ «Ման յեկ»: Բակի մեջտեղում, վանդակներից շատ բարձր, մի բոլորակ զիտարան ե շինված: Դիտարանի վրա — յերեք հակիչներ՝ ատրճանակները պատյանում:

— Կանգ չառնել: Պատը չփորփրել: Զթխկթ խկացնել: Զերգել:

Կամերայում ժամերով անցուղաբ անելիս, բակում զբոսնելիս, գիշերը տախտամածին պառկած ժամանակ իգնատ Շալաշով նորից ու նորից չափում-ձևում եր ու սերտում այն դերը, վորը նա խաղում եր ժամարմների առջև ամեն մի հարցաքննության ժամանակ:

Նա Շալաշով իգնատը չե, այլ Բոնդարենկո Պավելը:

Այն, ինչ վոր իգնատ Շալաշովն իր կյանքում տեսել ե և արել, այդ բոլորը նա յերբեք վոչ տեսած ե և վոչ արած: Այդ ամենը չեղյալ բաներ են:

Բալթիկյան գործարանում, Պետերբուրգի շպարագործարանում... Յարոսլավլում նա բանվոր հայր չի ունեցել:

Նա ընդհատակյա խմբակի մեջ չի լեղել, պրոպագանդի արել գործարաններում, «Խոկրա»-ի գաղտնի կազմակերպության մեջ աշխատանք չի տարել:

Գոյություն չեն ունեցել այն մարդիկ, վորոնց հետ նա հանգիպել ե, գոյություն չեն ունեցել այն նամակները, վոր նա ստացել ե, այն բնակարաններն, ուր նա ապրել ե, — այս բաներից և՛ վոչ մեկը չի լեղել:

Իսկ, ընդհակառակը, գոյություն ուներ այն, վոր յերեք գոյություն չեր ունեցել:

Ունեցել ե հայր՝ Ստեփան Բոնդարենկո, գյուղատես։ Ունեցել ե մանկություն, վորն անց ե կացրել Պոլտավայի նահանգի Պրիլուկի քաղաքում։ սովորել ե զիմագիայում, զնացել ե արտասահման, «Վերադարձել ե» ու «զանազան քաղաքներում աշխատանք ե փնտռել»...

Պավել Բոնդարենկոյի անունով իսկական պատգամութը Շալաշովն ստացել եր ընդամենը մեկ ամիս առաջ՝ Սամարյայի կուսակցական կոմիտեյից։ Ահա թե, ինչպես եր ճարեկ հիշյալ պատգամութն ընդհատակում «Սատանա» մականունով աշխատող նրա ամենամոտ ընկերը Արտասահմանում յեղած ժամանակ նա պատահում է իր մտերիմ բարեկամ Պավել Բոնդարենկոյին։ Բոնդարենկոյն վորոշել եր ընդմիշտ մալ արտասահմանում։ Ծուսական պատգամութը նրան պետք չեր։ «Սատանան» ուզում ե Բոնդարենկոյից այդ պատգամութը, իր հետ Ծուսաստան բերում և հետո հանձնում Սամարյալի ընդհատակյա կոմիտեյին։

Յերբ Սամարյալի գաղտնի հանդիպավայրում Շալաշովն պատգամութը ելին տալիս, «Սատանան» մանրամասնաբար թվարկեց Բոնդարենկոյի մերձափոր և հեռավոր ազգականներին, նշելով, թե ով վորտեղ ե ապրում և ինչով ե պարագում։ Իգնատն իր «տոհմագրությունն» անգիր եր սովորել։

Իգնատն այս պատգամութով ել գրանցվել եր Սամարյայում։ Հենց այս պատգամութը գրպանում նրան կալանավորեցին Բաթումում։

Յերկաթե դուռ, յերկաթե վանդակով լուսամուտ, հարկից հարկ տանող յերկաթե սանդուխքներ, վեց քայլ կամերայում տուած ու հետ։

Արգելված ե... Արգելված ե... Արգելված ե...
Ժամերով խորհում եր Իգնատն այս հարցաքննությունների մասին, վորոնք տեղի ելին ունեցել ժանդարմական վարչության մեջ, ուր նրան արդեն յերեք անգամ տարել ելին պատուհանները վարագութած կանաչ կարեթով։ Նա մտաբերում եր ըննիչի յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր հարցը։ այդ քննիչը հասակն առած ժանդարմային ուստմիստը եր՝ շքանշանը կրծքին, վոսկի շրջանակով ակնոցն աշբերին։ Իգնատը մտաբերում եր նաև դատախազի ոգնականին, այդ գունատ, սպիտակած քունքերով բարձրահասակ մարդու յուրաքանչյուր նկատողությունը։ Մատաբերում եր նրա ամեն մի հայացքը, ժպիտը, ձայնը։ այս բոլորի մասին նա խորհում եր ու կշռադատում։

Միայն թե ժանդարմները չկարողանային ապացուցել, վոր նա Բոնդարենկոն չե, այլ Շալաշովը։

Ուրիշ բանից նա յերկյուղ չունի։

Բոնդարենկոյի դեմ հանցանշաններ չեն կարող լինել։ Բոնդարենկոյի պասպորտով Շալաշովն ապրել ե յեղածչեղածը մի ամսից քիչ ավելի։ Այդ մի ամսվա ընթացքում իրեն հանդիպած մարդկանց մասին իզնատը կարող ե յերաշխավոր լինել այնպես, ինչպես իր մասին։ Նրանց մեջ վոչ մի դաշտան չկա։ Յեթե նրանց հարցաքննեն, նրանք, ինչպես և Իգնատը, կհայտնեն, վոր նրան չգիտեն և չեն հանդիպել։ Իսկ լրտեսների ցուցմունքները, վորոնք կարող ելին հետեւած լինել Իգնատին, դատարանում ընդունելի չեն, — այսպես և ասում նույնիսկ ցարական որենքը։ Նրան կալանավորելու ժամանակ վարկաբեկիչ վոչ մի թուղթ չեն գտել մոտք։ Այս ամբողջ ամիսը նա վոչ մի նամակ չի գրել։ Իսկ ծածկագիր նամակներ ստացած ե յեղել միայն հանդիպավայրում։ Այդ նամակներում, իհարկե, վոչ մի աղդանուն չի հիշատակված։ Յեթե ժանդարմներին հաջողված ել լինի ձեռք զցել վորևէ նամակ, միենույնն ե՝ նրանց մեջ Բոնդարենկոյի դեմ հանցանշաններ չեն գտնի։

Նրա գործն այնքան ել վատ չե։ Ծոտմիստըն ու դատախազի ոգնականը լոկ վախեցնում են նրան։ Իրականում նրանք չեն առաջադրել նրա մեղավորության մասին այնպիսի լուրջ հանցանշաններ, վորոնք ապացուցելին, վոր նա վոչ թե Բոնդարենկոն ե, այլ Շալաշովը։ Ակներև ե, նրանք այդպիսի ապացուցներ չունեն։

«Իսկրա» ի մասին վոչ մի հարց չեն տվել, ասել ե՝ վոչինչ չգիտեն։ Պարզ ե, վոր «Սատանան», վորին ինքը կալանավորվելուց միքանի ըոպե առաջ տվել եր իսկրայական գրականություն պարունակող պարկը, հաջող կերպով ծլկվել ե։

Յերանի թե այդպես լիներ. վորքան ուրախ կլիներ իգնատը, յեթե իմանար, վոր «Սատանան» դուրս ե պրծել փորձանքից, և գրականությունը տեղ հասցնելու կարեոր գործը կատարված ե։

Սակայն ժանդարմները ճշտությամբ թվարկում ելին այն բոլոր քաղաքները և բնակարաններն, ուր յեղել եր

Իգնատը վերջին ամիսներում: Նկարագրում եյին նշաններն այն մարդկանց, վորոնց հետ նա տեսնվել եր: Վերջապես տվեցին միքանի ազգանուններ:

Դա շատ վատ նշան ե: Ժանդարմները գտել են «իսկրայական» կազմակերպության հետքը, կարող ե պատահներ, վոր արդեն մարդ ե կալանավորված:

Իրեն՝ Իգնատին այդ բանը մնաս տալ չի կարող: Ամենաշատը, վոր նրան սպառնում ե, դա այն ե, վոր նրան, իրեն տնբարենույս մարդու, առանց դատելու, և վարչական կարգով աքսորեն գավառական վորոնե քաղաք՝ վոստիկանության հսկողության ներքո... Մի շաբաթից Իգնատն այնտեղից կփախչի...

Միայն թե, միայն թե նրանց չհաջողվեր առաջուցել վոր նա Բոնդարենկոն չե, այլ Շալաշովն ե...

Ժանդարմները Շալաշովի արտաքինի մտահն միայն այն գիտեն, վոր նրա թշին սպի կա:

Նախանցյալ տարի դավաճանի մեկը ժանդարմներին մատնեց ընդհատակյա մի կազմակերպություն — ութը մարդ, նրանց թվում նաև Շալաշովին: Դավաճանը Շալաշովին միայն մի անգամ եր տեսել, այն ել՝ անցողակի, մութ տեղում: Միակ նշանը, վոր նա կարողացավ մատնանշել ժանդարմներին, դա թշի սպին եր. նա նույնիսկ չեր ել հիշում, թե վոր թշին ե. Ահա այս միակ նշանն եր, վոր մատնանիշ եր արքած մի հին վոստիկանական շրջաբերականի մեջ: Շալաշովն առիթ եր ունեցել անձամբ կարդալու այն:

Այն դավաճանը շուտով վերջ տվեց իր կյանքին, չկարողացավ խալտառակությունը տանել: Նշանակում ե՝ ժանդարմները վոչ մի վկայի ցուցմունք չպիտի կարողանան ձեռք բերել:

Իսկ լուսանկար պատկերներ ժանդարմների ձեռքում կարող չեն լինել, վորովհետև Իգնատը դեռ վոչ մի անգամ կալանավորված չի յեղել:

Կամերայում մութ ե: Լուսամուտին յերկաթե վանդակը վեց քայլ առաջ, վեց քայլ հետ: Այսպես անծայր ու միալար անցնում եյին որերն ու շաբաթները...

Մի անգամ, իրիկվա ժամանակ, Իգնատին հրամայեցին իրերը հավաքել: Ազատություն, թե աքսոր Հայտնի չե: Նրան բերին կայարան և, ասես վտանգավոր գաղան լիներ, նստեցրին վանդակապատ պատուհաններով մի վագոն, առանձին կամերայում, ժանդարմի հետ:

ՅԵՐԵՍ-ՅԵՐԵՍԻ

Իգնատին յերկար ժամանակ տանում եյին անհայտությամբ:

Յերլորդ գիշերը նրան առաջարկեցին դուրս գալ վագոնից ու տարան չսալահատակված մութ փողոցներով: Հասան կալանքի տունը ու նրան ներս խոթեցին խցիկը: Փականքը չսկաց: Իգնատը պառկեց ու իսկույն քնեց:

Զառամալ պահապանն առավտյան հաց և յեռացրած ջուր բերեց նրան:

— Ի՞նչ քաղաք ե, պապի, — հարցրեց Իգնատը,

Ծերուկը պատասխանեց.

— Պրիլուկի, — ու դուռը նորից կողակելով գնաց:

Ահա թե ինչ են մտածել ժանդարմները — Պրիլուկի: Այստեղ են ապրում Բոնդարենկոյի ծնողները: Նրանց կը բերեն իր մոտ ու կկանգնեցնեն յերես-յերեսի՝ «Դուք այս մարդուն ճանաչում եք, թե վոչ»: — «Վոչ, չենք ճանաչում»...

Այն ժամանակ Շալաշովին նորից Պետերբուրգ կտանեն: Նորից վանդակապատ լուսամուտ, վեց քայլ առաջ, վեց քայլ հետո... չետո դաս, աքսոր...

Մի ժամանակ նորից յեկավ պահապանը.

— Համեցեք պրիստավի մոտ:

Ու կամացուկ ավելացրեց.

— Ծեծելու յեն, — մի ձչաք. ձչալու վոր լինեք, ել ավելի ուժով կծեծեն...

Գրասեղանի մոտ նստած եր դեղնած, չորացած դեմքով պրիստավը: Սեղանի առաջ կանգնած եյին յերկու վերակացու և վոստիկան: Յերեքն ել շատ բարձրահասակ: Նրանց բոլորից արագի ու սոխի հոտ եր փշումք:

— Ի՞ո ազգանունը Բոնդարենկո յե, — խուպոտ ձախով գոռաց պրիստավիլ: — Խորհուրդ չեմ տա սուտ խոսել: Յես, բարեկամ, խխստ բնավորության տեր մարդ եմ:

— Խնդրեմ մի գոռաք և ինձ հետ «գուրք»-ով խոսեցեք, — պատասխանեց Իգնատը, — իմ ազգանունը...

Արդյոք միանգամից խոստովանեմ, ինչ ե: Այժմ հո միննո յնն ե...

Իգնատի պատասխանին շապասելով, պրիստավը հրամայեց վոստիկանին.

— Կանչիր:

Վոստիկանը ձեռքը զլխարկին տանելով պատիվ տվեց պրիստավին, ապա դուրս յեկավ ու դուան հետեւից կանչեց:

— Պարոնայք Բոնդարենկոներ, համեցեք պրիստավի մոտ:

Վերակացուները մոտ վազեցին Իգնատին: Նրանց բոռնցքներն ասես փթանոց կշուաքարեր լինելին: Պրիստավը և վերակացուները մոայլ ու պղտոր աչքերը նրան հառեցին:

Մտավ մութ գույնի ակնոցներով մի ծերուկ, վորը ձեռնափայտով ճանապարհ եր վորոնում, նրան, թեկից մտած, առաջ եր բերում մի կարճլիկ պառավ կին: Նա յերկյուղով աչքերն այս ու այն կողմ եր դարձնում... Աշքերը կանգ առան Իգնատի վրա:

Իգնատը յերեսը մի կողմ դարձրեց: Հիմա ծեծ կուտեցնեն...

Հանկարծ նա լսում ե.

— Պավլիկ:

Նա, շփոթված, շուռ ե գալիս դեպի պառավը:

Պառավը վազում ե նրա մոտ... Գրկում ե նրան, ձեռքից բռնելով մոտեցնում ե կուրին:

Պրիստավը աղմուկով հետ ե քաշում բազկաթուր, վեր կենում տեղից:

Պառավը յերկյուղով նայում ե նրան, իրար ե խառնվում, սկսում ե խտած Իգնատին ու կարկտի նման հարցեր ե թափեցնում:

— Պավլիկ, համբուրիր հայրիկիդ... Ստյուպա, աչք ու նենայիր ու աեսնեյիր, ինչպես փոխվել ե նա: Ախար ինչ-

քան ժամանակ ե՝ քեզ չենք տեսել: Դե, Պավլիկ ջան, գըրկիր հորդ: Ստյուպա: Այս, ինչու մեզ այստեղ վիճակվեց իրար տեսնելու...

Վերակացուները ծուռ-ծուռ պրիստավին եյին մտիկ տալիս. ախար այս ինչ անկարգություն ե. տեղը չի, վոր մեջ խառնվենք, կալանավորի բերնին մի լավ հասցնենք, պառավին ել վզակոթին տանք ու դուրս գցենք:

Պրիստավը բարձր ձախով ասաց.

— Պարոն, կարող եք յերդմամբ հաստատել, վոր կալանավորը ձեր վորդին ե:

Մերուկն Իգնատի զլուխը խտտեց ու բարձր ձախով, ինչպես դերասաններն են խոսում բեմի վրա, ասաց.

— Պարոն պրիստավ, միթե հայրական զգացմունքի այս անկեղծ արտահայտությունը լավագույն յերդումը չե:

Պառավը վազեց դեպի պրիստավը ու մի ծրար խոթեց նրա ձեռքը:

— Պարոն պրիստավի... Աննշան մի նվեր ե... Կաղաչեմ... Մենք այնքան հուզված ենք: Ի՞նչ տարորինակ թյուրիմացություն ե: Մեր վորդին... ու հանկարծ կալանքի տանը...:

Պրիստավը շտապ կերպով մատները կոխեց ծրարն ու դուրս հանեց մեծարժեք թղթադրամի ծայրը: Նրա թշերն ու շրթները ցնցվեցին:

Մրարը մի ակնթարթում աներկութացավ կոնակի հետեւում:

Պրիստավը նորից նայեց՝ մեկ ծերուկին, մեկ Իգնատին ու... ժպտաց:

Յերկու վերակացուների դեմքին ել իսկույն ժպտաց վըռքեց: Նրանք լարի պես ձգվեցին, վոտներն աղմուկով իրար մոտեցրին և զինվորական պատվի կանգնեցին:

Սեղանի մոտ կանգնած վոստիկանը ժպտաց ու մի վոտքեց մյուսին փոխվեց: Ժպտաց նաև պառավը, նրա դեմքից վախն անհետ կորավ: Վերակացուներից ամեն մեկի ձեռքը նա արագի փող խոթեց:

Պրիստավը բեխի ծայրերը վոլորելով հրամայեց:

— Կալանավորին տեսակցություն թույլ տալ ծնողների

հետ առանձին սենյակում:

ՄԱՅՐԸ ՅԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Տեսակցության ժամանակ պառավ Բոնդարենկոներն իգնատին պատմեցին հետևյալը:

Յերեկ իրիկուն նրանց բնակարանն եւ գալիս իրենց փորդու՝ Պավելի վաղեմի ընկերը։ Նա նոր եւ ժամանած յեղել ու կայտրանից ուղղակի նրանց մոտ եւ յեկել։

Պավել ընկերն ասել եւ, թե իր մոտիկ բարեկամը, վոր սոցիալիստ եւ, ապրելիս եւ յեղել նրանց փորդու պասպորտով։ Այժմ նա կալանավորված եւ նրան փորձանք եւ սպասում։ Միմիայն նրանք՝ Բոնդարենկոներն են, վոր կարող են նրան փրկել։ Դրա համար պետք եւ, վոր նրանք հայտնեն, թե իբր կալանավորն իրոք իրենց Պավել վորդին են...

Իսկ հետեւյալ որն առավոտյան, վոստիկանն եւ գալիս պըխստավի ծանուցագրով՝ «Ներկայանալ անմիջապես»։

Իգնատը քիչ եր մնում վեր ցատկել տեղից։

Սխար Պավելի բարեկամը նրա ընկեր «Սատանան» եւ Սխար նա յեր, վոր ճարեց պասպորտը Պավել Բոնդարենկոյից ու տվեց Իգնատին։

Նշանակում ե՝ պարկով գրականությունն անվնաս ե մնացել և անկորուստ տեղ հասցվել։

Իգնատը պառավների ձեռքն եր սեղմում, շնորհակալություն հայտնում նրանց։

— Բայց զուք ինչպես չվախեցաք այդ տեսակ ոփսկ անելու, — զարմանում եր նա։ — Միթե այստեղ ձեր վորդուն վոչվոք չի ճանաչում։

Պառավը բացատրեց, վոր Պավելը Պրիլուկիից հեռացել եւ ութը տարեկան հասակում...

Տեսակցությունից հետո Իգնատին ու պառավներին նորից տարան պրիստավի առանձնասենյակը։

Պրիստավը ձայնով կարդաց այն հաղորդագրությունը, վոր նա պատրաստել եր հեռագրով Պետերբուգ ուղարկելու՝ վոստիկանության գեպարտամենտին։

Պրիստավը գրում եր, վոր Պետերբուրգից բերված կալանավորն իսկապես Պավել Ստեփանովիչ Բոնդարենկոն եւ



Այս բանն ապացուցված ե՝ նրան յերես-յերեսի բերելով ծնողների հետ, վորոնց պրիստավը ճանաչում ե վաղուց ի վեր: Պրիստավը սպասում ե գեղարտամենտի կարգադրությանը, վոր ըստ այնմ ել վարվի կալանավորի հետ: Իդնատին նորից տարան կալանքի տունը:

Իգնատը կամերայում պտուտ-պտուտ եր գալիս ու յերգում կիսաձայն:

Այ, ինչ բան ե կուսակցական կազմակերպությունը. այ, ինչ բան ե ընկերը: Պառավներն ել զոշաղ մարդիկ են. խելացի վարկեցին, սխալ բան չարին. իրեն, իհարկե, կարձակեն:

Ծնցավ մի շաբաթ. Պահապանն ամեն որ բերում եր նրան «մոր» հանձնումները:

Իգնատին, աղատ ժամանակն ել, չեր պատահում յերբեք, վոր այդախսի համեղ բաներ ուտի՝ հավ, մուրաբա...

— Ես ինչ հոգատար մայր ունես, — ասում եր պահապանը:

Ախ, սիայն թե Թետերբուրդից շուտ գար հրամանը: Իգնատը քունը կորցրել եր. ահա առավոտը կդա, ու նրան կարձակեն...

Հասավ վերջապես և այդ առավոտը: Դուռը բացվեց, ու պահապանը, շեմքին կանգնած, ասաց.

— Հավաքեցեք իրերդ, աղատվում եք:

Իգնատը վեր թռավ տեղից, անմիջապես հատակին փրոեց սավանը, թափեց այնտեղ իս բոլոր ունեցած-չունեցածը՝ բարձ, թեյաման, բաժակ, գրքեր, ատամնափոշի... Նա այդ բոլորը կապեց սավանում ու հետևեց պահապանին:

Գրասենյակում ժանդարմն՝ աչքերը հառած սեղանի վրա թափթափ թղթերին՝ միապաղաղ ձայնով հաղորդեց իգնատին:

— Բոնդարենկո, Պավել Ստեփանովիչ, 23 տարեկան, ծնվել ե Պոլտավի նահանգի Պրիլուկի քաղաքում, մեշանին... Նախնական քննությունը վերջացած լինելով կալանքից ազատվում եք ... Ստորագրեցեք:

Իգնատի ձեռքերը դողդողում ելին, գրիչը նրա ձեռքում թոշկոտում եր ու թանաքի լաքաներ թափում թըղթին: Նա մեծ դժվարությամբ խզրեց «Բոնդարենկո» ազգանունը:

— Ազատ եք, — ասաց ժանդարմը: Կարող եք գնալ: Զերմայրը դարպասի մոտ ձեզ ե սպասում:

Իգնատն ուսերին առավ կապոցն ու շտապ դուրս յելավ գրասենյակից: Նա վագեց փողոց, ուրախ-ուրախ նայեց վեր՝ ամառային պայծառ յերկնակամարին, նայեց չորս կողմը, վոր գտնի պառավ Բոնդարենկոյին:

Այդ ըոպեյին լսվեց մի ճիչ (դա շատ ծանոթ մի ձայն եր: Բայց պառավ Բոնդարենկոյի ձայնը չեր).

— Իգնատ:

Իգնատը շուրջ յեկավ ու տեսավ, վոր մի հասակն առած շալով կին, կապոցը ձեռքին, դեպի իրեն ե վազում... Նա ցնցվեց: Ճանաչեց թանկաղին դեմքը... Ի՞նչքան ժամանակ ե չեր տեսել նրան: Վնրքան նա պառավել ե: Բերանի մոտ կնճիռներ կան... Մայրն եր: Դա նրա մայրն եր: Վնչ թե Բոնդարենկոյի, այլ իր հարազատ մայրը:

Ցեվ իգնատն իսկույն սարսափով գլխի ընկավ, վոր ամեն ինչ կորած ե, վոր նա ընկել ե ժանդարմների այնքան վարպետությամբ սարքած թակարդը:

Նա հավաքեց իր կամքի ամբողջ ուժը և, մի կողմ հրելով մորը, բարձր ձայնով ասաց.

— Դուք սխալվում եք, յես ձեզ չեմ ճանաչում:

Մայրը, վոր ուզում եր նրան գրկել, ուրախությունից լաց լինելով՝ չլսեց նրա ասածներն ու շարունակում եր.

— Վորդիս, զավակս.. Վնդիջ ես... Փառք քեզ աստված... Բայց ինչքան լղարել ես. քանի տարի յե՝ չեմ տեսել... Շնորհակալ եմ, մի բարի մարդ փնտռեց, գտավ ինձ ու վերջապես բերեց քեզ մոտ...

Իգնատն, ասես մի բան նրան դրդած լիներ, հետ նայեց դեպի կալանքի տունը:

Դարպասի մեջ կանգնած ժանդարմը դիտում եր Իգնատին:

Իգնատը ուժգնորեն մի կողմ հրեց մորը և արագ քարերով առաջ անցավ: Ժանդարմը, ձեռքն ատրճանակի բնին տանելով, վագեց նրա հետեից,

— Պարոն Շալաշով, դուք կալանավորված եք:

Շշկլված մայրը մեկ դեպի Իգնատն եր վազում, մեկ դասնում եր իրեն այստեղ բերող «բարի մարդուն»։
— Ախար վժնց կիմի Ես ի՞նչ բան ե, տեր իմ աստված։

Կալանքի տան կողմից վերակացուներն արդեն վազում եյին դեպի Իգնատը։

ՀԱՐՍՆԱՑՈՒԻՆ ՆՎԵՐԸ

Պատուհանին վանդակ։ Վեց քայլ առաջ, վեց քայլ հետ Իգնատը նորից նստել եր Պետերբուրգի «պրեգվարիլկայում»։

Արդեն վեցերորդ ամիսն ե, վոր նա բանուումն ե։ Նրա գործի քննությունն արդեն ավարտված ե։ Յերկու շաբաթից դատն ե։ Նա կստանա տասը տարվա տաժանակիր աշխատանք։

Կիրակի, ճաշից հետո, վերակացուն մտավ նրա կամերան և ասաց։

— Շալաշով, գնանք տեսակցության սենյակը։

— Տեսակցության։

Շալաշովը հետևեց վերակացուին։

«Ո՞վ կարող եր գալ... Մայրը։ Վո՞չ։ Միքանի որ առաջ նրանից նամակ եր ստացել հիվանդացել և ու պառկած և Յարուլավիլ հիվանդանոցում։ Պետերբուրգում նա մարդ չունի։ Ո՞վ կարող ե լինել»։

Գրասենյակում որապահը հաղորդեց։

— Զեր նշանածն ե յեկել տեսակցության։

Իգնատը նշանած չուներ։

«Դա ի՞նչ բան ե։ Ի՞նչ նշանած, կարելի յե կուսակցությունն ե ուղարկել...—խելք եր մաշում Իգնատը։—Պրիլուկիում ունեցած «ծնողների» նման չլինի»...»

Իգնատն որապահի հետեից մտավ գրասենյակի կողքի սենյակը։ Արագ վոտքի կանգնեց մի աղջիկ, վոր նստած եր բազմոցին։ Իգնատը նրան վոչ մի անգամ չեր տեսած։ Կլիներ մոտ տասնեութը տարեկան։

Միթե ընդհատակյա աշխատողներից ե։ Մարմնով վտիտ, աղայի յե նման։ Ժպիտը լարված ե... Նայում ե անթարթ և լուրջ հայացքով։

Արագ մոտեցավ Իգնատին, հուզմունքից կարմրեց, ամաչկոտությամբ գրկեց նրան։ Նրա գլուխն Իգնատի ուսերին չեր հասնում։ Նա շշնջաց։

— Վառյան եմ...

Ա,ժմ Իգնատը գոնե իմացավ, թե ինչպես եր կոչելու իր նշանածին։

Նա ժպտաց, սեղմեց աղջկա ձեռքը։

— Բարե, Վառյուշա։

Վառյան, նրա հետ գրկախառնվելով, շշնջաց։

— Պատրաստվում ենք ձեզ փախցնելու։ Խնդրեցեք, վոր ձեզ թույլ տան դատարանի գրասենյակում ձեր գործը կարդալու... Մանրամանությունները տոմսակում... Որապահը մեջ մտավ։

— Ինձ, պարոնայք, անհարմար գրության մեջ միշտ գնի։ Փոփսալն արգելված ե։

Շալաշովը ու Վառյան նստեցին բազմոցին։ Իգնատը հարց ու փորձ եր անում «նշանածին» գոյություն չունեցող ազգականների մասին։ Միքանի ըոսե՝ դեսից-գենից խոսեցին։ Վառյան տեղից յելավ։

Նա ամուր սեղմեց Շալաշովի ձեռքը, ու Շալաշովը մի պինդ, փոքրիկ գնդիկ զգաց ձեռքում։ Իր «նշանածի» այս սվերը նա ամուր սեղմեց բոռնցքում, գրպանից հանեց թաշկինակը, յերեսը սրբեց..., ու գնդիկն արդեն բերանումն եր։

— Յես տեսակցության կգամ յերկուշաբթի, ընդհանուր սենյակում..

Ժպտաց, Գնաց։ Դուն մոտ որապահի ձեռքը թղթագրամ զրեց...

Ցերք Իգնատի հետևից կամերայի դուռն աղմուկով փակվեց, նա մեջքը դարձրեց դեպի դուռը և բերանից հանեց «նշանածի նվերը»։

Թղթե գնդիկ եր այն։ Մի կտոր պինդ անջրանցիկ մագաղաթի մեջ նա գտավ պապիրոսի թղթի վրա գրած մի

շատ փոքրիկ տոմս, վերևում, շատ բարակ գծերով, մի փոքրիկ պլան եր գծագրված:

Պլանի տակ շատ մանր տառերով գրված եր.

«Խաչով նօված ե գրասենյակիր, յերկու խաչով—արտաքինոցը, վորը յերգու փոքր կ բաժանմու ք ունի Ո՞չ կողմի բաժանմունում կիթնի զգնոսը յեվ գ ի՞ւր: Այդ բաժանմ ունքը ներսից կողպած կիթնի, բայ միջնորմի բարակ տախտակը կտրված յեվ աւենայ՝ խնամք վ իր տեղոր դրված: Սլաքները զույց են տալիս դուրս տանող նախապահը: Որք յեվ ժամը—տեսահց որյան ժամանակ: Որք ցույց տվող ազգանունը՝ ողային համբուլյն ե, ուեկ մատուրը—յերկուաբրի, յերկուապիր—յերեխաբրը յիշայ ն: Ժամանքի ծածկագիրը— Զ. Բ. Ա. Ավագանի անուն, 10. Բ. Բ. Ավագ յեվ այլն»

Տոմսակի վերջում գրված եր գաղտնի հանդիպավայրի հասցեն:

Իգնատը կարդաց վերջացրեց ու ծիծաղեց. այ քեզ ողային յերեսակայություններ:

Միթե թույլ կտան նրան դատարանի գրասենյակը զնալու: Ախար Պետերբուրգի ընկերներին վհնց ե հաջող վելու դատարանի արտաքնոցը հագուստ և գրիմ տանելը, անցք բանալու համար միջնորմը սղոցելը: Յեվ վերջապես ուղեկցող զինվորները կթողնեն իգնատին մենակ արտաք նոց մտնելու:

Վոչ, ուղղակի անհավատալի բան ե, վոր նրա փախուստը հաջողվի... Որը յերեկով: Լրտեսներով վխտացող մայրաքաքում: Բայց և ախարես ինչնու չփորձել:

Իգնատն անգիր արեց պլանը և տոմսակի մեջ գըրվածը, ապա յերեկու թղթի կտորներն ել կերավ: Այսուհետեւ դուռը թակեց և վերակացուից թանաք ու գրիչ պահանջեց՝ խնդիրը գրելու համար:

«ԶԿԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆՆ ԵԼ ԶԿԱ»

Նույն որը նա Պետերբուրգի դատախազի անունով ինդիրք ե տալիս, թե դատի տակ դանվող Շալաշովը հրաժարվում ե փաստաբանի պաշտպանությունից և դատարանում ինքն ե իրեն պաշտպանելու, ուստի և թույլտվու-

թյուն ե խնդրում գնալ շրջանային դատարանը՝ իր գործը կարգալու համար:

Յերբորդ որն առավոտյան Իգնատն ստանում ե պատասխան, թե մեղաղրյալ Շալաշովին թույլատրվում ե յերեքշարթի և ուրբաթ որերն, ուղեկցությամբ պահակի, դատաստանատուն գնալ ժամը 12-ից մինչև 2-ը...

Յերկուշաբթի յեւ Տեսակցության սենյակը յերկու մասի յեւ բաժանված, ծայրից ծայր անցնող յերկարգ խիտ վանդակացանցով: Վանդակացանցի մեկ կողմում կանգնած են կալանավորները, մյուս կողմում—տեսակցության համար դրսից յեկածները: Վանդակացանցերի մեջտեղում լայն անցք ե թողնված, ուր անցուղաձ են անում ժամապահները: Բոլորը միաժամանակ են ճշում, վորպեսզի իրենց ձայնով ծածկեն հարեւանների աղմուկն ու հեռվից լսելի լինեն, լաց են լինում, ծիծաղում են: Վառյայի բարձր ձայնով ասածների հազիվ կեսն ե ըմբռնում իգնատը:

Նա յերկու մատներն ե մոտեցնում շրթունքներին, վորպես թե ողային համբուլյուս ուղարկում նրան:

Վառյան ժպտալով իր յերկու մատն ե համբուլյում: Դա ազդանշանն ե—յերեքշաբթի:

Յերեքշաբթին եղուց ե, բարեներս Դմիտրիյին, Դմիտրիյին, —կանչում ե իգնատը:*

Այս ել ազդանշանն ե—ժամը մեկին: Վառյան լսեց, գլխով արեց:

Գնաց...
Իգնատն ամբողջ գիշերը կուրեց կողք եր շուռ գալիս: Կարծես բարձն ու վերմակն այրում եյին նրան: Թերես այս վերջին գիշերն ե, վոր նա անց ե կացնում «պրեդ-վարիլկայում»—նախնական բանտում...

Առավոտ ե: Նա անվերջ հետ ու առաջ ե քայլում կամերայում: Նրան թվում ե, թե սպասելուն վերջ չի լինելու:

Ամեն բան վերջ ունի: Իգնատի հետեւց գալիս ե ուղեկցող զինվորն ու ասում ե՝ «դատաստանատուն»...

* Ռուսերեն այբուբենում «Ճ» (Շ) տառը 5-րդ նշանագիրն ե (ծ. թ.)

Իգնատը նստած ե դատախազի գրասենյակում։ Նա դանդաղ շարժումներով թերթում ե իր գործը։ Բայց նրա աչքերը շաղվում են, տողերն իրար են խառնվում։ Իգնատը վոչ մի բառ չի կարողանում հասկանալ։ Կոկորդը չորանում ե։ Աչքն անդադար դարձնում ե պատի մեծ ժամացույցին, վոր կայսերական արձիվ ե կրում։ Անիծյալ ոլաքները չեն շարժվում։

Մի կարճիկ, վտիտ մարմնով աստիճանավոր պտուապտուա ե գալիս սեղանի շուրջը, հսկում ե, վոր մեղադրյալը վորեն թուղթ չգողանա կամ չփշացնի։ Զինվորն սպասում ե դուան հետեւում։

Անա ժամացույցի սլաքը կանգնեց և թվանշանի գիմաց, ըոպեներ ցույց տվող սլաքը մոտենում ե XII-ին։

Իգնատը վեր ե կենում տեղից, հուզմունքից գործը գցում ե գետին։ Թույլտվություն ե խնդրում արտաքնոց գնալու։

Աստիճանավորը կանչում ե կանվոյին։ Զինվորը տանում ե իգնատին միջանցքով ու նստում ե արտաքնոցի դիմաց դրված նստարանին...։

Իգնատը քաշում ե արտաքնոցի աջ բաժանմունքի դուռը։

Կողպ ե։ «Ամեն բան կարգի յե»։


Մոնում ե ձախ բաժանմունքը։ Դուան կեռը դցել այսպես։

Դե շնուտ, շնուտ, բարակ տախտակը։ Մատները դողում են։ Ճոճուում ե, ախ դու անիծյալ։ Յեղավ, տեղահան արեց, անցավ աջ կողմի բաժանմունքը։

Շնուտ, շնուտ։ Քուրքը, կեղծամը։ Այսպես։ Փոքրիկ հայելի, այդ լավ ե... Վայ... Բայց վոչ, ակնոցները չեն չարդվել... Շնուտ, շնուտ։ Գոդակը, մորուքը... Բայց ուր ե սոսինձը։ Թու, ինչու յեն գրպանը դրել։ Զե վոր կարող եր թափվել։

Մորուքն ու բեխերը սոսնձով կպցրեց, ակնոցները գրեց քթին։ Փոքրիկ հայելին ձեռքին կանգնել ե դուան առաջ։ Նայում, հուզվում ե։

«Հապա վոր ձանաչի»։



ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ՏՊԱՐԱՆԸ

Հայելու միջից նրան նայում ե յերկար մորուքով գյուղական մի գրադիր՝ յերկաթե շրջանակով ակնոց դրած աչքերին:

«Չե, ի՞արկե չի ճանաչի: Յես հո մյուս դռնից եմ դուրս գալիս: Ճանաչելը դժվար ե»...

Յերեք մատներով բոնել ե նա դռան կեռլ: Սարսափելի յե բանալը: Բայց պետք ե: Շնուտ... Վայ... Վերադարձավ, բարակ տախտակը տեղը դրեց... Դե, համարձակ:

Համբերատար պահակը նստել եր արտաքնոցի առաջ, նստարոնի վրա: Նա վոչ մի ուշադրություն չի դարձնում քուրքը հագած մարդուն, վորը դուրս գալով արտաքնոցի աջ բաժանմունքից, յերերվող քայլվածքով անցնում ե նրա մոտով:

«Ճանաչեց, ճանաչեց... Ե՛լ ավելի դանդաղ, դանդաղ քայլել, թե չե զլիի կընկնի, վոր փախստական ե... դանդ...» Հետևից պահակի ձայնը.

— Հեյ, ընդոք:

Իգնատի աչքերը մթնեցին: Հետ նայեց:

— Լուցկի չունեք, բեռի, մի պապիրոս կպցնեմ:

«Թու: Ե՞ն, փառք աստծու»:

Նա խառնշտորեց գրպանները, ապա լուռումունջ ձեռքերը պարզեց, այսինքն թե ուրախությամբ կտար, բայց չկա:

— «Զկային դատաստանն ել չկա», — ասաց պահակն ու յերեսը դարձրեց...

Իգնատն արագ արագ (դանդաղ գնալն անկարելի յեր) առաջ եր գնում միջանցքով:

««Զկային» դատաստանն ել չկա... դատաստանն ել չկա... — կընում եր նա ինքն իրեն: — Ուղիղ ճամբով, ապա յերկու դարձ դեպի ձախ, հետո դեպի աջ, նորից դեպի աջ... վերհիշում եր նա պլանի ոլաքները: — Դատաստանն ել չկա»:

Նա փողոց դուրս յեկավ: Նրան հետապնդող չկար: Մաղում եր հոկտեմբերյան անձրես:

«Համ ազատ եմ, համ ել դատաստան չկա...»

Նա շտապ գնում եր կտեյնայա փողոցով դեպի կամուրջը:

«Հե՞ Յ, ԿՏԱՎ ԾԱԽՈՂ»

Շալաշով իգնատը դանդաղ քայլերով, ահազին մի կապոց կտափեղենը շալակին, գնում եր խուլ փողոցներով: Թեսի տակ բոնած ուներ ելի միքանի ավելի փոքր կապոցներ, խայտաբղետ չիթ, քաթան, պարուսին: Յերբեմն նրան պատուհաններից կանչում եյին.

— Հեյ, կտավ ծախող:

Իգնատ Շալաշովն, առանց յերեսը շուռ տալու, եր ճանապարհն եր գնում:

— Տո ապնաշ, չես լսում, քեզ են կանչում:

Շալաշովն անգիտանալով գլուխն եր շարժում, ականջները ցույց տալիս:

«Խուլ եմ, բան չեմ լսում»:

Ու շարունակում եր առաջ գնալ:

Նրան կանգնեցնում ե մի պառավ տիկին և նշաններով հասկացնում, վոր ուզում ե կտավ գնել: Իգնատն ել ճարպը կորեն բաց ե անում չիթն ու պարուսինը և սկսում ե գովաբանել ապրանքը:

— Հրաշալի ապրանք ե, գինն ել եժան: Ի՞նչքան կհրամայեք չափեմ:

Պառավը բարկանում ու մատով կտավն ե ցույց տալիս:

— Չե, եղ չի, այ քառ. յես կտավ եմ ուզում ե վոչ թե չիթ:

Իգնատը համառորեն աշխատում եւ պառավ տիկնոջ վղին զոռով փաթաթել չիթն ու պարուսինը։ Վերջապես պառավը թքեց ու հեռացավ, բարկությամբ հայնոյելով խուլ ու բթամիտ ծախողին։

Անկյուններից մեկում Շալաշովին կանգնեցրեց մի նպարավաճառ, գնեց չիթն ու քաթանը և ապա կպավ նրան, թե — կտավդ ծախսիր։

— Ծախված եւ, տանում եմ պատվիրողին, — պատասխանեց Իգնատը, շտապ-շտապ հավաքելով կտորեղենը։

Նպարավաճառը պնդերես մարդ եր։ Իգնատը, տալով նրան յերեք արշին կտավ, բարկացած ասաց. «մնացածը ծախված ե», և արագությամբ հեռացավ։

Նա կտրեց ու անցավ մի դատարկ հրապարակով։ Դիմացը տեսավ տոնական զգեստ հագած մի ամբոխ, վորը դար ու փոսերով սարն եր բարձրանում։

Յերեկոյան, ժամը 6. Երին մոտ, քաղաքից ու բանվորական թաղերից հազարավոր ժողովուրդ եր հավաքվում քաղաքի ծայրամասում գտնվող՝ բուռնցքակոիվ դիտելու։

Դույնզգույն կիսաշրջան կազմած՝ մարդիկ նստուել եյին ձորի զառիվայր լանջերին, վորոնք կարծես մի ահազին կրկեսի նստարաններ լինեյին։ Ներքեսում, մեյդանի մեջ, հաղթանդամ մսագործներ, գործակատարներ ու կառապաններ, հազի շորերը գետնին թափած ու թևերը քշտած, կատաղությամբ իրար կողքերն եյին ջարդում ու աչքի տակերը կապտացնում։

Շալաշովը մեկ ել տեսավ վերեսում մի խումբ մարդիկ իրենց ուսերին են վերցրել կարճահասակ ու գլուխը բաց մի մարդու, վորը ձեռքում բռնած գլխարկն այս ու այն կողմ ե ճոճում։ Այս մարդը մի բան գոռաց. նրա շուրջը գտնվողները նույնպես գոռգոռացին։ Կովողները կանգ առան։ Բոլորը յերեսները դարձրին դեպի գլուխը բաց մարդը, վորը բլրի գագաթին, մյուսների ուսերի վրայից գոռում ու ձեռքերն եր շարժում։ Նա քաղաքի կողմն եր ցուց տալիս։ Վորաեղից-վոր ե՝ կարմիր դրոշ և պլակատներ մեջտեղ յեկան։ Վերեկի ամբոխը, մարզուն ուսերին առած, ուղղվեց դեպի այն կողմը, ուր նա ձեռքով ցույց եր տալիս։

Շալաշովի ականջին «Մարսելյեզի» յերգը հասավ։ Փողոցով, նրա կողքով, մարդիկ վազում եյին այն կողմը, վորտեղից յերգի ձայնն եր գալիս։ Վազելով անցան նաև զլուխները կորցրած միքանի վոստիկաններ։ Նրանք անդադար սուլում եյին, բայց ուշադրություն դարձնող չկար։

ՑՈՒՅՑ

Իգնատը քայլում եր կապոցի ծանրությունից կոացած։ Նա հեալով ճակատի ու վզի քրտինքն եր սրբում։ Շուտ-շուտ կանգ առնելին՝ ականջ եր գնում և ծանր ու թեթև անում, թե ինչ ճամբով գնա, վոր իրեն անհանգըտացնող չլինի։

Չնայած, վոր նա գնում եր վոլորապտույտ ճանապահներով և ընտրում եր ամենախոռլ փողոցները, բայց և այնպես անկյուններից մեկում նա դեմ առավ ամբոխի։ Ու քարացած մնաց...

Հարյուրավոր մարդկանց գլխավերում աշնանային հողմից ծածանվում եյին կարմիր դրոշներ և լոզունգներ այսպիսի մակագրությամբ։

«Ութժամյա բանվորական որ»։

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

«Ընկերներ, միացեք գործադուլին»։

Կուռ շարքերով արագ ընթանում եյին սալահատակով վատ հագնված տղամարդիկ ու կանալք՝ գունատ, հոգնած դեմքերով։ Նրանց կողքին, մայթերի վրայով, վազվզում եյին շրջակա տների յերեխանները, զնում եյին ուսանոլներ, ծառաններ, գոնապաններ. բոլոր տներից դուրս ելին թափում զարմացած ու սարսափած բնակիչները։

Հանկարծ լսվեց.

— Վոստիկանություննը։

Սալահատակով դեպի ամբոխն եյին վազում վոստիկանները՝ թրերը կողքերին բռնած։

Շարքերի միջից մի մարդ գոռաց.

— Կորչի ինքնակալությունը։

Ամբոխն սկսեց շվացնել ու գոռգոռալ.

— Կորչի թագավորը, կորչի վոստիկանությունը:
Վոստիկանների գլխին կարկտի պես բարեր տեղացին
շարքերից: Վոստիկանները կանդ առան: Նրանցից մեկը
ձեռք զցեց ատրճանակի պատյանին, բայց հետո միտքը
փոխեց, բաց թողեց:

Գլուխները կորցրած վոստիկանները տեղները մնա-
ցած, վոտքերը գետնին եյխն խոսում, իրար մեջ խոսում:

Նրբափողոցից դուրս վագեց բարձրահասակ, սև բեխա-
վոր պիրիստավը: Բոռնցըն ողի մեջ շարժելով նա կատա-
ղաբար հայոյեց շշկված վոստիկաններին և դոռալով վա-
գեց դեպի ամբոխը:

— Յրվեք:

Քարի մի հարվածով պրիստավի գլխից թռավ նրա
համագետատային գլխարկը:

Պրիստավը, գլուխը բաց, կարմրած, շփոթված նայեց
վոստիկաններին ու անհայտացավ դարպասի հետեւ:

Իգնատը շարունակում եր ճանապարհ՝ շարժվող ամ-
բոխի հակառակ ուղղությամբ: Հանկարծ նա նկատեց, վոր
միքանի մարդ շարքերի մեջ խրվելով, դես ու դեն են վագ-
վզում ու կավիճ քսում մարդկանց մեջքերին: Իգնատը
կռահեց, վոր զրանք վոստիկանական լրտեսներն են և
նշան են դնում պարագլուխներին, վորպեսզի հետո, յերբ
ամբոխը ցրվի, մեկ-մեկ բռնեն նրանց:

Իգնատը բարձր ճայնով դոռաց.

— Տեսեք, լրտեսները մեջքներիդ կավիճ են քսում:
Յեվ նախքան լրտեսները կարողանային նկատել նրան
ու հետապնդել, նա զցեց իրեն նրբափողոցը:

Յերկար պտույտ անելուց հետո, նա հոգնած ու քրտնած
մտավ մի արհեստանոց, վորն այսպիսի ցուցանակ ուներ:

ԱՐԱՆՖՆԵՐԻ ԾՐԱՐՈՒՄ ՅԵՎ ԱՌԱՋՈՒՄ Ի. ՍԻԴՐՈՎ

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՎԵՐՆԵՐ

Արհեստանոցում մուրճերի թխթխկոց ու սղոցների խըռ-
խոսոց եր տիրում:

Առանց բարեկելու Շալաշովն անցավ արհեստանոցի հե-
տեւմ գտնվող մութ սենյակը: Այստեղ զրված եյխն տա-
կառներ, արկղներ, դես դեն տախտակներ եյխն ընկած, ու
նավթի հոտ եր գալիս: Շալաշովը ցած զցեց շալակի կա-
պոցը ու ծանր շունչ քաշելով նստեց տաքուրետին: Սեն-
յակ մտան արհեստանոցի տերն ու մի բանվոր: Տերն աչ-
քով չափեց կապոցի մեծությունը, կարեկցաբար նայեց
իգնատին, հետո հարցը եց:

— Ցույցը տեսամբ:

Իգնատը գլխով զրական նշան արեց:
Բանվորը ծալապատիկ նստեց ու սկսեց բաց անել կր-
տավի փաթեթը:

Փաթեթի միջից բրոշյուրներ ու թռուցիկներ թափվե-
ցին:

ԳՈՒԴՐՈՒ*

Տերն ասաց.

— Առավոտյան կոմիտաջիկն տեսա... Այսոր քաղաքում
քիչ զորք կա. կայազորն ինչ վոր հոբելյան ե տոնում, և
զինվորներին տուն են արձակել: Մեր բախտից ել հենց
այսոր բուռնցքակովի վայրը շատ բանվոր եր հավաքված,
դրա համար ել վորոշեցինք ցույց կազմակերպել...

Բանվորն սկսեց բրոշյուրներն ու թռուցիկները ծրա-
րել փոքրիկ արկղների մեջ:

«Տերը» հանեց զրպանից մի թղթի կտոր ու ավեց Շա-
լաշովին.

— Լենայի համար ե... կոմիտեն գործադուլավորնե-
րին ուղղված մի կոչ ե կազմել: Թողի իսկույն ևեթ տպա-
գրեն:

Շալաշովը վերցը ծայրեծայր մանր տառերով թանա-
քով զրված թերթը, վորի գլխին մատիտով զրված եր՝

* Գուդրուն - հանքածյութ, վոր գործածվում ե ասֆալտի համար: (Մ. թ.)

Շալաշովն սկսեց կարդալ թերթիկը:

Այդ սիջոցին, ծրաբող բանվորը մեծ շերեփով հանում եր տակառից նավթահոտ ունեցող թանձր կուպրը և քսում նրանով արկղի բոլոր կողմերին. արկղն ընդունում եր բարացած քառակուսու մի ձեւ:

Շալաշովը թերթը ծալեց ու դրեց գրամնը: Հոգնածությունից ճակուտալով, նա վեր կացավ տեղից ու սկսեց դիտել ծրաբողի աշխատանքը:

Ծրաբողը, կպրի քառակուսու կտորը զնելով մեծ արկղի մեջ, ծածկում ու մեխում եր: Մեխելուց հետո նա արկղը քաշեց-տարավ արհեստանոց:

Շալաշովն ու «տերը» դանդաղ քայլով դուրս յեկան նրա հետեից: Շալաշովն, արհեստանոցի մեջտեղում կանգնած, նայում եր, թե ինչպես բանվորն արկղի վրա սկսերկով գրում եր.

«ԳՈՒԳՐՈՆ»

Հետո նա գուրս յեկավ արհեստանոցից: Այս արհեստանոցը ծառայում եր վորպես սոցիալ-դեմոկրատների հարավային կազմակերպության տրանսպորտային բյուրո:

Բեռնատար շոգենավերն որական տամնակ տոնն գուղըն եյին փոխադրում Սև ծովով, կասպից ծովով և Վոլգայով: Զանազան առևտրական ֆիրմաների կողմից ուղարկվող հարյուրավոր արկղների կողքին ամսե-ամիս փոխադրվում եյին սոցիալ զեմոկրատական գրականություն պարունակող արկղները:

Ամիսների ընթացքում գուգրոնը ծառայում եր ոռուսական հեղափոխությանը: Տրանսպորտի բյուրոյի գործակալ ները մյուս քաղաքներում փոստով ստանում եյին առաքված ապրանքի բեռնագրերը: Այդ բեռնագրերով նրանք ստանում եյին «գուգրոնը», բաց անում արկղները և բրոշյուրներն ու թուցիկները տարածում ընդհատակյա աշխատողների միջև:

Ահա յերկու ամիս ե արդեն, ինչ Շալաշովը վերադարձել ե ընդհատակյա փոստատարի իր սիրած աշխատանքին: Ինչպես և կալանավորվելուց առաջ, նա շը ջում եր հարավային և միջին Ռուսաստանի քաղաքները, կապ եր պահպանում կուսակցական կոմիտեների միջև ու տեղից-տեղ փոխադրում անլեգալ գրականություն:

Կենտրոնական կոմիտեն, յերեք շաբաթ առաջ, նրան ուղարկել եր հարավային մի մեծ քաղաք, ուր գտնվում եր Ռուսաստանի խոշորագույն ընդհատակյա տպարանը: Շատ ժամանակ չե, ինչ ճերբակավել եր տեղական ընդհատակյա այն աշխատակիցը, վորը տպարանից գրականություն եր տեղակոխում: Յեվ ահա նրա փոխարեն կենտրոնական կոմիտեն ուղարկեց փորձառու «հեղափոխության փոստատարին»:

Փողոցներում կտագ վաճառողի անվան տակ Շալաշովն որը յերեք անգամ տպարանից գրականություն եր փոխադրում տրանսպորտային բյուրոն:

Նրա գալուց միքանի որ անցած, քաղաքում ընդհանուր գործադրու սկսվեց: Գործադրուլավորների համար տպարանն սկսեց հարյուրավոր որինակներով կոչեր բաց թողնել:

Իգնատի համար մի նոր աշխատանք ել ավելացավ՝ տարածել այդ կոչերը:

Յերբ Շալաշովը վերադառն քաղաքի ծայրամասը, փողոցների անկյուններին արդեն վառվում եյին նավթի լապտերները: Նրանց թրթուացող լույսի մեջ թվում եր, թե ծայրամասի ցածլիկ, ճերմակ տնակները յերերվում են՝ թղթից շինածի նման:

Իգնատը մոտեցավ կանաչ ներկած գեղկերով մի փայտաշեն տան ու դուռը ծեծեց: Փոքր շղթայով ողակ-փող դուռը կիսաբաց արեց հասակն առած մի կիս: Նա ձանաչեց Իգնատին, ներս թողեց ու դուռը սողնակով կողպեց: Նրանք անցան բոլոր սենյակները և մտան ընդդրամակ ուղանատունը: Թափանցող նայվածքով մորուքավոր մի մարդ, վոր նստած եր սեղանի մոտ, վեր կացավ:

Իգնատը բարեց ու գրպանից հանեց «Լենալին» մակագրությունը կրող թերթը։ Մարդը վերցրեց թերթը, կարդաց։

Ապա մոտեցավ փայտե դոլարին և վոտքով ուժեղ ծեծեց հատակը։

Մի բոպեյից դոլարի հատակն առանց աղմուկի բարձրացավ։ Բացված մութ խորշից խոնավության հոտ փշեց։ Ներքեւում կանգնած եր մի մարդ, ձեռքում լամպը բարձր բռնած։

Իգնատը և մորուքավորը ցած իջան և իրենց հետեւից խորշի բերանը ծածկեցին հոդակապով ամրացած բետոնե ծանր խուփով։

Վերեւում սենյակն ընդունեց ելի այն տեսքը, վոր ուներ մի բոպե առաջ։ Խուփին այնպես պինդ եր նստել հատակի մեջ, վոր վոչ մի արանք չեր յերեւում։

Իգնատն ու իր ուղեկիցը խոնավ մութ միջանցքից անցան անդուռ ու անպատուհան մի նեղ սենյակ։ Այստեղ եյին դրված տառարկղներն ու տպագրող մեքենան։ Այստեղ լամպերի լուսով աշխատում եյին վեց գրաշար։

«Լենա»-ն կին չեր, դա ընդհատակյա տպարանի անունն եր։ Նրա զեկավարն ընկեր Սերգեյն եր՝ Իգնատի ուղեկիցը։


ՀԱՄԱՌՈՒԻՍՍՍԱՆՑԱՆ ՓՈՒՌԸ

Սերգեյն ապրում եր կեղծ պասպորտով՝ ապահովագրական ընկերության գործակալ Սեմյոնովի անունով։ Այս անունով ել նա գարձել եր մի փոքր տնակ։

Սեղանատան պատին կպած եր հարեան տան ձիանոցը։ Սերգեյը, վոր միքանի ամիս առաջ տպարանի համար շենք եր փնտուում, հենց այդ ձիանոցը վարձեց հարեան թաթարից։

Սերգեյը և իր ընդհատակյա ընկերները գիշերը սեղանատան պատի մեջ մի ծակ բաց արին։

Նրանք տեսան, վոր սեղանատանը կպած, դուռ ու պատուհան չունեցող շենքն ընդհանուր ձիանոցից բաժանված և քարե հաստ պատով։



Մի ժամանակ դա ձիապանի խուցն եւ յեղած, վորի դուռը բացվելիս եւ յեղել զեպի բակը. Բայց շատ տարի առաջ նախկին տերը քարով շարել ու սվաղել եւ դուռը: Հետո տունը ծախել եւ ազգականին, իսկ ինքը հեռացել քաղաքից. այժմ այդ խուցը վոչվոք չի հիշում:

Ընդհատակյա ընկերները վճռեցին հենց այդտեղ ել սպարան հաստատել ու նույն գիշերն այնտեղ փոխադրեցին մեքենան, տառարկղները և սեղանները: Պատի ծակն ել մինչև առավոտ լցրին ու սվաղեցին:

Հաջորդ գիշերները նրանք սեղանատան հատակի մեջ մի քառակուսի ծակ բաց արին ու դռնակ սարքեցին, վորը տակի կողմից բետոնեցին՝ նրան վորոշ ծանրություն տալու նպատակով. ապա դռնակը հոդակապով հատակին ամրացրին ու սեղանատնից տպարան տանող ստորերկյա մի անցք փորեցին:

Այսպիս սարքվեց սոցիալ-դեմոկրատների ամենամեծ տպարանը հարավում: Ամբողջ յերկրին գրականություն մատակարարողն այս տպարանն եր: Կուսակցական կոմիտեներում ընկերները նրան հանաքով կոչում ելին «Համառուսաստանյան փուռ», վորն ամբողջ Ռուսաստանի համար հեղափոխական կերակուրներ եր յեփում:

Ահա թե ինչպիսի կարգեր եյին սահմանված ընդհատակյա տպարանում:

Ընդհատակյա ընկերները վեր ելին կենում յոթ և կես ժամին: Կես ժամում նրանք հագնվում, լվացվում ու տպարան եյին տանում իրենց անկողիններն ու բոլոր իրերը:

Աշխատանքն սկսվում եր ուղիղ ժամը ութին: Ժամը տասին Սերգեյը ծեծում եր դոլարի հատակը և թեյի կանչում ընկերներին: Թեյի համար հատկացված եր ուղիղ տասնհինգ րոպե: Գրաշարները թեյից հետո նորից իջնում եյին տպարան ու աշխատում այնտեղ մինչև ժամը մեկը:

Ժամը մեկից մինչև յերկուսը ճաշի ընդմիջումն եր:

Ուղիղ ժամը յերկուսին նորից իջնում ելին ընդհատակյա տպարանն, ուր աշխատանքը շարունակվում եր մինչև յոթ և կես ժամը: Գնալուց առաջ դեռ պետք եր

մաքուր լվանալ տառերը, ավելել ու հավաքել աղբը, սըրբել ու յուղել մեքենան:

Յերեկոյան ժամը ութին թեյի եյին նստում: Թեյից հետո կարգում եյին բարձրածայն ու զրուցում: Տասներկուսին պառկում եյին բնելու և լույսերը հանգնում:

Յեթե գիշերը զանգակը հնչեր կամ մի աղմուկ լսվեր, ընկեր Սերգեյը, վորը շատ զգաստ քնող եր, տեղից թըռչում և արթնացնում եր բոլոր ընդհատակյա ընկերներին:

Նա իսկույն բաց եր անում տպարանի մուտքը, վառում եր լամպը և ընկերների իրերն ու անկողինները տեղափոխում տպարան: Գրաշարներն շապառվ տպարան եյին իջնում ու խուփն իջեցնում:

Թե ցերեկը և թե գիշերը, գրաշարների տպարան իջնեց հետո, տան բոլոր սենյակներն, ինչպես հարկն ե, մաքրվում, կարգի եյին բերվում: Վոչվոք չեր կարող կարծեր, վոր այդ տանը, բացի Սերգեյից ու նրա կնոջից, ուրիշ մարդիկ ել են ապրում:

Ընդհատակյա ընկերներից վոչվոք իրավունք չուներ ցերեկով հեռանալ տնից: Տպարանում կազմված եր բացայցությունների վորոշ կարգացուցակ: Այդ կարգացուցակով յուրաքանչյուր ընդհատակյա ընկերոջ թույլ եր տրվում յերկու շաբաթը մի անգամ քաղաք գնալ յերեկոյան ժամը ութից մինչև տասնկմեկ ժամը:

Կատարյալ մի դժոխք եր տպարանը: Այնտեղ այնքան խոնավ եր և ողն այնքան խեղդում, վոր լամպերը հազիվ եյին վառվում: Սակայն մարդիկ անխափան աշխատում եյին որական տաս ժամ և նույնիսկ ավելի, յերբ շտապաշխատանք եր լինում:

Նրանք տպարանից լույս աշխարհք եյին դուրս գալիս կանաչած, ուռած դեմքով:

«Մենք ՀեղԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱԲՑՆԱԿՆ ԵՆՔ»

Թոռոցիկը տպագրում եյին մինչև ուշ գիշերը: Շալաշովը, Սերգեյը, նրա կինը և գրաշարներն աշխատելիս տպաքաք զրույց եյին անում:

Նրանք խոսում եյին այն մասին, վոր յեթե վոտքի յեխիյին վոչ թե մի ծայրամասի բանվորները, այլև ամբողջ քաղաքի, Ռուսաստանի բոլոր քաղաքների բանվորները, այն ժամանակ թագավորի և կապիտալիստների արյունությանը տապալված կլիներ:

Բայց դա շուտով չի լինի:

Դա կլինի այն ժամանակ, յերբ ոռւս բանվորները միահամուռ կերպով համախմբվեն համառուսաստանյան մարտական կուսակցության՝ սոցիալ-դեմոկրատիայի զուրջը:

Իսկ դրա համար դեռ պետք ե մինչև վերջը հասցնել կուսակցության կառուցման գործը:

Դրա համար ել իսկրայականները, ոռւս սոցիալ-դեմոկրատների առաջավոր ջոկատը, հրավիրում ե կուսակցության համառուսաստանյան համագումարը։ Ամբողջ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կոմիտեները համագումարում կմիանան մի կուսակցության մեջ։ Կուսակցությունը բովանդակ Ռուսաստանի բանվորներին կառաջնորդի դեպի վճռական պայքարը թագավորի և կապիտալիստների դեմ։

Սակայն սոցիալ-դեմոկրատները չեն կարողանա համախմբվել մարտական կուսակցության մեջ ու չեն կարողանա առաջնորդել բանվորներին դեպի վճռական պայքարը, յեթե նրանք իրենց շարքերում հանդուրժեն ոպորտունիստներին։

Ոպորտունիստները նրանք են, ովքեր ջանում են հետ պահել բանվորներին վճռական պայքարից իրենց կեղեքիշների դեմ, վսրով և դափանում են բանվորներին։ Ոպորտունիստներն իրականում դեմ են կուսակցության համախմբմանը, նրանք չեն ուզում զորեղ մարտական կուսակցություն ունենալ։

Հետեաբար, միանալու համար, սոցիալ-դեմոկրատները պետք ե անխնա կոիվ մղեն ոպորտունիստների դեմ թե համագումարից առաջ և թե համագումարում։

Ընդհատակյա մի յերիտասարդ ընկեր, տպագրական մուրով կեղոտության ձեռքերը սըրելով, տիրագին ասաց։

— Ահա ամբողջ որը շաբում ե թուրցիկներ ելի տը-

պում։ Այնինչ փողոցում կատարյալ կոիվ ե տեղի ունեցել... Շատ եմ ափսոսում, վոր ցույցին չեմ մասնակցել ։

— Զե, գու մասնակցել ես կովին, — Ժպտարով առարկեց Շալաշովը։

— Ինչո՞ւ յես ծաղրում ինձ, — Կշտամբելով ասաց գրաշաբը։

— Իսկի յել չեմ ծաղրում, — լրջորեն պատասխանեց Շալաշովը։ Իհարկե մասնակցել ես։ Մենք ամենքս ել մասնակցել ենք։ Ապա մի մտածիր։ Այսորվա ցույցը տեղի կունենար արդյոք, յեթե կոմիտեն գործարաններում ապիտադիա արած չլիներ։ Վհչ, աեղի չեր ունենա։ Իսկ այդ ապիտադիայում խոշոր դեր են կատարում մեր տպագրած բրոցյուրները, մեր թուրցիկները... Թո շաբած ու տպագրած ամեն մի թուրցիկն արագացնում ե հեղափոխությունը... Մենք — հեղափոխության զորաբանակն ենք։ Զորաբանակին հարկավոր են զորապետներ, զինվորներ, թըմբեկահարներ ու սապյորներ։ Նրանցից ամեն մեկն իր տեղն ունի, և առանց նրան գործն առաջ չի գնա... Մենք բոլորս ել, հարյուրավոր ու հազարավոր մարտիկներս հարկավոր ենք ու ամեն մեկս իր տեղում հեղափոխություն ենք պատրաստում։ Դու հեղափոխությունը պատրաստում ես տպագրիչ մեքենայի մոտ կանգնած, ուրիշները պատրաստում են գործարաններում, փողոցում՝ կարմիր զրոշակի տակ։ Վհրբան ուժերս պատում ե, պետք ե կովենք մեր տեղում, այսինքն այն տեղում, վորտեղ մեզ կանգնեցրել ե կուսակցությունը և բանվոր դասակարգը։

ՅԱՆԿԱՊԱՏԵՐ, ԴԲՆԱՊԱՆՆԵՐ ՅԵՎ ԱՖԻՇ ՓԱԿՑՆՈՂՆԵՐ

Ուշ գիշերով, մի մեծ խտիո կոնատակին, Շալաշովը դուրս յելավ տպարանից։ Նա հագուստը փօխել եր. չեսուշյե վերնաշաղիկ ու կապտագույն զինարկ եր հագած։

Յերբ սկսեց լուսանալ, Շալաշովը դեռ շարունակում եր մի տնից մյուսը վագել բանվորական թաղում։ Մոտենալով ցանկապատին, նա կոնատակից հանում եր միքանի թուրցիկ, նետրում եր ցանկապատի վրայով և արա-

գությամբ հարեան տանը մոտենում: Սյնտեղ նույնպես
բակն եր նետում թոռոցիկները և ելի շարունակում իր
ճանապարհը:

Փողոցում սկսեցին հատուկենոտ անցորդներ յերեալ:
Դոնապաններից վուանք արդեն բաց արին դարպաները
և ցախավելը ձեռքերին փողոց գուրս յեկան: Իգնատն
այնպես եր անցնում, վոր նրանց չհանդիպի, բայց իր
դործն ելի շարունակում եր:

Սկզբում դոնապանները նրա վրա ուշադրություն չեյին
դարձնում: Հետո նրանցից մեկը՝ ավելելը շարունակելով՝
ձայն տվեց.

— Հեյ, բարեկամ, ի՞նչ բանի յես դու եղտեղ:

Իգնատն, առանց պատասխան տալու, շարունակեց
ճամբան: Դոնապանը նայեց նրա հետեկից, հենվեց ավելի
կոթին ու նորից, ավելի բարձր կանչեց: Իգնատն արա-
գացրեց քայլերը: Դոնապանը հանեց սուլոցը, սուլեց և,
ավելի ուսին, ասես դըոշ եր տանում, գնաց Իգնատի հե-
տեկից:

Իգնատն սկսեց վագել: Դոնապանն ել հետեկից՝ «բոնե-
յեք» կանչելով: Յերկու դոնապան, ավելները նիդակի
պես ձեռքերում բռնած, արդեն վազ եյին տալիս՝ նրա
ճանապարհը կտրելու:

Իգնատը վազելիս՝ աչքերով չափեց փողոցը, դոնապան-
ներին. նա նետվեց զեպի հարեան ցանկապատը, կոնա-
տակի բեռը բակը նետեց ու ինքն ել ցանկապատի վրա-
յով թռավ բակը: Նա փափուկ ընկավ գետին՝ չսալահատակ-
ված ընդարձակ բակի մի հեռավոր անկյունում: Բակում
յերեւմ եյին կարեթներ, ցարուցրիվ թափված անիմներ:
Իգնատից միքանի քայլ հեռու ձգվում եր հարեան տան
ցած ցանկապատը: Բակի հեռավոր անկյունում դրված իր
բնից շունը դուրս վազեց բարձր հաջոցով և մոնչոցով:

Իգնատն արագորեն հավաքեց թոռոցիկները, վազեց
զեպի ցանկապատը, թոռոցիկներն այն կողմ նետեց, բըո-
նեց ցանկապատի դուրս պըծած տեղից, մազլցեց վեր ու
թռավ մյուս կողմը:

Նա վոտքի կանգնեց: Զեռքն ու ծնկները թեթևակի

մսասվել եյին՝ ուիպչելով բակի սալահատակի քարերին:
Դետնից վերցրեց զլիից թռած գլակը, զրեց զլիին... Նո-
րից հավաքեց թափթփված թոռոցիկները, զրեց կոնատա-
կը և ծանրաքալ դուրս յելավ գարպասից: Դարպասից
դուրս, շատ խմելուց քունը կորցրած դռնապանը, բանալի-
ները զնզգնդայնելով, տան զլիավոր դուռն եր բաց ա-
նում: Սա ապուշի նման խեթ-խեթ նայեց Իգնատին,
բան չասաց:

Իգնատը գնաց նեղ փողոցով ու անկյունի մոտ ճամ-
բան ծոեց: Հեռվում, դատարկ փողոցով, մի մարդ եր
շարժվում դանդաղաքայլ, մի ձեռքում փոքր զայլ, միուս
ձեռքում ինչ-վոր փաթթոց: Իգնատը ճանաչեց հայտար-
սություններ ու ափիշներ փակցնողն:

Փակցնողը միքիչ կոնծած եր: Նա գնում եր առանց
հետ նայելու, յերերալով ու քթի տակից կիսածայն յեր-
պելով: Անկյունում նա կանգ առավ, դույլը դրեց գետին,
բաց արեց ծալված աֆիշը և փակցրեց ցանկապատին:
Ու նորից առաջ զնաց:

Իգնատն անկյունին համսնելով, կանգ առավ ու կար-
ուց:

«Ռուդափափառ բանվոր-յեղայրներ.

Մեր հայրենիքի թեմալիները, ոտարազդիների ձեռքով կա-
տաված, գրդեցին ձեզ լին ձեր աւրատանքը, փաղաց գուրս
զալ ու անկարգություններ անել:

Ու ի՞նչ գուրս յեկավ:

Դուք, ձեր կանայք ու յերեխաները մատնած եք բանցքի
ու գրկաների, յեկ ձեզանից շատերին, յերեկի անկարգու-
թյունների ժամանակ, փոստի կանուրյունն սփափած յեղավ
կա լանափառի:

Գուծարաններն ու ֆարբիները, վարսե գործադուլավուների
պատճենով կանգ են առել, այնպիսի խոռոր վնասներ են
կրում, վար, յերե գույն բազում գործի չանցներ, երանք ել յե-
րեք չեն բացվի, ու գույն կմնաք անզորդ:

Խնայիցիք ձեր կանաց ու յերեխաներին: Ականջ դրեք
ուղղափառ ծողովդի իսկական բարեկամների խորհրդին:
Կիրակը, ՀԱԿԱԱԼԿՈՇՈՂԱԿԱՆ ԸՆԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ
ԲՈՐԵԿՐՈՆ ՀԱՅՐ ԱՄԲՐՈՍԻՈՆ ՔԱՐՈԶ Ե ԽՈՍՎԼՈՒ ԳՈՅ-
ԾՈՂՈՒԿԻ ՎՆՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Սկիզբը յերեկոյան 6 ժամերն:

Իգնատը քաշեց աֆիշի ծայրից: Սոսինձը դեռ չեր չուրացել, և Իգնատը հեշտությամբ պոկեց աֆիշը, իսկ նույն թաց տեղում փակցրեց իր թուոցիկը, վորն իսկույննեկթ կպավ ցանկապատին:

Թուոցիկում տպագրված եր.

«Ընկերնե՛ր.

Մենք զնում ենք այնպիսի նանապարհով, վորք բոլոր նրանք ըստ ամենի պահանջման պահի ազատագրում, դեպի վօշնացում այն հասարակակարգի, վորք նիմնված ե մարդու ձեռքով մարդուն նմանելու վրա:

Ա.Ռ.Ջ.ՉԻՆ ՅԵՎ.ՀՍԿԱՅԱԿԱՆ ՔԱՅԼԵՐՆ ԱՐՎԱԾ ԵՆ:

Երազործվեց այն, ինչի մասին միքանի տարի առաջ մենք չենք համարձակվում նույնիսկ յերազել:

Բանվոր դասակարգի կամենով կանգ առան քարածեն հրակաները: Լուցին գործարանային ժեները, չեն դդրդում մենքնաները, չեն վառվում գործարանների լույսերը:

Բանվորները փողոց դուրս յեկան կարմիր գուշակով, հերդափխստական յերգեր յերգելով: Նրանք բացահայտ ու համարձակ կերպով մարտի կանչեցին ինքնակալությանը յեվ պահանջեցին ուրժամշա աշխատանքային որ:


Ավելի հան մեկ ժամ փողոցը բանվորների ձեռքին եր: Վոստիկանու թյունը յեվ զորբերը, զուխները հորցրած, անվճռուական դիրք բանեցին

Զենարկաները տատանվում են յեվ ըուտով զիջումներ կանեն:

Ընկերնե՛ր, գործադուլի արագ հաջողուրյունը ցույց է տախս, թե ինչեր կարող են ձեռք բերել բանվորները, յերբ նրանց դեկավառում ե կաւակցական կազմակերպությունը:

Մեր ուժը մեր համախմբված յեվ կազմակերպված լիենու մեջն ե: Յերբ վողջ Ռուսաստանի բանվոր դասակարգն իր կուսակցության դեկավառությամբ միահամուռ կերպով դուրս գա ինքնակալության դեմ, հողմացրիվ կլինի «բռնակալության լուծք», վար պահպանվում ե զինվորների սվիններով:

Ընկերներ, ներկայում ամենավանդակու բանը—զգությունընը կացնե՞ն ե:



Այսոր առավոտ հաղոք են վերադառնում զարթուր. զինվար-
ներին նրաման է տրվելու «վերականգնել կարգը»:

Պրովահացիայի չենքարկվեք, նանցիս պահեցեք ձեզ: Հադ-
րանակն, անօւշ, մերն ե լինելու:

ՈՒԽԱՍՏԱՆ ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԳՈՐԱԿԱՆ
ԿՈՒԽԱՑՈՒԹՅԱՆ — ՅԱՆ ԿՈՄՄՏԵ»

Իգնատը դնաց փակցնողի հետքով, վորը կանգ եր առ-
նում փողոցների անկյունում ու մեծ ցանկապատերի մոտ
և մի-մի աֆիշ փակցնելով, առանց հետ նայելու, առաջ եր
շարժվում:

Իգնատն ամեն անգամ պոկում եր նրա փակցրած ա-
ֆիշը և տեղը իր թուոցիկն եր կացնում: Պոկած աֆիշ-
ները նա ծալում, ծոցն եր կոխում:

Այսպես նրանք շրջեցին ամբողջ թաղամասը: Արդեն
լուսացել եր: Ամեն տեղ դարպաններն արդեն բաց եյին,
բայց փողոցները դեռ ամայի եյին:

Ամբողջ թաղամասում Հակաալկոհոլական ընկերության
վոչ մի աֆիշ չեր մնացել: Իգնատի կոնատակում խշխշում
ելին ելի միքանի թուոցիկներ: Բայց արդեն շատ ուշ եր:
Նա շուռ յեկավ դեպի տուն—արհեստանոցը:

ՇՏՐԵՅՔԲՐԵԽԵՐԸ*

Արեն արդեն ծագել եր: Բաղաքի գործարանային ծայ-
րամտառում չեր լսվում վերամբարձ կռունկի դղբոցը և
դաղգյանների աղմուկն ու շառաչունը:

Ծուխ չեր յերեսում դործարանների հսկայական ծխնե-
լույզներից: Ֆարբիկների և գործարանների շենքերի շուր-
ջը ձայն-ձպտուն չեր լսվում և ամայի յեր:

Մեծ գործարանի փակ դարպասի առջև անշարժ կանգ-
նած եյին մի խումբ մարդիկ: Բանվորական պահակն եր
այդ: Պահակը նշանակված եր գործադուլային կոմիտեյի
կողմից, վորպեսզի շտրեյկբրեխերներին թուլ չտա աշխա-
տանքի անցնելու:

Փողոցի անկյունից յերեաց վաթսուն տարեկանի մոտ
մի ծեր մարդ: Նրա ձեռքում կար մի արկղ՝ գործիք-
ներով:

Պահակները լարեցին ուշադրությունը:

Իգնատը կանգ առավ, վոր տեսնի՝ ինչով ե վերջանում
գործը:

Քանի մոտենում, այնքան ավելի դանդաղեցնում եր
ծերուկն իր քայլերը: Նա շփոթված նայեց պահակներին:
Վերջապես նրանցից մեկը ձայն տվեց:

— Կանգնիր: Ուր ես զնում:

Ծերուկը կանգնեց, հանեց գլխարկը և անվճռական ձայ-
նով ասաց:

— Ուր պիտի զնամ: Աշխատելու...

— Ե, դու չգիտե՞ս, պատի, վոր հիմա գործադուլ ե,—
բարկացկոտ յեղանակով հարցըրեց պահակը:

— Գիտենալը գիտեմ: Ինչպես թե չգիտեմ,—շփոթված
պատասխանեց ծերուկը, զիխարկը պատացնելով ձեռքում:—
Ախար անգործ նստելուց զայլառ զնաց... Տասը տարեկան
հասակից անդադրում աշխատում եմ գործարանում: Ու
տես, վոր հիմի անգործ նստելուց ձանձրացա:

Պահակները ծիծաղեցին: Ծերուկն ել սկսեց ծիծաղել:

— Ուտելու բան ման ունե՞ս, — հարցըրեց պահակներից
մի ուրիշը:

— Այ, եստեղ ե, ունեմ: — Ծերուկը ցույց տվեց մի
փոքրիկ կապոց, ուր մի կտոր հաց կար:

— Դե վոր եղանակ ե, տուն զնա, ծերուկ, — ասաց պա-
հակը: — Յեկ մինչև գործադուլը չվերջանա, գործարանում
չերեւաս:

Ծերունին, սիրար կոտրած, գլուխը շարժեց և հառա-
չելով հետ դարձավ: Իգնատը ժպտալով զիտում եր այս
տեսարանը: Պահակը, յերբ նկատեց, վոր կապտագում գըլ-
խարկ դրած անցորդը կանգ առավ ու նայում ե, հպարտ-
հպարտ ասաց:

— Վերջին չորս որում սա առաջին շտրեյկբրեխերն ե:

* Շտրեյկբրեր—գործադուլը խախտող—դավաճան (Ծ. թ.)

«ՅԵ՞Ս: ՓԱԿՑՆՈՂ ԵՄ»

Իգնատին արագ քայլով գնում եր քաղաքի ծայրամասով: Նա գլուխը մեկ այս, մեկ այն կողմ եր դարձնում: Նրան այնպես թվաց, թե հեռվից ինչ-վոր համաշափ ու հետզիետե ուժեղացող մի աղմուկ ե լսվում: Դա նման եր ծովափնյա քարերի աղմուկին, յերբ ալիքները նրանց քըշում, ափ են հանում:

«Կազակներն են», մտածեց Իգնատը:

Նա կանգ առավ, ականջները սրեց, հետո դարձավ այն կողմը, վորտեղից աղմուկն եր լսվում:

Շուտով Իգնատը դուրս յեկավ հենց նույն փողոցը, վորտեղ դոնապաններն եյին նրա վրա հարձակվել: Նա դեռ քսան քայլ չեր արել, յերբ հանկարծ կանչ լսեց. «Այ են մարդը: Սա յեր, վոր թղթեր եր գցում»: Իգնատը ցնցվեց: Հետ նայեց: Յերկու կողմից դոնապանները նրա կողմն եյին վազում:

«Փախչել չեմ կարողանա», — իսկույն հասկացավ Իգնատը: «Ախար ինչ ճիմարություն արի յես»:

Աչքերը տենգորեն մի առարկայից մյուսն եր դարձնում: Ինչպես անի, վոր ազատվի... Դոնապաններն ավելի ու ավելի յեն մոտենում... Այն աղմուկն ել... Այժմ արդեն լավ լսվում եր սմբակների գոփյունը, վոր դեպի ծայրամասն ե վրա տալիս: Դոնապաններն ավելի յեն մոտենում... Հա, յեղավ:

Նա կուցավ, գետնից վերցրեց մի քար, հանեց ծոցից մացած բոլոր թուուցիկները, նրանց մեջ լավ փաթթեց քարը և բոլոր ուժով նետեց յերեքհարկանի տան կտուրը: Քարը դարձվեց կտրին ու կորավ մի կողմ:

Այժմ կարգն ափիշներինն ե: Մի քար ել վոր գըտնըվեր: Ահա: Նա կուցավ: Ե՞հ, ուշացավ:

Հինգ-վեց դոնապան պինդ բռնեցին նրա ոձիքն ու ձեռքերը: Նրանցից մեկի ձեռքում թերթերի մի կապոց կար, Իգնատը ճանաչեց իր թուուցիկները:

Դոնապանը ճշում եր.

— Սա, յերելի, յերեկվանների հետ խոսքը մեկ և ա-

րած: Արա թղթերն եյին, վոր բակում հավաքեցի: Քաշ տուր սրան ուղղակի վոստիկանատուն:

Իգնատն աշխատում եր պրօճնել նրանց ձեռքից: ձևանում եր զարմացած:

— Ախար ինչու համար, բարեկամներ: Ինչ թղթերը Յերեկի ինձ ուրիշից տեղ եք ընդունում:

Իսկ նրա կոնատակից թափվում եյին ափիշներ: Դըռնապաններից մեկն այդ նկատեց ու գոռաց:

— Ասում ես ինչ թղթեր: Բա սրանք ինչ են:

Նա սկսեց հավաքել: Իգնատն անվրդով պատասխանեց:

— Գրագետ ես: Կարդա:

Ձեռքում թուուցիկները բռնողը բաց արեց ափիշը և վանկերով կարդաց:

— Ես հո Հակամալկոնոլական բնկերության հայտարարությունն ե... Բա ուրեմն ով ես գու, — հարցրեց Իգնատին:

— Յես: Ափիշներ փակցնող եմ:

Դոնապանները կասկածով մեկ ափիշներին եյին նայում, մեկ Իգնատին:

— Բա են ինչ եր, վոր կտուրը նետեցիր:

Իգնատը դեմքը ծամածոելով ժպտաց:

— Կտորը: Զարմանալի մարդիկ եք: Քարը յես աափսուն զցեցի: Աստված վկա: Այ ես սուրբ խաչը վկա (յերեսը խաչ հանեց): Բա ինչեր պիտի զցեյի: Իհարկեքար եր: Տեղից ժաժ չգամ, թե սուտ եմ խոսում: Ուղեցի աղավնուն խփեմ, աստված վկա:

Դոնապաններն ըչփչացին իրենց մեջ: Հետո այն մեկը, վոր ափիշներ եր բռնած, բոլորը հետ տվեց Իգնատին, բացի մի հատից: այդ մի հատը, ով ե իմանում ինչու, նա հանգիստավոր կերպով ծալեց չորս մասի ու քուրքի թեք մեջ խոթեց, — և ապա ձեռքով արեց:

— Դե, գնա բանիդ:

Իգնատը փարժ ձեռքով խողովակած վոլորեց ափիշներն ու առաջ անցավ:

Գնալիս՝ նա հետ նայեց: Դոնապաններն ել նրա հետեվից չեյին նայում: Նրանք ականջներն ուրիշ բանի ելին սրել:

Ճիշ, սմբակների չքչքոց, ապա կրակոց, նորից կրակոց: Հեռվում, փողոցի անկյունից, արկղը ձեռքին մի ծերունի յերևաց: Իգնատը ճանաչեց «Չարեյկրբեխերին»: Նա վազում եր սալահատակի մեջտեղով ու տարորինակ կերպով ժպտում:

Ծերունու հետքով վազում ելին յերկու բանվոր: Մեկի ձեռքին ատրճանակ կար: Նա միկրոմ շպատեց այս նրանցից հետո անկյունից ելի միքանի տղամարդ ու կանայք յերևացին: Կանալք ճվճում ելին և վոտ ու զըլ-խին տալիս: Ամենից վերջը վազում եր հարդե գլխարկով մի աղջիկ: Նա բարձրաձայն ճշում եր հրեյերեն: Ու աղջկա հետեւց իսկույն յերևաց կազակների պատրուլը: Կազակները սրարշավ քշում ելին ձիերը, վուճանք մտրակները, վուճանք ել մերկացրած թրերը ճոճելով ու վայրագ հայնոյանքներ թափելով: Առջեից, մտրակը ձեռին սլանում եր մի յերիտասարդ կազակ սպա:

Իգնատը միաքը բերեց իր առաջին գործակուլը, մըտքակներով իրեն թակող կազակներին: Այն որը մինչև կյանքի վերջը չմոռացվող հետք թողեց նրա յերեսին—դա նրա աջ թշին թրով հասցրված վերքն եր:

Ծերուկն արդեն համարյա մոտեցել եր Իգնատին: Վոչ թե ժպիտը, այլ սարսափն եր պատել նրա գեմքը: Նա հնում եր շունչը կտրված. շրթները փրփուրով ելին ծածկված: Այն միքանի կցկտուր խոսքերից, վոր բանվորներն ելին իրար նետում, Իգնատը հասկացավ, թե ինչ ե կտարքել. կազակները հարձակվել են գործադուլային պահակախմբի վրա, բանվորները դիմադրություն են ցույց տվել. Աժմ արդեն բանվորները գիտեն, վոր գիտություն սպասելը զուր ե:

Իգնատը շուռ յեկավ և սկսեց հետ վաղել այն կողմը, ուր դռնապաններն ելին կանգնած:

Նա տեսավ, վոր դրանց խմբակին շտապ մոտեցավ մի ուրիշ դռնապան. սա, ձեռքերը մեկնած, ցույց եր տալիս շտեսեք: Նրա մի ձեռքում քար կար, իսկ մյուս ձեռքում՝

թղթեր... այն թոռւցիկները, վոր իգնատը նետել եր կտըի վրայով:

Դռնապաններն իրար խառնվեցին, իսկույն նշմարեցին Իգնատին ու վրա ընկան նրա ճանապարհը կտրելու:

Այն գոնապանը, վոր միքիչ առաջ ափիներից մեկը պահել եր քուրքի թեքի մեջ, ընդառաջ վազեց կազակներին ու բարձր ձայնով ասաց սպալին:

— Ձերդ աղնվություն, այ, են կապտագույն գլխարկով մարդը... թոռւցիկներ եր ցրում... այսինքն անկարգությունների մասին, նա յե, հենց նա յե ու կա:

Իգնատի և գոնապանների միջև մի նեղիկ փողոց կար: Ամբոխն ուղղվեց դեպի այդ փողոցը: Նույն կողմն շտապեց նաև Իգնատը: Նա հասավ ու անցավ աղջկանից, հետո ծերուկից, հետո յել կանանցից: Հետ նայեց:

Աղջիկը հետ եր մնում. վերջին ուժերը հավաքած՝ նա անդազրում վազում եր ու վազում, սակայն արդեն լուսու մունջ, ձեռքերը կրծքին դրած, սայթաքելով: Ամբոխի ու նրա միջև յեղած տարածությունը գնալով մեծանում եր, իսկ կազակների ու նրա միջև յեղած տարածությունը փոքրանում: Գլխարկը թռավ գլխից, բայց նա այդ չնկատեց:

Կազակը, մտրակն ողում շարժելով, իսկ մյուս ձեռքում մերկացրած թռերը բռնած՝ հասավ աղջկան ու ատամները ցույց տալով գոռաց նրա ականջի մոտ.

— Գլխարկ վերցրո՞ւ:

Աղջիկը սարսափահար՝ յերեսը նրան դարձրեց ու հանկարծ տեսավ, վոր կազակը ժպտում ե: Խեղճացած և անվտան՝ աղջիկը նույնպես ժպտաց ու կռացավ, վոր զըլխարկը վերցնի: Կազակը նույն պահին, բազկի ամբողջ թափով, մտրակն իջեցրեց աղջկա կռացած մեջքին:

Աղջիկը զղածգաբար բարձրացրեց գունատ, այլանդակված գեմքը:

— Դե հիմի յել զլուխով վերցրո՞ւ,—գոռաց կազակը, թռուրը թափահարեց, և աղջիկն, արյունաթաթախ գլխով, փուզեց սալահատակին:

Կազակը վայրենի գոռոցով անցավ նրա վրայով...

Իգնատն անդազրում վազում եր... Նա բանվորներից

առաջ անցավ: Այնտեղ, նեղ փողոցի ծայրին, մի միջանցիկ բակ կա...

Կազմակերն ու դոնապանները շարունակում եյին հետապնդումը:

ԿՈՂՔՈՎ ԱՆՑԱՎ

Կրակոցները, կանչ ու ճիչը և աղմուկը վաղ առավոտյան փոթքի հանեցին ընդհատակյա ընկերներին, Սերգեյի կինը, բարակ շղթայով կողպած դուռը կիսաբաց անելով, փողոց նայեց:

Կիսահագնված բանվորները տներից դուրս եյին վազում, բերելով հետները յերկաթե ձողեր, մահակներ, քարեր, վոմանք ել վազում եյին հրացանները ձեռին... Նրանց շտապ և հուզմունքով ասված հատուկտոր խոսքերից Սերգեյի կինը հասկացավ, վոր կազմակերը, խանութպանները և դոնապանները մոտերքում ծեծում են բանվորներին և չքափոր հրյաներին, թալանում են տները, կոտորելու յեն բոլոր նրանց, ովքեր դիմազրելու փորձ են անում:

Սերգեյը և գրաշաբները տեղներից վեր թուան:

Դազազած ջարդարաբները բոպե առ բոպե կարող են ներս խուժել այստեղ...

Նրանք սկսեցին իրերն արագորեն ընդհատակում տեղափորել: Գրաշաբները ներքև իջան: Յերբ մուտքը ծածկը վի, նրանց վոչվոք չի գտնի:

Աղմուկը, կրակոցները, սուլոցն սկսեցին մոտենալ: Սերգեյի կինն ամբողջ ժամանակ դիտում եր կիսաբաց դըռնից: Բանվորները հետ եյին փախչում յերկու-յերկու, յերեք-յերեք հոգի, պատառ-պատառ արած շորերով: Նրանց յերեսից, ջարդութված կոներից արյուն եր հոսում:

Մի պահ փողոցն ամայացավ: Ապա յերեաց բարձրահասակ մի մարդ՝ կապույտ գլխարկը գլխին: Նա վազում եր փողոցի մեջտեղով, մի փոտքը կաղեկաղ տալով: Նրա գեմքին վերքեր կալին, թշերից ու կղակից արյուն եր հոսում: Նա վազում եր աջ ուսը ձեռքով բռնած:

Դոնապաններ, խանութպաններ, ցնցոտի հազած ինչ-

վոր մարդիկ ընկել եյին նրա հետեւից մահակներով, յերկաթե նիգերով, կազմիններով զինված: Նրանք գոռուած եյին.

— Սոցիալիստ ե: Խփիր, — ու քարեր եյին նետառմ բարձըրահասակ մարդու վրա:

Հետեւում, «կարդ ու կանոն» պահպանելու համար, սուլելով, միքանի վոստիկաններ եյին փազում:

Սերգեյը կինը հանկարծ ճշաց: Նա ճանաչեց բարձրահասակ մարդուն: Դա Շալաշովն եր:

Շալաշովն արդեն շատ մոտ եր: Նա արդեն վերջին ուժն եր գործադրում: Հետեւից մի քար հասավ նրա գլխին:

Նրա ու հետապնդողների միջև յեղած տարածությունը գնալով փոքրանում եր: Հենց ես ե՝ կհասնեն նրան ու կըսպանեն Պետք ե իսկույն ներս առնել նրան: Բայց յեթե ներս թողնի նրան, կկորչեն բոլորը, ամբողջ տպարանն ել... Բայց չե վոր նրան հենց այս բոպեյին կարող են սպանել: Վհչ, պետք ե բաց անել դուռը, բոլորը կիթազնվեն ընդհատապետմ: Կասեմ, թե ներս ընկնող անձանոթը փախավ, գնաց: Փախավ: Ի՞նչպես: Չե վոր տան դուռն ու բոլոր պատուհանները փողոցի կողմն են... Ահա նա, յերկու քայլ հեռավորության վրա յե. արդեն հասնում են նրան, հիմա կրպանեն... Պետք ե իսկույն ներս առնել: Ինչվոր լինելու յե, թող լինի:

Նա դուրս քաշեց շղթան ու դուռն ամբողջովին բաց արեց: Շալաշովն ուղիղ տան առաջն եր:

Սերգեյը կինը տեսավ՝ ինչպես Շալաշովը գլուխն այս կողմը դարձրեց, տեսավ նրան, նայեց տանը, լայն բացված դռանը և... վազեվազ անցավ դռան կողքով:

Հետապնդողներից փախչելով, իգնատը պատահաբար եր ընկել այդ փողոցը... Նա շարունակում եր հեռուն փազել...

Սերգեյը կինը ճիշ արձակեց. մի մեծ քար գետին տապալեց Շալաշովին: Դոնապանները ցախավելներով ու մահակներով հարձակվեցին նրա վրա: Վրա հասան նաև վոստիկանները: Նրանք հետ ելին հրում դռնապաններին:

Նրանք փրկում եյին Շալաշովի կյանքը, վորովեսպի նրան տաժանակիր աշխատանքի ուղարկեն: Սակայն իգնատը հավաստի յեր, վորտպարանն անվանգ և մնացել:

ԵՏԱՊՈՎ

1903 թվականի փետրվարի¹⁶, կալանավորների մի խումբ եյին քշում ետապով Արխանգելսկից Պինեգա:

Սառնորակ մշուշ եր պատել չորս կողմ: Աղջամուղջի մեջ, ճանապարհի յերկու կողմում, սպիտակին եյին տալիս ձյունի հուլունքով ծածկված յեղենիները: Յերրորդ որն ե՝ զնում եյին: Խոնավ սառնամանիքից փետանում եյին թե ուղեկցող պահակի զինվորները և թե կալանավորները: Զինվորները հայհոյանք եյին թափում բարկությունից, իսկ աքսորականները վոտքերն եյին գետնին դոփում, ձեռքերն իրար հարում, վոր տաքանան, և դրանից նրանց զղթաներն ավելի եյին զընզընդում:

Խմբակը բաղկացած եր քառասուն յերեք քրեյականներից և մեկ «Քաղաքականից»—Շալաշովից: Նա յեր միայն, վոր շղթաներ չեր կրում:

«Քաղաքականը» գնում եր սայլով՝ կանանց և հիվանդների հետ մեկտեղ: Նա ամբողջ ճանապարհն անցավ նըստած, լուռ ու մունջ, կուչ յեկած, ծնկները ձեռքերով խտած:

Քսանվերստանոց հոգնեցուցիչ ճանապարհ կտրելով, խումբը վերջապես հասավ մի զյուղ՝ գիշերերու:

Ետապի խրճիթ առաջ պահակի զինվորները համրեցին

կալանավորներին: Հաշվելը հազիվ եյին վերջացրել, յերբ կալանավորները շեշտակի դեպի դուռը նետվեցին: Գոռոգուցով և հայհոյանքով նրանք խրճիթ խոժեցին և փրար հրելով ու կոխկոտելով սկսեցին տեղեր գրավել պառկելու համար:

Սուենք այդ կովի համար մարդիկ պատճառ ել ունեցին: Ախար խրճիթ յերկու նեղ խցերի մեջ պետք ե տեղավորվելուն հիսունի չափ մարդկային մարմիններ՝ իրենց խղճուկ ունեցած-չունեցածով:

Ամենալավ տեղերը, տախտամածի վրա, բաժին ընկան ուղեկցող զինվորներին և յերկու ուժեղ տաժանակրի—վանկային և Ֆեղկալիին: Այս յերկուան ամբողջ ճանապարհին պարծենում եյին իրենց սպանոթյուններով, հրկիղութերով, թալաններով, սպառնում եյին կոշկակարի դանակը խրել ամեն մի իրենց դեմ խոսողի ինսերորդ կողի տակ և սարսափ եյին ազդում ամբողջ խմբին: Ուղեկցող զինվորներն ել եյին վախենում նրանցից ու աշխատում եյին նրանց հետ հաշտ լինել, դրա համար ել թույլ եյին տալիս, վոր նրանք ինչքան ուղեն նեղացնեն իրենց ընկերներին:

Մնացածները պառկեցին կեղտոտ հատակին, կողք-կողքի, մի վերջոկ աղատ տեղ չթողնելով: Կալանավորներից միքանիսը նույնիսկ հատակի վրա յել տեղ չճարեցին և լալագին խնդրում եյին, վոր բախտավորները միքիչ սեղմակեն ու այնքան տեղ զիջեն, վոր իրենք կարողանան գոնե կծկված նստել մինչև առավոտ:

«Քաղաքականին» ուղիղ այնքան տեղ բաժին ընկավ, վոր նա կարողանա նստել ծնկները մինչև կզակը ծալած:

Կալանավորներից մեկը բերեց մի գույլ շչի*: Սկսվեց յերկրորդ կոփկը ընթրիքի համար:

Տախտամածների վրա իրենց համար լավ տեղ ապահովելուց և ընթրիքը վերջացնելուց հետո, Վանկան և Ֆեղկան սկսեցին համոզել պահակապետին, վոր նա թույլ տա իրենց գնան գյուղ՝ խմելու և քեֆ անելու:

* Շիլ-ջրակ կերակուր կողամբով:

Պահակապետը տվեց իր համաձայնությունը։ Նա գիտեր, վոր տաժանակիրները սիրու չեն անի փախուստի դիմել այս անպիտան տեղերում։

Ֆեղկան վորտեղից վոր ե մեծ-մեծ քարեր ճարեց։ Նրանցով նա վարպետորեն ջարդեց իր և Վանկայի ձեռքի ու վոտքի շղթաների փականքները։ Հետո, շպրտելով շրթաները հատակին, տաժանակիրները հեռացան։ Մյուս կալանավորները նախանձով նայում եյին նրանց հետեւից։

ՀԻՍՈՒՆ ԿՈՂԵԿ

Պահակները գիշերը դուռը կողակեցին։ Անկյունում դրված եր արտաքնոցի տեղ ծառայող պարաշան։ Լեփլեցուն սենյակում շունչ առնել կարելի չեր։ Տախտամածների վրա մինչև հավախոսը չեր դադարում հայրոյանքն ու գուգուոցը։ այնտեղ, մոմի լույսի տակ, պահակներն ու կալանավորները մոլությամբ թուղթ եյին խաղում։

Շալաշով, իր իրեղենների կապոցին նստած, կուչ եր յեկել, ծնկները կզակին հասցըել։ Նա հազում եր գարշահոտությունից ու խեղդուկ ողից, ցնցփում եր փայտութիւնների խայթոցներից և անվերջ քորվում ու քորվում։

Սակայն հոգնածությունն իր անելիքն արեց։ «Քաղաքականն» սկսեց նիբնել։ Կիսաքուն վիճակումնա լսում եր, ինչպես մի մարդ պատուհանն ե ծեծում ու զինվորներին կանչում, ինչպես յերկու պահակ դժգոհությամբ շինելներն են հագնում ու կողպեքի մոտ մլուլ անում։ Հետո նաքնեց։

Հանկարծ նրա անհանգիստ քունը խանդարվեց մի սոսկալի ձայնից։

— Չմոտենամ, կսպանեմ...

«Քաղաքականը» ցնցվեց ու աչքերը բաց արեց։

Շեմքին կանգնած եյին Վանկան ու Ֆեղկան։ Նրանք զոր հարբած եյին։ Կիսափակ դռնից ցուրտ եր ներս փչում։ Ֆեղկան, մեջքը դոանը գեմ արած ու դանակն աջ ու ձախ շարժելով, բղավում եր։

— Կյանքում չորս մարդ եմ մորթել, դու հինգերորդը կլինես։

Վանկան, ձեռքը ծոցում բռնած, յերկարացրել եր վիզն ու ցած իջեցրել գլուխը, կարծես պատրաստվում եր գլխով հարված հասցնելու։ Նա բարկացած կրկնում եր.

— Հիսուն կոպեկս տուր... Հիսուն կոպեկս տուր...

Նրանց այստեղ բերող պահակները մի կողմ քաշված յերկուղով նայում եյին տաժանակիրներին։ Խրճիթում խաղամոլները ձայնները կտրեցին։ «Քաղաքականը», գիշատիչ թռչնի լարվածությամբ, դիտում եր շեմքում կատարվող անցուդարձը։

Պահակապետն իր տախտամածից փոտքերը ցած կախեց ու հեռվից, վոր անվտանգ լինի, փորձեց խոաք հասկացնել ատաժանակիրներին։

— Դատարկ բանի համար եք կոիվ սարքել, տղերք, աստված վկա։ Փոխանակ խրճիթը ցուրտ լցնելու, լավ կլինի գաք այստեղ, միքիչ թուղթ խաղանք ու պառկենք քնելու։ Խուավոտ յես կապարզեմ՝ ով ե արդարն ու մեղավորը... Աստված վկա...

Վանկան հանկարծ դուրս քաշեց ձեռքը ծոցից դանակը բռնած և հարձակվեց Ֆեղկայի վրա։ Յերկուսն ել միաժամանակ բռնեցին իրար թեկից։ Նրանց ձեռքերն իրար հրուսվեցին։ Դոանը դիպչելով ամբողջովին բաց արին այն։ Դովի բռնված տաժանակիրները հենց շեմքի մեջ գետին փուփեցին։

Մոմի լույսը գժի նման փալլիկեց ու հանգավ։ Խրճիթում տիրեց ցուրտն ու մթությունը։ Միայն կընկի վրա բաց դռնից նշմարվում եր սպիտակին տվող ձյունը, կապուտակող գիշերն ու շնչառությունից գոյացած տարուերփող գոլորշին։

Կալանավորները — թե նրանք, վոր գեռ չեյին պառկել, և թե նրանք, վոր նոր եյին արթնացել — սկսեցին գոռար։ Յուրաքանչյուր կամ չի, դուռը ծածկեք...

«Քաղաքականը» խկույն վոտքի կանգնեց։ Սա հենց այն բոպեն եր, վորին նա համբերությամբ սպասել եր ամբողջ ճանապարհին։ Փողն ու պասպորտը պահպած ելին

կողիկների ներբանում: Ահա թե ինչու նա ամբողջ ժամանակ կաղ երձեանում և սայլով ճամբա գնում:

«Քաղաքականը» քաշեց ուսերին իր պատառոտված քուրքը: Ապա աղմուկի, ճիշերի և մթության մեջ, դեմ ընկնելով պառկածներին, կոխկոտելով քնածների վոտներն ու ձեռները,—նետվեց դեպի դուռը:

«ՔԱՂԱՔԱԿԱՆԸ»

Շալաշովը չորեքթաժ, անտեսանելի ստվերի նման, ծլկվեց զինվորների կողքով, կատվի ճարպկությամբ անցավ կրվողների մեջքի վրայով, ցատկեց ձյան մեջ, վոտքի կանգնեց ու փախափ:

Հետևում լսվում եր խառնիճաղանձ կանչ և աղմուկ: Գիշերվա խավարում հանկարծ հնչեց մի ուժեղ ձայն: — կանգնիր:

Մթության մեջ փայլիկեց կարմիր բոցեղեն մի շերտ, ու վորոտաց հրացանի կրակոցը: Նորից բոցեղեն շերտ ու յերկրորդ կրակոց:

«Քաղաքականը» վազում եր սառած ճահճի ափով ձյունակույտերի մեջ թաղվելով, վազում եր այն կողմը, ուր գիշերվա կապուտակում, սպիտակ դաշտավայրի ծայրին, ցածր կախված սկ ամպի նման անտառ եր յերկում: Զինվորները ձյան մեջ խրվելով, վազում եյին «Քաղաքականի» հետեւից: Դժվար եր խորը, տեղ-տեղ մինչև ծնկները հասնող ձյան վրայով վազելը:

Շալաշովի շունչն եր կարվում, սառը քամին ծակում եր նրա կուրծքը, վոտները ծալվում եյին:

— կանգնիր,—հնչեց այս անգամ ավելի մոտիկից: Նորից վորոտաց կրակոցը, ու գնդակը վժժոցով ձեղքեց անցավ սառ ողի միջով:

Սկ ամպն աճեց, մոտեցավ, ծառեր դարձավ: Շալաշով արդեն լուս եր՝ ինչպես ձմեռային քամին խոսում ե յեղմնիների կատարների հետ:

Շալաշովը, հալից ընկած, հասավ անտառի յեղքին ու անցավ ծառերի հետեւը:

Միքանի տկնթարթ նա անտեսանելի մնաց իրեն հետապնդողների համար: Ապա նա ամբողջ թափով զցեց իրեն ծառերի միջև գտնվող ձյունակույտի մեջ ու վոտով գլխով թաղվեց: Զյունը մտնում եր նրա քիթը, բերանը, թեերը, ոձիքը, թաթմանները: Շունչը կտրած ու հազից խեղդվելով Շալաշովը զղաձգորեն փորփրեց ձյունը ձեռքերով և ծակից ներս թափանցող ոդով ազատ շունչ քաշեց: Նրա կոնակի ու կրծքի վրայով սառ ջուր եր հոսում առվի նման:

ԳԻՇԵՐԱՑԻՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Զինվորները զուր տեղն եյին վազվում անտառում: Թափուտներում, մթության մեջ, վոչինչ չես տեսնի: Նըրանք հուզվում եյին ու սրտերը դող ընկած խոսում իրենց մեջ:

— Բա ինչպես անենք: Ի՞նչ կինի հիմի մեր հալը... Ախար լուրջ քաղաքական կալանավոր ե...

Նըրանք մի ժամից ափելի մոլոր շրջում եյին թափուտներում: Իրար եյին հայնոյում: Կամ մեզը զցում ելին ճահճի կողմից յեկող մառախուղի վրա:

Վերջապես հուսահատվեցին, հեռացան...

Շալաշովը թրջված, դողդողալով զուրս յելավ ձյունի տակից: Նա այնքան եր փետացել, վոր ազատվելու յերջանեկությունն անդամ նըրան չեր ուրախացնում: Տաքանալու նպատակով նա փորձեց վազել, բայց փետացած վատները հազիվ եյին շարժվում:

Սնուառի խորքերում գայլերն եյին վոռնում: Հեռվում, ինչ-վոր տեղից, նըրանց պատասխանում եյին գյուղի շները: Ճահճի կողմից սողում եր թանձը մառախուղը: Նա փովում եր ծառերի տակ ու բարձրանալով կարծես կախ եր ընկնում նըրանց միջև, ու ծառերը մթության մեջ անտեսանելի եյին դառնում:

Զյուների մեջ խրվելով, սառցապատ կոճղերին սայթագելով, մամուռների վրայից սկզբելով Շալաշովը մութ անտառի միջով քայլերն ուղղեց դեպի հեռվում լավող շնե-

բի հաջոցը՝ Ցըտից նրա առամսերն իրար ելին զարկվում։ Ծառերի ճյուղերը գիպչելով նրան ցավ ելին պատճառում, ճանկուում ելին նրա յերեսն ու ձեռքերը, ճղոտում հագուստը։ Չորս կողմը, մառախուղի մեջ, խշում եր անտառը զրնգան ցըտից, ճաթճաթում և ճոռում։ Թայլերի վոռնոցն ել մեկ հեռանում եր, մեկ մոտենում։

Անտառը վերջացավ թեք զառիվայրի զլիսին։ Գազագած շների հաջոցն ու մոնչոցն արդեն շատ մոտիկից եր լսվում։ Ներքեից ելի ինչ-վոր աղաղակներ ելին հասնում Շալաշովի ականջին։ Նա սկսեց չորեքթաթ ցած իջնել սայթաքուն սառցապատ զառիվայրով։ Ու հանկարծ լեղապատառ կանգ առավ։

Մառախուղի մեջ ինչ-վոր հրեղեն կետեր ելին տեղից տեղ շարժվում, ու անտեսանելի մարդկանց բղավոց եր լսվում։ «Ես կողմ, Ես կողմ. առաջը կտրիր»։ Ու այդ վայրկյանին հրացանը պայթեց։ Մարդկանցից մեկն աղաղակեց։ «Հրես ննա»։ Ների հաջոցը, մարդկանց ճիշն ու հրեղեն կետերն սկսեցին արագ մոտենալ բլրին, ուր թագնվել եր փախստականը։

Շալաշովը հետ դարձավ և, ինչքան ուժ ուներ, սկսեց դեղի վեր մագլցել։ Նորից գոռաց կրակոցը։ Ներքեի հաջոցը, ճիշերը, լույսերը քանի գնում ավելի ելին մոտենում Շալաշովին։

Հանկարծ լույսերը կանգ առան։ Հաջոցը փոխվեց կապաղի մոնչոցի, վոռնոցի ու կովի ճայների։ Մարդիկ գոռում ելին։

Յեղավակ...

Լսվեց, ինչպես մարդիկ հրացանով ու մահակներով մի կողմ ելին քշում շներին։

Մեկն ասաց.

— Տես, Սեմյոն, շեկ նշան կա վրեն։ Հենց սա յեր, վոր հերու քու հորթին խեղդեց։

Շալաշովը կանգ առավ։ Նա հասկացավ. գյուղացիները, շներին առաջ քշած, հետապնդում ելին գալին, վորը գյուղ եր մտել անսառններ պատառութելու։ Շալաշովն սկսեց արագաթյամբ իջնել գյուղացիների մոտ։

ՍՍՀՄԱՆԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԸ

Գյուղում Շալաշովին ոթևան տվեցին ու տաքացրին։ Առավոտյան գյուղացիներից մեկը սայլով տարավ նրան կայարան։ Շալաշովը վարձատրեց նրան այն փողով, վորը հանել եր կոշկի ներբանից։ Հինգ որ անց, Պետերբուրգում, գաղտնի հանդիպավայրում, Շալաշովն իմացավ, վոր ինքը պետք եւ արտասահման մեկնի՝ իսկրայական կենտրոնի տրամադրության տակ։ Սահմանն անցնելու համար նրան փող, հասցե ու նշանաբան տվեցին։

Ետապից փախչելուց յերկու շաբաթ անց, մարտի յերեկոներից մեկում, Շալաշովը կառը նստած մտավուս-ավստրիական սահմանագլխի գյուղաքաղաքներից մեկը։ Նրան ճանաչեն անկարելի յեր. դեմքը սափրած եր, զլիսին բաց գույնի կեղծամ, բեխերի ծայրերը վոլորած։ Նա հագնված եր ֆրանտի պես, զլիսին ել դրել եր նոր, կլոր ձեկի զլիսարկ։ Գրպանում նա կարեռ կուսակցական փաստաթղթեր եր տանում։

Բեխսավոր մի մարդ, յերկար կեղտոտ կաֆտանը հագին, ճանապարհին թուավ Շալաշովի կառքը։ Դա՝ սահմանն անցկացնող Զագլուհան եր, վորի հետ Շալաշովը պայմանավորվել եր գեռ մի որ առաջ, սահմանագլխի քաղաքներից մեկում։

Շալաշովը վճարեց կառապանին, վերցրեց եր ճամբրուկը և գնաց Զագլուհայի հետևից։

Նրանը հասան գյուղաքաղաքի ծայրը։ Արդեն մթնել եր. թափանցող քամին վչում եր նրանց յերեսին։ Մթության մեջ նրանը իջնում ելին փշաթուփերով ծածկված կառիվայրով։ Զագլուհան ձեռքերով մի կողմ արեց ծառաձյուղերի մի կույտ... ձորակի մեջ պատրաստի մի սայլակ եր կանգնած։

Նրանը նստեցին սայլակը, և Զագլուհան լուռ շարժեց սանձը։ Գնում ելին անտառի միջով, առանց ճանապարհի։ Լերկ թփերը խճճվում ելին անիմերին։ Սայլակը, գեմը լնկնելով ձյունով ծածկված կոճղերի ու հաստ արմատների՝ մեկ այս, մեկ այն կողմն եր թեքվում։

Նրանք դուրս յեկան ուղիղ ճանապարհը և շուտով
կանգ առան մի ցած ցանկապատի մոտ, ուռենու տակ:
Դա դյուղի ամենածայրի խրճիթն եր: Խոր զիշեր եր,
գյուղը քնած:

Զագլորան սայլակից ցած թռավ, ինըրեց, փոր Շալա-
շովն ել ցած գա, բռնեց ձիու յերասանակը, ու ձին ել,
սայլակն ել, Զագլորան ել չքացան մթության մեջ:

Շալաշովը նստել եր ցանկապատի մոտ, ճամբրուկի
վրա: Մեկ ել նրա առջեր յերկու գլուխ բանեցին. մեկը—
Զագլորան եր, մյուսը—վոչխարե փափախով մի մարդ:
Փափախով մարդը մատով նշան արեց Շալաշովին—յեկ
հետեիցս:

Յերեքն ել, մեկը մյուսի հետեից, առաջ գնացին մթու-
թյան մեջ: Անցան շատ այդիներ ու բանջարանոցներ,
ցատկեցին ցանկապատերի վրայով ու վերջապես մի խոր
ձորակ իջան: Զագլորան ու մորթե փափախով մարդն
իսկույն անհայտացան, կարծես գետինն անցան:

Շալաշովը, ճամբրուկը ձեռքին, շվարած մնաց տե-
ղում:

Անցավ միքանի ընպե: Հանկարծ, առանց մի ձայն-
ծպտուն հանելու, յերևացին Զագլորան ու նրանց ուղեկ-
ցող մորթե փափախալորը: Նրանք կուցած սողում եյին
ձորակի փշոտ թփերի տակով:


Յերբ Զագլորան և ուղեկցողը վոտքի կանգնեցին,
նրանց ձեռքում յերևաց ծառի բնից շինված մի փոքրիկ
մակույկ: Ուղեկցողը ձախ ձեռքով թին եր տանում:

Նրանք ձորակի թեք հատակով վար իջան, զգուշու-
թյամբ ճանապարհ բանալով լերկ թփերի միջով: Վերջապես
միքանի քայլ հեռավորության վրա յերևաց գետը... Մյուս
ափին սեխն եր տալիս բարձրուղեց անտառը:

Մակույկը հեշտությամբ ջուրն իջեցրին: Փափախա-
լորը ձեռքի նշանով ցույց տվեց Շալաշովին մակույկը—
մտիր:

Շալաշովը մտավ մակույկը: Բարակ, կեղեակերպ մա-
կույկը բիչ մնաց շուռ գար:

— Մեջքիդ պառկիմը... քչփչաց ուղեկցողը:



Շալաշովը պառկեց մակույկի հատակին, յերեսը դեպի աստղագարդ յերկինքը: Զագլորան ձգվեց նրա կողքին:

Փափախով մարդը նավաքթին նստած թիավարում եր, թին անձայն իջնում եր ջուրն ու բարձրանում: Յերբ թին նախակի մի կողմից մյուսն եր անցնում, ջրի սառնորակ կաթիները Շալաշովի յերեսին եյին թափվում:

Հանկարծ աստղագարդ յերկինքը կարծես շուռ յեկավ նրա գլխավերնում: Մակույկը ցնցվեց, ճոճուաց ու կանգ առավ:

— Հասմնք,— շնչաց Զագլորան:

Շալաշովը վեր կացավ ու դուրս յեկավ մակույկից: Գետեզրի յերկարությամբ ձգված եր Գալիցիայի բարձր ու սեպացած ժայռուտ ափը:

Հանկարծ ափի մոտ լսվեց քայլի և խոստացության բարձր ձայն: Խոսում եյին ոտար լեզվով:

Շալաշովի մարմնով սարսուռ անցավ: Զագլորան և ուղեկցողը վերցրին մակույկն ու վագեցին ժայռնիվեր: Շալաշովն շտապեց նրանց հետեից: Զառիթափի կես ճանապարհին ուղեկցողը թիով անցք բաց արեց թփերի մեջ:

Նրանք սողալով մտան մի յերկար ու նեղ քարանձտվ: Ավտորիական սահմանապահներն անցան ներքեի կողմից, գետի ափով:

«ՆԱԽ ՓԱՐԻՍ, ԳՈՒՏ»

Մի պայծառ գարնանային որ Շալաշովը, ձամբրուկը ձեռին, կանգնած եր Վիեննայի կայարանի պետոնի մուտքի մոտ, ուղեւորների բազմության մեջ:

Վանդակափոր բաց գոնակի առաջ կանգնած եր ծերունի վերահսկիչը: Ուղեւորները մեկ-մեկ ցույց եյին տալիս նրան իրենց տոմսերն ու պլատֆորմն եյին դուրս գալիս: Պլատֆորմի մյուս կողմում ճեղքնթաց գնացը շոգի յիր արձակում:

Շալաշովը նայեց ժամացույցին: Գնացքի մեկնելուն յերեք ըստեր յեր մնացել:

Նա ներկայացրեց վերահսկիչին իր տոմսը— «Վիեննա Փարիզ»—և ուզում եր դուրս գալ պլատֆորմը:

Վերահսկիչը նայեց տոմսը, ապա աշքը զցելով Շալաշովին, գլուխը շարժեց ու ձեռքով մուտքի առաջն առավ:

Այդ միջոցին մոտեցավ մի ուրիշ ուղևոր, տոմսակը մեկնելով: Վերահսկիչը նրան թույլ տվեց պլատֆորմն անցնելու:

Շալաշովը դարձմացավ ու անհանգստացավ:
«Ի՞նչու ինձ պլատֆորմ չեն թողնում: Գնացքը հիմա կմեկնի»:

Հնչեց սուլոցը: Գնացքը դանդաղորեն շարժվեց:

Շալաշովը մի կողմ հրեց վերահսկիչին ու նետվեց գեղալի գնացը: Թռավ վագոններից մեկն ու շուրջը նայեց. վերահսկիչը և համազգեստը հագին ու սաղավարտը գրլիին մի մարդ ինչ վոր բան եյին կանչում, մատնացույց անելով Շալաշովին:

Շալաշովը ստավ կուպեն ու նստեց բազմոցին. «Մի՛թե հետքս գտել են»:

Նրան մոտեցավ բեխավոր կոնդուկտորը: Վերցնելով նրա տոմսակը, զարմացած նայեց Շալաշովին և գերմաներեն ինչ վոր բան ասաց:

Շալաշովը գերմաներեն վատ եր հասկանում: Նա գլուխը շարժեց—չեմ հասկանում:

Կոնդուկտորը տոմսակը վերցրեց ու հեռացավ:

«Ի՞նչ անեմ,— գլուխ եր կոտրում Շալաշովը: Գնացքից դուրս թռչեմ»:

Նա նայեց պատուհանից դուրս Գնացքը սոսկալի արագությամբ սլանում եր բանվորական արվարձանի մոտով:

«Մահն անխուսափելի յե»...

Նա հուզված շոշափում եր գրամնի փաստաթղթերը:

Միքամնի կիլոմետր անցնելուց հետո, գնացքը կանգառավ կայարանի առաջ: Դուռը բացվեց: Կուպե մտան յերկու հոգի՝ համազգեստով և սաղավարտով, ու նրանց հետ կոնդուկտորը: Համազգեստով մարդիկ Շալաշովին դուռը ցույց տվին: Ապա, վերցնելով նրա ճամբրուկը, դուրս տարան:

Շալաշովը, միանդամայն հուսահատված, վոտները քառշակեց նրանց հետևից: Ինչի՞ համար եր նա հաղթահարել այդքան խոչընդոտներ, կրել այդքան փորձանքներ...

Անցնելով յերկաթուղային կամրջակը, համազգեստով մարդիկ նրան մի ուրիշ պլատֆորմ տարան:

Նրանը ճամբրուկը դրին պլատֆորմին ու հրամայելով, վոր Շալաշովն այդտեղ սպասի, հեռացան:

Հենց վոր նրանը անհետացան, Շալաշովը վերցրեց ճամբրուկն ու փախուստի դիմեց: Ալդ բոպեյին մի գնացք մոտեցավ: Յերկաթուղային համազգեստով մի յերիտասարդ հասավ Շալաշովի հետևից: Խլեց նրա ձեռքից ճամբրուկը ու, բոնելով թեփից, քարշ տպեց դեպի գնացքը:

Այս պաշտոնյան ճամբրուկը վագոն ներս տարավ ու տեղափորեց դարակի վրա: Հետո ժպտաց ու ձեռքով ցուց տալով, թե վար ուղղությամբ ե շարժվելու գնացքը, ասաց:

— Նախ Փարիս, գուտ:

Շալաշովը հասկացավ—«Դեպի Փարիզ, ամեն բան կարգին ե»:

Յերկաթուղային պաշտոնյան մեկնեց նրան տոմսակը և դուրս յեկավ: Շալաշովը ճանաչեց իր տոմսակը «Վիեննա-Փարիզ»:

Գնացքը մեկնեց:

Այժմ նա հասկացավ, վոր իսկի յել կալանավորված չի յեղել, այլ ուղղակի Վիեննայում այն գնացքը չի նստել, վորին պետք ե նստեր: Փարիզ մեկնող գնացքը պետք ե դուրս գար յերեք բոպեյից հետո...

«ԿԱՅԾԸ ԲՈՅ ԿԴԱՌՆԱ»

Այն քաղաքը, ուր գտնվում եր «իսկրայական կենտրոնը», ծխնելույզների մի ահազին անտառ եր, մշտապես պատած ծուխ ու մրով և մառախուղով տոգորված: Այս քաղաքի անվերջ փողոցներով, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, ոմնիբուսներն եյին յերթեկում, շոգետար մեքենաներն եյին անցնում գոռոցով, կառքերն եյին գնումգալիս ու մարդկային բազմությունն անցուղարձ անում:

Հուսազարդ ցուցանակների կրակներն արտացոլվում եյին թաց սալահատակների վրա:

Պյու քաղաքը լոնդոնն եր: Լոնդոնում կան աղքատ թաղամասեր: Այստեղ, փողոցի մեջտեղում, լվացք ե կախ տված: Այստեղ խոժոռագեմ մարդիկ, ցնցոտիները հագին, նըստոտած են իրենց վողորմելի ապաստարանների շեմքին, իսկ նրանց յերեխաները, սոված ու մերկ, խաղում են սալահատակներին և անցուղարձ անողներից վողորմություն խնդրում: Նեղիկ, մութ փողոցում իր խոպոտ յերգն ե հնչեցնում փողոցային յերգեհոնը: Շարժական լապտերների պլազմող դեղնագույն բոցը լուսավորում ե թապազների շարքերը սալահատակի վրա: Մսավաճառն անդադար ճշում ե ու գովաբանում իր հնացած միսր: Նրա կողքին վաճառում են կողիտ վոտնամաններ, հին հագուստեղենն, անպետք համարված ամանեղեն: Այստեղ ամեն ինչ յերրորդ տեսակիցն ե՝ ամենաեժանը: Խանութների միջև յեղած անցքերում խոնվում են չքափորները խմբերով:

Հենց այսպիսի թաղերից մեկում եր գտնվում իսկրայականների կենտրոնը—«Իսկրա» լրագրի խմբագրությունը: Այստեղ եր ծրագրում ապագայի պլանն այն ահազին յերկրի, վորը 2000 վերստ հեռու յեր լոնդոնից:

Այստեղից եր, վոր «Իսկրա»-ի գործակալները հատուկ, յերկու տակ ունեցող ճամբրուկներով Ռուսաստան եյին տանում ամենաբարակ կապտագույն թղթի վրա տպված թերթերի փաթեթները:

Դրանը «Իսկրա»-ի համարներն ելին: Նրանց ճակատին, աջ կողմում, յուրաքանչյուր համարի վրա տպագրված եր

«Կայծը բոց կդառնա»

Լոնդոնում, «Միխտեր» անվան տակ, շատ համեստ կահավորված յերկու սենյակում՝ իր խոհանոցով, ապրում ելին լենինը և կրուպսկայան:

Նաղեթգա կոնստանտինովնան ինքն եր վարում տնտեսությունը. ինքն եր մթերքներ գնողը, նավթի վառարանի վրա ճաշ պատրաստողը, հատակները լվացողը:

Այս բնակարանումն եր գրում Վլադիմիր Իլիչն եր

նշանավոր հոգվածները՝ «Հեղափոխական ավանդութիզմը», «Նամակ ընկերոջը մեր կազմակերպական խնդիրների մասին», «Դյուղական չքավորությունը» և ուրիշները:

Այս ընակարանից եր, վոր թղթի յերկար շերտերը, Իլյիչի ուղղումներով ու մանր տպագիր տառերի հավասար տողերով ծածկված, գնում ելին տպարան։ Դրանք «Խոկրա»-ի սրբագրական սյունակներն ելին։

Այս ընակարանումն եր, վոր Նաղեթղա Կոնստանտինովանից նովան Ռուսաստանից Լոնդոն ուղղված ծածկագիր նամակները բաց եր անում ու նավթե լամպի ոգնությամբ յերևակում, իսկ Լոնդոնից Ռուսաստան ուղարկվող նամակները ծածկագրում ու ծրարում։

Նաղեթղա Կոնստանտինովան թղթակցություն ուներ Ռուսաստանի բոլոր խակայականների ու կուսակցական բոլոր կոմիտեների հետ։ Վլադիմիր Իլյիչն ամեն մի նամակ աչքի յեր անցկացնում։ Նա մանրամասնաբար գիտեր, թե ընդհատակյա ընկերներից ով ինչ ե անում, և ցուցումնը եր տալիս, թե ինչպես պետք ե տարպի գործը։

Յեկ «Խոկրա»-ն, Վլադիմիր Իլյիչի ղեկավարությամբ, զաստիարակում եր տասնյակ պլոտագանդիստներ, հարյուրավոր ագիտատորներ, վորոնք որ-ավուր արթնացնում ելին ուսւ բանվորների գիտակցությունն ու հեղափոխական կամքը։ Նրանք ցանում ելին այն կայծերը, վորոնցից պետք ե բռնկվեր պրոլետարական հեղափոխության մեծ բոցը...

ԿԻՐԱԿԻՆ, ԿԵԲԸ ՅԵԿ ԴՐԱՆ ՈՂԱԿԸ

Գնացքը սլացավ թեմզայի վրայով անցնող կամքջով՝ Ներքեւում, կամքի աջ և ձախ կողմերում, փոփած եր գործարանների մրոտած ծխնելույզների և անհամար նավակայմերի անտառը։

Յերկրորդ կարգի վագոններից մեկում, բեխ ու մորուք սափրած անգլիացիները զարմացած նայում ելին մի ոտարականի վրա, վորը տարորինակ կլոր գլխարկ ուներ գլխին։ Ոտարականը շփոթված՝ ուղեկիցների իր գլխարկին

ուղղված այդ ուշադրությունից, մեկ մինչև աչքերն եր քաշում գլխարկը, մեկ հետ զցում մինչև ծոծրակը, կամ թե հանելով գլխից, յերկար ժամանակ արորում եր ձեռքում և, վերջապես, բարկացած, գլխարկը խոթեց ճամբը ըուլկը։

Գնացքն ընթանում եր առանց կանգ առնելու և ժամը վեցուկեսին Լոնդոն ժամանեց։

Ուղեկորը, ճամբրուկը ձեռքին, դուրս յեկավ կայարանից ու տեսավ առջեր մի լուռ և ամայի փողոց։ Միան կայարանի մոտ եր, վոր դեսուղեն ելին վազվզում գնացքից դուրս յեկած ուղեկորները։

— Այս ել քեզ աշխարհիս ամենաբանուկ քաղաքը, — զարմացած ու բարձր ձայնով ասաց նա ուսերեն, բեխերի ծայրերը ձգելով։

Ուղեկորներից մեկը կանչեց։

— Կեր։

Կայարանին մի տարորինակ կառք մոտեցավ. նորեկի ուսերին հասնող նրա յերկու անգին անիմսերի վրա մեղմորեն ճոճվող մի փոքրիկ նստելատեղ կար, վորը վերեկի կողմից ծածկված եր ամպհովանիով՝ մանկական սայլակների նման։

Գլխին ցիկնողը դըած կառապանը նստած եր այդ կառքի հետեւ կողմում զտնվող բարձր նստարանի վրա, վորը կառքի ծածկից ել բարձր եր։

Նորեկը նույնպես կանչեց — «Կեր», ու իսկեփակ նույնպիսի մի կառք յեկավ-կանգնեց նրա առաջ։

Նա տվեց կառապանին թղթի մի կտոր, վորի վրա հասցեն եր զրված։ Կառապանը կարդաց, ձեռքով ցույց տվեց նստելու տեղը և, վեր բարձրացնելով ճամբրուկը, դրեց իր կողքին։

Նորեկը հանեց գրպանից կաշեկազմ մի գրքույկ ու տառերով ու կարդաց։

«1903 թՎԱԿԱՆԻ

ՈՐԱՑՈՒՅՑ

Ոգոսոսկ 6

Կիւակի»

Ահա թե ինչու փողոցներն այսոր ամալի եյին: Կիրակի որերն ամբողջ Անգլիան մտնում եւ տներն ու կողպեքներով փակվում, ասես մի մեծ առետրական խանութ լինի:

Անգլիայում կիրակի որերը միայն աղոթել կարելի յեւ: Մարտակի հարվածները կարկտի պես թափվում եյին ուղերի զլխավերնում, և կերն արագ առաջ եր գնում լոնդոնի նեղ փողոցներով...

Ժամն ութն եր:

Կերը մտավ մի նեղ ամայի փողոց ու կանդ առավ: Կառավանը հանդիսաւ շարժումներով ճամբրուկը գցեց մայթին, մի յեռնարկանի տան առաջ, վորը ցանկապատված եր թուջե ցածր վանդակապատով:

Յեկվորը դուրս յեկավ կերից ու վճարեց կառավանին:

Դուանը զանգակ չկար, այլ մի ծանր ողակ եր կախ ընկած: Նա բարձրացնելով ողակը՝ յերեք անգամ ծեծեց դուռը:

ԱՌԱՋՆՈՐԴԻՐ

Շալաշովը, դռան տուած կանգնած, հուզվում եր: Իսկրայականների առաջնորդին հանդիպելը նրան միքիչ վախեցնում եր:

Իր յերեակայութիւնն մեջ Շալաշովը պատկերացնում եր առաջնորդին վորպես պարթև հասակով, վեհապանծ տեսքով ու ահեղ հայացքով մի մարդու:

Բայց ահա սանդուխքի վրա քայլերի ձայն լսվեց: Դուռը բացվեց:

Եեմքին, մուգ աչքերն ուշադրությամբ կկոցելով, կանգնած եր յերեսուն յերեք տարեկանի մոտ վոչ բարձրահասակ մի մարդ, մեծ ճաղատ զլխով և շեկին տվող փոքրիկ մորուքով:

Շալաշովը վոտքը շեմքից ներս դնելով ասաց:

— Կարդացել եք արդյոք «Գրաժդանինի» քառասուն յոթերորդ համարը:

Դա նշանաբանն եր: Պատասխանի տեղ աանտերն ամուր ոեղմեց հյուրէ ձեռքը:

Տանտերը Վլադիմիր Իլյիչ Լենինն եր: Նրա նայվածքն իսկի յել ահեղ չեր—նա սիրալիր կերպով ժպտում եր: — Շնորհավորում եմ ձեր հաջող փախուստը, ընկեր Շալաշով, — ասաց նա մի անսովոր պարզությամբ և ընկերաբար:

Ու Շալաշովը իսկույն իրեն զդաց անկանոն և ազատ, կարծես Վլադիմիր Իլյիչը նրա վաղեմի ծանոթը լիներ...

Լենինը Շալաշովին վերև տարավ:

Ալսպես սկսվեց Շալաշովի նոր կյանքը: — աշխատանքն արտասահմանում:

*



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հանեցեք, ինորեմ, բոլոր առաջներս»	11
Գաղանի հանդիպալայը	11
Կրիլովի սիրահարը	12
Հրաշալի գոխարկումը	14
Անուններ-դիմակներ	15
Հասարակածի կեսը	18
Մաքսանենդություն	22
Մինյութինի բախար	32
Գնացքի մեկնելուց չորս բոպե առաջ	36

ԱՅՈ ԿԱՄ ՎՈԶ

«Պրեդարիէկան»	38
Յերես-յերեսի	43
Մայրը և աղատությունը	46
Հարսնացուի նվերը	50
«Զկային դասաստանն ել չկա»	52

ԱՆԵՐԵՎՈՒԻԺԹ ՏՊԱՐԱՆԸ

«Հեյ, կտավ ծախող»	57
Ճույցը	59
Գուզրոն	61
Լենա	63
Համառուսաստանյան փուռը	64
«Մենք հեղափոխության զորաբանակն ենք»	67
Յանկապատեր, դոնապաներ և աֆիշ փակցնողներ	69
Շորեյկրեխերը	74
«Յես Փակցնող եմ»	76
Կազակներ	78
Կողքավ անցակ	80

ՍԱՀՄԱՆԻ ԱՅՆ ԿՈՂՄԸ

Նտապով	82
Հիսուն կոպեկ	84
«Թաղաքականը»	86
Գիշերային հետապնդումը	87
Սահմանի այն կողմը	89
«Եախ Փարխ, գուտ»	92
«Կայծը բոց կդառնա»	94
Կիրակն, կերը և գուան ողակը	96
Առաջնորդը	98

ՀՀ Ազգային գրադարան



NL0383642

3533

1 Р. 50 ЧАМЫЧ
ЦЕНА КОП.

С. ХМЕЛЬНИЦКИЙ
ПОЧТАЛЬОН РЕВОЛЮЦИИ

(На армянском языке)

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
«БОЛЬШЕВИК»

Ростов-Д., Ворошиловский пр., 27